ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ

1899 Թ.

Ա. ԳՐՔԻ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՄՕՐԷՒ ԻՇԽԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

Թարգ. Վահան Ծ. Վ. Բաստաւեան

(Սկիզբը՝ 1—110 երես տպուած է «Լումայ»-ի 1898 Թ. Ա. և Բ. գրքերում)։

— Նայեցէ՛ք ձեր չորս կողմը, շարունակեց Խամարէթը, — մեր արգաւանդ հովիտները անապատ են դարձել և ոչինչ չեն բուսցնում բացի փշից և տատասկից. նոցա ոտնակոխ են անում մեր մեծամիտ բռնակալների ձիերը։ Հռչակաւոր քաղաքները — աւերակների կոյտեր են, և գայլերը ու աղուէսները շինել են նոցա մէջ իւրեանց որջերը. իսկ մենք, արհամարհուած ստրուկներ, վայրենի դրութեան հասցրած, առանց կտոր հացի մեր զաւակները կերակրելու համար, առանց շորի մերկութիւնը ծածկելու համար, մենք՝ որ ծաղր և ծանակ ենք դարձած, բոլոր մարդկութեան արհամարհանքով աղուեսադրոշմած, մենք թագնւում ենք քարանձաւներում, ուր վայելելու ենք գոնէ գազանների ազատութիւնը, — կամ, որ աւելի վատն է, ճկուելով ասպետների սրի և նիզակի տակ, քշւում ենք իբրև նախիր, և թափառում մեր կորուսած փառքի աւերակների մէջ։ Ո՛հ, միթէ հին Ցունաստանի այս գեղեցիկ ճաշորդները այլ եւս ընդունակ չէ՞ն թւում՞ ձեզ լինել գերեզման իւր զաւակների համար, որք գերադասում են դիւցազնաբար մեռնել նորա համար, քան թէ վկայ լինել նոցա նախատինքին։

— Այո՛, գոչեց Խամարէթը, երբ շղթաները կաշկանդում էին մեր ձեռքերը, նոքա անշարժ էին. երբ մեր բանտապետները հսկում էին մեր ամէն մէկ շարժմունքի վերայ և գանակոծում էին մեզ ամենափոքր ընդդիմադրութեան փորձի համար, երբ մեր մերձաւորները դարձնում էին մեզանից իւրեանց երեսը, որ չթափեն անօգուտ արտասուքներ մեր թշուառ դրութեան պատճառով, այն ժամանակ մենք, ի հարկէ, ընկղմուած էինք յուսահատական անգործունէութեան մէջ, այն ժամանակ կեանքը պաշտողները խոնարհեցրին իւրեանց վզերը լծի տակ. իսկ նոքա, որոնք չէին կարող կրել կեանքի բեռը և շղթաների ծանրութիւնը, դարձրին իւրեանց վերայ իւրեանց սուրը, անկար լինելով թշնամիների դէմ։ Բայց այժմ, երբ մեր հարստահարիչները անհաշտ են և հակառակ միմեանց, և իւրեանց կռիւների պատճառով կՀեռացնեն մեզանից իւրեանց ուշադրութիւնը, երբ մենք կարող ենք զինաւորուիլ առանց կասկած յարուցանելու և առանց վախենալու, որ կիմանան մեր խորհուրդները, երբ հզօր դաշնակիցդ, որ դեռ եւս յոյս և հաւատ

ունի մեր բախտի աստղի մասին, մեկնում է մեզ իւր ձեռքը, եթէ մենք այժմ էլ կփախցնենք ձեռքից այսպիսի բարեյաջող դէպքը, եթէ չենք լսի Աստուծոյ ձայնին, որ կոչում է մեզ դէպի կեանք և ազատութիւն, մենք կլինինք անարժան այդ երկու ամենաբարձր բարիքներին, և մեր յանցանքը կը կոչուի ոչ թէ իբրեւ նախատելի երկչոտութիւն, այլ աւելի վատ, աւելի սարսափելի անունով. նա կկոչուի — դաւաճանութի՛ւն հայրենիքին։

Խամարէթը էլի երկար խօսում էր միևնոյն ոգեւորութեամբ, միևնոյն ազգասիրական բորբոքով. իւր ճառերով նա վստահութեան ոգի ներշնչեց ամենաթուլասիրտների մէջ և յաղթեց ամէն տեսակ տաքակուսանքներին։ Ամենքին ոգեւում էր մանաւանդ Ելլադայի իշխանի խոստացած օգնութիւնը։

Խամարէթից յետոյ սկսեց խօսել Պետրալիֆասը, որ մինչեւ այդ ժամանակ լսում էր և նայում էր լուռ։

— Ելլադայի իշխանը մեկնում է բարեկամութեան ձեռքը իւր հայրենակիցներին, որք կարօտ են նորա օգնութեան։ Եւ որչափ և մեծ լինէր ձեռնարկութիւնը, որպիսի դժուարութիւնների հետ կապուած լինէր դա, նա յետ չի կանգնի գործից, եթէ հաւատացած լինի, որ կգտնէ զինակիցներ։ Եղբա՛ր, մի՛ վշտանաք իմ վերայ, եթէ ասեմ, որ նայելով ձեր հայեացքներին, ձեր խօսքերին, ես տեսնում եմ, որ իմ շուրջս հաւաքուել են հերոսներ։ Բայց եթէ միայն դուք էք պատրաստ մտնել այդ վտանգաւոր պատերազմի մէջ, ձեր պատրաստականութիւնը կլինէր, ի հարկէ, դիւցազնական, սակայն նորա հետեւանքը կլինէր, հաւատացէք իմ փորձառութեան, մա՛հ, - փառաւոր, բայց անօգուտ։ Ելլադայի իշխանը պարտաւոր է պահպանել ոչ միայն իւր կեանքը, այլ և իւր հպատակների բարօրութիւնը։ Վտանգի ենթարկել այդ բոլորը — պարտազանցութիւն կլինէր նորա կողմից։ Հարկաւոր է, որ նա յուսար յաջողութեան որեւէցէ հնարաւորութեան վերայ. հարկաւոր է, որ նա հաւատացած լինէր թէ՝ գնում է պաշտպանել ոչ թէ մի փոքրաթիւ խումբ հերոսների, որք նուիրել են իրանց կեանքը մահուն, որոնք կամենում են նահատակ լինել հայրենիքի համար, — այլ ամ-

բողջ աղգին, որ ցանկանում է աղատութիւն և յոյս ունի յաղթութեան։

—Փառք Հօր, գոչեց Վուտսարոսը,—եթէ դուք տեսնում էք այստեղ քառասուն մարդ, ասացէք Եղլադայի իշխանին, որ տեսել էք քառասուն քաղաք։ Ես նուիրում եմ մեր գործին ոչ թէ միայն իմ սուրը, այլ և Վուտսարոսի անունը։ Լսելով անունս—փառք Հօր, լսելով այս անունը, կշարժուի Պորտիայի ամբողջ հովիտը։

Վուտսարոսից յետոյ խօսեցին ուրիշները, Արկադիա, Մեսսինիա, Լակոնիա, և այլն քաղաքների կողմից, որոց վերայ նոցանից ամեն մէկը ունէր որեւիցէ աղդեցութիւն։ Ընճռեցին տալ Պետրալիֆասին ապստամբողների անուանական ցուցակը բացատրութիւններով թէ՝ ո՞րը որքան ոյժ է խոստացել պատրաստի ունենալ, իսկ նա կյանձնի Եղլադայի իշխանին։

—Ես ժամանակ կունենամ կատարել ձեր այդ յանձնարարութիւնը, ասաց Պետրալիֆասը, որովհետև ձեռնարկութիւնը չէ կարելի սկսել մինչեւ որ չգայ Շամպլիտը և չտեսնենք երկու հակառակորդի փոխադարձ յարաբերութիւնները և նոցա առաջին գործողութիւնները։

—Բայց, պատասխանեց Վուտսարոսը, մենք պէտք է տեղեկութիւն ստանանք իւր ժամանակին։ Մեզ հարկաւոր է խօսել միասին և պայմանաւորուիլ առաջ քան թէ կըսկսենք գործը։ Ո՞ւր և ի՞նչպէս կարող ենք ժողովուիլ։

—Այստեղ, պատասխանեց Խամարէթը,—Գայլի քարանձաւի մէջ։ Երբ Օլէն սարի գլխին վերստին կբացավառուին խարոյկները երեք գիշեր շարունակ,—այդ կլինի նշան, որ մենք պէտք է գնանք Գայլի քարանձաւը և սկսենք գործը։

—Լա՛ւ, գոչեց բոլոր ժողովը։

—Ո՛հ, իմ հաւատարիմ սուր, դու դարձեալ դուրս կգաս պատեանից, գոչեց մէկը։

—Փառք Հօր, ասաց Վուտսարոսը։

Ապստամբողները ելան տեղից և ամեն մէկը առնելով ձեռքին վառուած խարոյկից մի մի խանձող, դուրս գնացին քարանձաւից։ Միասին անցան գետակի միւս ափը ու ցրուեցան լեռնային զանազան ճանապարհներով։ Նոցա վառուող խանձողները հեռուից նմանում էին շարժուն աստղերին։

Պետրալիֆասը և Խամարէթը վերադարձան գնացած ճանապարհով. գտան իւրեանց ծառային այնտեղ, որտեղ թողել էին, և հասնելով մինչև Անդրավիդի եկեղեցին իջան ձիերից։ Յետոյ ոտքով գնացին Պետրալիֆասի տունը, և ծերունին յուշիկ առանց աղմուկի մտաւ իւր բնակարանը դեռ արևը ծագելուց առաջ։

14.

ԽԱԲԷՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ։

Եթէ Վենետկի Առիւծը և Կորֆուի Նաւը փախչում էին Ռոբէրտից, այդ չէ ստիպում մեզ ամենևին նոյնպէս թողնել, մոռանալ Նորան։

Այդ կրկնակի ձախորդութիւնից յետոյ Ռոբէրտի բարկութիւնը այն պատճառով այնպէս սաստիկ էր, որ նա չէր իմանում թէ ո՞ւմ վերայ թափէր այն։ Դոժը ամենաջերմ համակրութեամբ տուեց նաւապետին ամենաձեռնտու պատուէրներ Ռոբէրտի համար. միթէ Դոժը մեղաւո՞ր էր, որ նաւապետը հիւանդացաւ։ Իսկ Նորա օգնականը նոյնպէս չէր կարող չկատարել իւր մեծաւորի հրահանգները—չէ՞ որ Նորան ուրիշ հրահանգ չէր տուած։ Կորֆուի փոխարքան, իւր կողմից, նմանապէս շատ հիւրասէր էր և պատրաստ ամեն կերպ օգնել Ռոբէրտին.—նա մինչև անգամ նաւ ուղարկեց փախած Առիւծին հասնելու համար։ Փոխարքան ինչո՞վ էր մեղաւոր, որ Ռոբէրտը վարձել էր միևնոյն նաւը և առաջուց չէր զգուշացրել Նորան։

Ռոբէրտի յուսահատութիւնը ամենից առաջ արտայայտուեցաւ աղաղակներով և նզովքներով։ Բայց երբ նա տեսաւ, որ այդ բոլոր գոռում-գոչումները չեն տալի նաւեր և ամենևին չեն մօտեցնում Նորան Պելոպոնէսին, նա ընկաւ այնպիսի թուլութեան մէջ, որ այդ ժամանակ կարող էր դուրս գնալ Կորֆուից մի ամբողջ նաւատորմիղ և նա չէր իմացնայ այդ։

Նոննի բնաւորութիւնը աւելի համբերող էր։ Չէ կարելի, ի հարկէ, ասել, որ այդ բոլոր ձախորդութիւնները

չվշտացնէին նորան. նա գուցէ աւելի հոգեմաշ էր լինում քան թէ Ռոբէրը։ Բայց Նոնի գլխաւոր հոգն էր՝ հասնել նպատակին, և որպիսի կրքերը և վրդովէին նորան՝ նա աչք չէր հեռացնում իւր նպատակից։

Այսպէս, մինչդեռ ասպետը պառկած էր անկողնի վերայ, հառաչանքներ արձակելով, Նոնը վազվզում էր ծովեզերքի մօտ, նայում էր նաւահանգստին, աչքով չափում էր ամենահեռաւոր հորիզոնը, զննում էր նաւակների լաստերի ամրութիւնը։ Բայց չկար և ոչ մի նաւակ կամ լաստ, որ կարողանար տեղաւորել իւր մէջ իշխանի ուղեկիցներից գոնէ կէսը։

Օրերն անցնում էին արագութեամբ և ոչ Ռոբէրի յուսահատ խոնարհութիւնը ճակատագրին, ոչ Նոնի եռանդուն գործունէութիւնը, ամենափոքր փոփոխութիւն անգամ չգործեցին մեր ուղեկիցների դրութեան մէջ։ Նոցա համար չկար ոչ մի նաւ։ Երրորդ օրը երեկոյեան ձանձրացած Նոնը նոյնպէս ընկաւ իւր իշխանաւորի մահճակալի մօտ. նորան էլ պատեց վհատութիւն և յուսահատութիւն։ Մի ամբողջ ժամ Նոնը մռնչմունքներով էր պատասխանում խեղճ ասպետի հառաչանքներին. յետոյ յանկարծ վեր թռաւ նա։

—Էհ՝ որ պէտք է վերջապէս վախճան դնել այս բոլորին, ասաց նա.—ձերդ բարձրութիւն, մեզ անհրաժեշտ հարկաւոր է գնալ։

—Անհրաժեշտ հարկաւոր է գնա՞լ, ասում ես դու, գոչեց Ռոբէրը։ Դէ, ուրեմն գնանք։ Երդւում եմ Ս. Դիոնէսիսով, իմ սիրելի Նոնն, որ դու բոլորովին խելացնորուել ես, խե՛ղճ։ Ասա՛ ի՞նչպէս գնանք։

—Ի՞նչպէս գնանք։ Նստենք ձկնորսների նաւակներից մէկի մէջ և թիավարենք մինչև հանդէպի ափը, իսկ յետոյ ափը բերելով կհասնենք Պելոպոնէսին ինչպէս միայն հնարք կլինի, այնուամենայնիւ աւելի շուտ, քան թէ այստեղ նըստած՝ աստղերը համարելով և փոխարքայի անպիտան գինին խմելով։

—Բայց քանի՞ մարդ կարող է տեղաւորուիլ քո ձկնորսական նաւակի մէջ, իմ սիրելիս։

—Ձերդ բարձրութեան համար տեղ կլինի յամենայն

դէպս և այդ ամենագլխաւորն է. իսկ յետոյ... գուցէ տեղ կգտնուի և ինձ համար։

—Հապա միւսնե՞րը։

—Նոքա կսպասեն, մինչև որ նոցա դէպք կպատահի գնալու։ Ի հարկէ, շատ լաւ կլիներ, որ ձերդ բարձրութիւնը մտնէր Պելոպոնէս բոլոր դրանիկներովդ, զօրութեան և փառքի բոլոր փայլմունքով, բայց շատ վատ կլինի եթէ ոչ դուք և ոչ նոքա չէք հասնի Մօրէ։ Ուրեմն, թող ձեր բարձրութիւնը մտնէ իւր երկիրը միայնակ, իսկ ձեր դրանիկները յետոյ։ Ես առաջարկում եմ ձեզ այս միջին ելքը։

—Եւ ես ընդունում եմ քո առաջարկութիւնը, ասաց Ռօբէրը.—վաղը առաւօտ նստենք ձկնորսական նաւակի մէջ և գնանք։

Միւս օրը արշալոյսը բացուելուն պէս, Ռօբէրը և Նոնը միասին գնացին նաւահանգիստը. բայց նաւակներից աւելի մեծը հրաժարուեցաւ տանել նոցա, ասելով թէ արդէն վարձուած է ընչակացներ (ձուկ) որսալու։

Ի զուր մեր ճանապարհորդները առաջարկում էին կրկնապատիկ, եռապատիկ, տասնապատիկ վարձ, նաւակի տէրը շատ հաւատարիմ էր իւր խօսքին և յամառութեամբ պատասխանում էր թէ՝ մի անգամ ուրիշին վարձու տալով իւր նաւակը, նա չի համաձայնի յետ կանգնել իւր խօսքից մինչև անգամ աշխարհիս բոլոր գանձի համար։

Այդպիսի հաւատարմութիւնը այնքան ազնիւ էր և՝ նաւատիրոջ հաստատակամութիւնը այնքան անշարժ, որ ճանապարհորդները թողին նորան և մօտեցան ուրիշ նաւակի։

Նոցա անբախտութիւնից և այդ նաւը արդէն վարձուած էր և տէրը յայտնեց, որ չէ կարող հեռանալ Կօրֆուից եթէ առաջարկէին նորան մինչև անգամ աշխարհիս բոլոր ոսկին։

Երրորդ նաւը երբէք չէր հեռանում ափից կէս մղոնից աւելի և տէրը ամենևին չհամաձայնուեցաւ թողնել նորան աւելի հեռու։

Չորրորդը յայտնեց, որ առագաստներ չունի և չկայ հնարք գտնել նոցա։

Դիմեցին մի առ մի բոլոր նաւակներին, բայց որը թիեր չունէր և չէր կարելի գտնել ամբողջ կղզում, որը

չէր կարող ճանապարհորդել ուրիշ պատճառներով։ Այնպէս որ՝ Ռոբէրը և Նոննը չգտան ոչ մի նաւակ, որ կարողանային վարձել։

Այս վերջին և արդէն... բոլորովին անսպասելի ձախորդութիւնը լցրեց մեր ճանապարհորդների յուսահատութեան չափը։ Նորա կարող էին միանգամայն խելագարուիլ, եթէ փոխարքան չաշխատէր մխիթարել նոցա ամեն միջոցներով — սիրալիր և անկեղծ խօսքերով, լաւ գինիով և անընդհատ խնջոյքներով։

Նոյն իսկ այդ վերջին յուսահատութեան օրը փոխարքան այցելեց իշխանին և գտաւ նորան լաց լինելիս, Նոննը ժայթքում էր ամենակատաղի նզովքներ։ Փոխարքան յորդորեց նոցա չվշտանալ, ասում էր թէ՝ նաւերը Դալմացիայի կողմերից կվերադառնան Մարտի սկզբում, կամ ամենաուշը վերջում, և հաւատացնում էր թէ՝ հրամայել է կղզու ամենաբարձր տեղերից դիտել և յայտնել նորան, եթէ միայն հեռուից կտեսնեն որ և իցէ նաւ։

Այնու ամենայնիւ, միւս օրը մեր բարեկամները դարձեալ գնացին նաւակների մօտ, բայց դարձեալ առանց օգտի։ Այդ ժամանակ ափին մօտեցաւ առաջին նաւակի տէրը։ Նոննը դարձեալ սկսեց գրաւել նորան նորոգելով և հետզհետէ մեծացնելով իւր առաջարկութիւնները։ Բայց այդ մարդու հաւատարմութիւնը ադամանդի կարծրութիւն ունէր — ոսկին ոչինչ ազդեցութիւն չունէր նորա վերայ։ Հաստատութեամբ դիմանալով օտարականների գայթակղեցուցիչ առաջարկութիւններին, ձկնորսը կապեց իւր նաւակը, հանեց նորանից ուրկանը, դրեց ուսի վերայ և գնաց քաղաք։ Ձկնորսների թաղի ծուռումուռ փողոցներով անցնելով՝ փոխանակ իւր խրճիթը գնալու, մեր ձկնորսը դիմեց դէպի քաղաքի մեծամեծ փողոցները և գնաց փոխարքայի պալատը։ Այնտեղ նա յայտնեց թէ կամենում է տեսնել փոխարքային։

— Ձերդ գերազանցութիւն, ասաց ձկնորսը փոխարքային, նաւ կայ։ Այն կողմից, ուր ես այսօր ձուկ էի որսում, տեսայ մի նաւ, որ գալիս էր Կատտարոի կողմից, և եկել եմ յայտնել այդ ձեզ ըստ ձեր հրամանին։

— Նա՛ւ, ասաց փոխարքան. ի՞նչ մեծութեան, Շամպլիտը իւր բոլոր ուղեկիցներով կտեղաւորո՞ւին նորա մէջ։

—Այժմ նա երևում է միայն ուրուրի (թռչուն) չափով, նա դեռ ևս հեռու է շատ հեռու, պատասխանեց ձկնորսը։ Միայն, թո՛ղ պատժէ ինձ սուրբ Սպիրիդոնը, եթէ դա ծերունի Բարբոնը չէ Ցարից։ Ես նորան ճանաչեցի գնացքով, իսկ նա կարող է տեղաւորել իր մէջ Շամպլիտի ուղեկիցներից երեք անգամ աւելի շատ մարդիկ։

—Բայց, ի՞նչ ես կարծում, շուտո՞վ կհասնի այստեղ։

—Այդ միայն քամին գիտէ։ Եթէ յաջողակ քամի կլինի, և սուրբ Սպիրիդոնը կօգնէ, նաւը խարիսխ կձրգէ նաւահանգստի մէջ այսօր գուցէ մինչև արևի մայր մրտնելը։ Իսկ եթէ քամին կլինի այնպէս, ինչպէս այժմ, նաւը կհասնի մօտ կէս գիշերին։ Բայց նա մենակ չէ. այնտեղ հեռու, ծովածոցի մէջ ես տեսայ էլի երկու սպիտակ կէտ, և երդւում եմ սուրբ Սպիրիդոնով, նոքա նոյնպէս երկու նաւ են։

—Ո՛հ, ո՛հ, գոչեց փոխարքան,—բանը ծանրանում է, գի՞տես Ստերս պապի։ Աղօթիր Աստուծուն և տար Շամպլիտին Մօրէ։ Կարո՞ղ ես։

—Հը՛մ. 'ի հարկէ։ Երդւում եմ սուրբ Սպիրիդոնով, թո՛ղ նա ողորմած լինի ինձ. եթէ ձերդ գերազանցութիւնը ինձ չարգելէիք տանել նոցա երեք օր առաջ, ես այժմ կէս ճանապարհը անցած կլինէի։

—Դէ՛, այժմ, Ստերս պապի, ես քեզ չեմ արգելում. ի հարկէ դու կտանես միայն Շամպլիտին, և էլի մէկին կամ երկուսին նորա ուղեկիցներից, բայց առանց ձիերի և զինուորների։

—Թո՛ղ պահէ ինձ սուրբ Սպիրիդոնը։ Ընդունե՞մ ձիերը նաւակի մէջ, խեղդուելու ցանկութի՞ւն ունիմ, ի՞նչ է։

—Դէ՞, արա՛ ինչպէս գիտես, և ճանապարհ ընկիր այսօր երեկոյեան։ Լսի՛ր...

Փոխարքան մի քանի խօսք ասաց ծերունու ականջին։

Հինգ րոպէից յետոյ ձկնորսը արդէն Ռօքէրի մօտն էր։ Նօնը իսկոյն ճանաչեց նորան։ Նորա սիրտը վարկեց ուրախ նախազգացմունքից։

—Ի՞նչ է, ծերունի, ասաց Նօնը, դու դեռ ևս չե՞ս կամենում ստանալ հարիւր հատ վենետկեան ոսկի։ Բայց եթէ նոքա դառնան հարիւր յիսո՞ւն։ Ա՛խ... երևի դուք շատ հարուստ էք այստեղ Կորֆուում։

—Երդւում եմ սուրբ Սպիրիդոնով, որ ես աղքատ մարդ եմ, և 150 ոսկին մեզ համար գիւտ է։ Բայց...

—Ա՛խ, դու դարձեալ քո ձկներով, գոչեց Ռոբէրը, ուսերը բարձրացնելով։—Արդեօք իսկապէս ի՞նչ արժեն քո ընչպկացները (ձուկ)։ Հաբիւրութիւն՞ ոսկի, ա՛ռ, ես քեզ տալիս եմ։

Ձկնորսը վրդովմունքով նայեց սենեակի չորս կողմը։

—Արդեօք ոչ ոք չի՞ լսի մեզ այստեղ, հարցրեց նա։

—Ոչ ոք։ Ի՞նչ ես վախենում, ասա՛. ի՞նչ ես կամենում։

—Հրաժարուիլ բախտաւորութիւնից, երբ նա ինքը զորով կապւում է գլխիդ... Երդւում եմ սուրբ Սպիրիդոնով, մեծ է գայթակղութիւնը... է՛հ, ինչ դառնայ դառնայ, ես համաձայնւում եմ տանել ձեզ Մօրէ։

—Համաձա՛յն ես, գոչեցին միաձայն Ռոբէրը և Նոննը, և քիչ էր մնում ընկնէին Ստերո պապի գիրկը։

—Ի՛ սէր Աստուծոյ, այդպէս բարձր մի՛ աղաղակէք, թէ չէ գուցէ փոխարքան կիմանայ և ես երբէք էլ չեմ տեսնի նորին պայծառափայլութեան երեսը։

—Ի՛նչպէս փոխարքա՛ն, ասաց Նոննը... բայց ինչո՞ւ ես թագցնում այդ բանը փոխարքայից։

—Եթէ դուք չէք կամենում, որ վաղը ինձ կախ տան իմ նաւակի կայմից, աղաչում եմ ձեզ սուրբ Սպիրիդոնի անունով, մի՛ մատնէք ինձ։ Ես մինչև այժմ հրաժարւում էի տանել ձեզ իմ նաւով, և միւս բոլոր նաւատէրերն էլ հրաժարւում էին նոյնպէս, այն պատճառով, որ մենք ամենքս ստացանք դորա մասին ամենախիստ հրաման փոխարքայից։

—Փոխարքա՞յից, ասաց Ռոբէրը։ Բայց ինչո՞ւ արգելել էր ձեզ փոխարքան տանել ինձ։

—Մենք ի՞նչ գիտենք։ Նա հրամայել էր յայտնել մեզ ամենքիս, որ եթէ մեզանից մէկը, թէկուզ տային Մօրէի բոլոր հարստութիւնը, կհամաձայնուի տանել իւր նաւով ձերդ բարձրութիւնը, նա կպատժուի խիստ կերպով։ Ի հարկէ, մենք ամենքս սաստիկ վախեցանք. մեզ լաւ յայտնի է, որ երբ նորին գերազանցութիւնը սպառնում է, ի զուր չէ անցնում այդ։ Իսկ եթէ դուք ինձ կխոստանաք գաղտնիք պահել գործը, երդւում եմ սուրբ Սպիրիդոնով, ես ճանա-

պարհ ընկնեմ հէնց որ կմթնի, իսկ յետոյ թո՛ղ լինի ինչ որ կլինի։

—Դուք ի՞նչպէս էք մտածում այս բանի մասին, ձերդ բարձրութիւն, հարցրեց Նօնը։

—Ինչպէս եմ մտածո՛ւմ։ Եւ դու դեռ ևս հա՞րցնում ես։ Հէնց որ կմթնի։ Որոշուա՛ծ է, պատասխանեց Ռօբէրը։

—Եւ ափիցը հեռանալուն պէս, շարունակեց Նօնը, ես քեզ կվճարեմ 180 ոսկին։

—Իսկ ես, ոտքս Մօրէի հողի վերայ դնելուն պէս, աւելացրեց Ռօբէրը, կպարգևեմ քեզ էլի 50 ոսկի։

- Թո՛ղ պահպանէ ձեզ սուրբ Սպիրիդոնը, ասաց ձկնորսը։ Դէ՛, ուրեմն մինչև գիշերս։ Եկէք դուք երկուսդ, և էլի, եթէ ուզում էք, մի ծառայ վերցրէք։ Նաւակիս մէջ աւելի ոչ օք չէ կարող տեղաւորուիլ։

Ձկնորսը գնաց։

Մի բոպէ անգամ չկորցնելով, ճանապարհորդները ըսկսեցին տեսնել գնալու պատրաստութիւնները։ Մի հաւասարիմ ծառայ, որին նորա կամենում էին տանել իւրեանց հետ, հրաման ստացաւ ժողովել շուտով հարկաւոր բաները բայց ամենածածուկ զգուշութեամբ, և տանել նաւակը մթնելուն պէս։

Այդ միջոցին եկան յայտնելու փոխարքայի գալուստը։

—Ա՛խ, այդ շատ յարմար պատահեցաւ, ասաց Ռօբէրը, ես երեսին կզարնեմ նորան, որ նա անպիտան է, դաւաճան, արժանի ամեն արհամարհանքի։ Գոնէ բաւականութիւն կունենամ թափել նորա վերայ այն բոլոր զայրոյթը, որ հաւաքուել է սրտիս մէջ։

—Երևի թէ ձերդ բարձրութիւնը ցանկանում է մնալ Կորֆուում էլի մէկ կամ երկու ամիս։ Փոխարքան անշուշտ դաւաճանում է մեզ և խմացնում է անպիտան գինին ոչ իւր սեփական ցանկութեամբ։ Այդտեղ կան որպիսի ևիցէ գաղտնի նպատակներ, որպիսի և իցէ դժոխային դաւադրութիւն։ Աւելի շատ խոհեմութիւն կլինի խոյս տալ մեզ մեր դէմ լարած թակարդից, այնպէս որ նա չկարծէր անգամ այդ բանը։ Աղաչում եմ, ձերդ բարձրութիւն, զսպեցէք ձեր բարկութիւնը։

Փոխարքան մտաւ ներս։ Իմացուեցաւ, որ նա եկել էր

պաշտօնական հրաւէրքի կանչել իշխանին իւր մօտ գիշերը ընթրելու, ուր մտադիր էր ներկայացնել նորան ամբողջ նահանգի նշանաւոր անձինքները։

Ռօբէրը նմանում էր կատաղի կատուի, որ պատրաստ է կոխել իւր ճանկերը թշնամու աչքին։ Բայց նոննը շտապեց պատասխանել և ամենաքաղաքավարի կերպով շնորհակալութիւն յայտնել, աւելացնելով թէ՝ նոքա երկուսն էլ ներկայ կլինեն ընթրիքին։ Ռօբէրը, զգալով, որ իւր լռութիւնը կարող է ծուռ մեկնութեան ենթարկուիլ, ասաց թէ ամենամեծ ուրախութեամբ կմասնակցի խնջոյքին։ Եւ յանկարծ, կարծես թէ նորա մտքերը պատող ամպերը ցրուեցան, նա մօտեցաւ փոխարքային և ասաց.

—Դուք այնքա՛ն հիւրասիրութիւն ցուցեք մեզ։ Բայց ես պէտք է խոստովանուիմ, որ կայ մի ուրախութիւն, որը ես գերադաս եմ համարում բոլոր միւսներից, և աղաչում եմ ձեզ տալ ինձ այդ ուրախութիւնը քանի որ ես ստիպուած եմ դեռ ևս մնալ այս քաղաքում։

—Ո՞րն է, հարցրեց փոխարքան զարմացմամբ։

—Որսորդութիւն, պատասխանեց Ռօբէրը։ Ես հաւատացած եմ, որ ձեր սարերում կան անթիւ նապաստակներ, գուցէ և այծեամներ կամ եղջերուներ։

—Ի հարկէ, ասաց փոխարքան, և ես բոլորովին պատրաստ եմ կատարել ձերդ բարձրութեան այդ ցանկութիւնը։ Մեր սարերում կան շատ եղջերուներ մեծութեամբ... ինչպէս գոմէշ։

—Ուրեմն, դուք կարծում էք, որ մենք վաղը կկարողանա՞նք գնալ որսի։ Դուք այնքան բարի կլինիք, որ մեզ կտա՞ք առաջնորդողներ։

—Վա՞ղը, ասաց փոխարքան տարօրինակ ժպիտով։ Ո՛հ, ամենայն ուրախութեամբ։ Երբ միայն և ցանկալի կլինի ձերդ բարձրութեան։ Ես ինքս ուրախութիւն և պարտաւորութիւն կհամարեմ ուղեկցել ձեզ։ Բայց մենք դորա մասին կխօսենք ընթրիքի ժամանակ։

—Ուրեմն ցտեսութիւն մինչեւ երեկոյ, ասաց Ռոբէրը, և գնաց փոխարքան։

Երեկոյեան, այն իսկ ժամանակին, որ նշանակուած էր շքեղ ընթրիքի համար, ուր պիտի ներկայանային Ռօբէրին

կղզու նշանաւոր անձինք, Պելոպոնէսի ապագայ իշխանի ծառան մտաւ պալատը և պատուիրեց յայտնել փոխարքային որ գործ ունի։ Մտնելով փոխարքայի սենեակը, նա մնաց արձան կտրած զարմանքից։ Փոխանակ նստած լինելու փառաւոր ընթրիքին, շրջապատած Կորֆուի պատուաւոր բնակիչներով, սպասելով Ֆրանսիական իշխանին, ծառան տեսաւ փոխարքային նստած մենակ, գիշերօթայ շորով, փոքրիկ բոլորակ սեղանի առաջ, լուսաւորուած մարող լապտերի աղօտ լուսով, ուտելով համեստ ճաշի մնացորդները։

Վերջապէս ծառան ասաց.

— Իմ տէրը խնդրում է ձերդ գերազանցութիւնից չսպասել նորան ընթրիքին. նա յանկարծ զգաց սաստիկ գլխացաւ և ստիպուած է հանգստանալ այս գիշեր որ պատրաստ լինի վաղուան որսորդութեան համար։

— Եւ շատ լաւ է անում, որ հանգստանում է, ասաց փոխարքան։ Ասա, որ ես ցանկանում եմ նորան բարի գիշեր։ Իմ գլուխս էլ նոյնպէս սաստիկ ցաւում է, և ես այս րոպէիս կամենում էի մարդ ուղարկել իշխանին ներողութիւն խնդրելու, որ չեմ կարող այսօր ընդունել նորան։

Ծառան, աչքերը ապշած, բերանը բաց, դուրս գնաց, չասելով ոչ մի խօսք։

Մի քանի րոպէից յետոյ Ռօբէրը, Նոնոը և ծառան, ծերունի Ստերոի առաջնորդութեամբ, նաւաստիների շորեռով փոխակերպուած, ծրարները ձեռքին, գնում էին մութ և դատարկ փողոցներով դէպի նաւահանգիստը։ Բայց երևակայեցէք մեր ճանապարհորդների տարսափը, երբ նոքա տեսան նաւահանգստի մօտ փոխարքային, որ մօտեցաւ ձկնորսին։

— Ստերո պապի, այդ դո՞ւ ես։

— Ես եմ, ձերդ գերազանցութիւն, ձեր ծառան։

— Ոնի՞ս լաւ, թարմ ընչակացներ (ձուկ)։

— Թարմը այժմ չկայ, ձերդ գերազանցութիւն, բայց երդւում եմ սուրբ Սպիրիդոնով, վաղը կուտենամ շատ լաւերը։

— Ա՛յ ինչ է, ծերունի, ասաց փոխարքան, վաղը ես պատիւ կունենամ ուղեկցել նորին բարձրութեան, Պելոպոնէսի իշխանին, որսորդութեան։ Բեր ինձ ամենալաւ ընչակացներ, որպէսի միայն կան ծովում. նոքա ինձ հարկաւոր

են մինչև առաւօտեան արշալոյսը։ Դէ՛ շո՛ւտ, ա՛ռ թիերդ։

—Իսկոյն, ձերդ գերազանցութիւն. է՛յ, դուք, շուտ արէք, մտէք նաւակը, ես գնում եմ։

Ասածը և կատարածը մէկ էր. ծերունին թռաւ նաւակի մէջ երեք ճանապարհորդներից յետոյ և հանեց խարիսխը։

—Մաղթում եմ լաւ որս, ծերունի՛, գոչեց փոխարքան։ Վաղը սպասում եմ ընջակացներին։

—Սուրբ Սպիրիդոնը ողորմած է, պատասխանեց ձկնորսը վարելով թին և հեռանալով ափից։

Այսպէս ահա նաւակը մտնում էր ծովը տանելով Ռոբերին և Նոննին. որոնք շփում էին ձեռքերը ծիծաղելով։ Փոխարքան նոյնպէս հեռանում էր ծիծաղելով և ձեռքերը շփելով։

Այդ եղաւ փետրուարի 26-ին։

Միւս օրը, առաւօտեան, փոխարքային նամակ մատուցին Ռոբերից։ Ասպետը ներողութիւն էր խնդրում, որ չէր կարող մասնակցել որսորդութեան, որովհետև մի բոլորովին անակնկալ դէպք ներկայացաւ Պելոպոնէս գնալու համար։ Բացի սորանից՝ Ռոբերը խնդրում էր փոխարքայից ճանապարհ դնել նորա ձիերն և դրանիկներին երբ միայն հնարաւոր կլինէր։

15.

ԳԱԼՊԻՍՏ։

Ճանապարհորդները Կորֆուից վեցօրեայ յաջողակ ճանապարհից յետոյ մտեցան Սան Զաքարիայի ափին մարտի 4-ին։ Ռոբերը առաջինը դուրս թռաւ նաւակից և ոտը կոխելով անմարդաբնակ ափի վերայ՝ մէկ ձեռքով կոթնեցաւ դերասանական ձևով ժայռերի վերայ, իսկ միւսը մեկնեց օդի մէջ, իբր թէ մուտք էր գործում իւր կալուածների տիրապետութեան մէջ։

Նոննը դուրս եկաւ ափը Ռոբերից յետոյ։ Նա մեկնեց Շամպլիտին աջ ձեռքը և հանդիսաւոր կերպով ասաց.

—Ողջունում ե՛մ Մօրէի իշխանին։

Ծերունի Սպիրօն նոյնպէս մեկնեց ձեռքը և ստանալով խոստացած 50 ոսկի պարգևը իսկոյն փոխեց առագաստները և դարձրեց ղեկը դէպի Կորֆու։

Բայց թէ Ռօբէրը ինքն իրան ճանաչեց իշխան և տէր Պելոպոնէսի—այդ դեռ բաւական չէր. պէտք էր, որ նորան ընդունէին և հպատակները, իսկ Սան Զաքարիայի ամայի ափի վերայ չկային հպատակներ։ Ուստի հարկաւոր էր գնալ երկրի մարդաբնակ տեղերը։

—Դէ՛, այժմ ի՞նչ պէտք է անել, հարցրեց Ռօբէրը, երբ երևակայական հզօրութեան առաջին ոգևորութիւնը անցաւ։

—Այժմ, պատասխանեց Նօնը, այստեղից մինչև Անդրավիդ քաղաքը երեք ժամու ճանապարհ է ոտքով. դա մի գիշերանք կլինի ձերդ բարձրութեան համար։

—Ի՛նչպէս։ Դու կամենո՞ւմ ես, որ ես, ինչպէս մի աղքատ, ոտով մտնեմ Անդրավիդ, որ իմ կալուածների գլխաւոր քաղաքներից մէկն է։ Միայն այդ է պակաս, որ մենք ճանապարհին հանդիպենք և Աննային։ Ո՛չ։ Գնանք Սան-Զաքարիա, որովհետև այստեղից շատ մօտիկ պէտք է լինի. իսկ այնտեղ կհրամայեմ քաղաքապետին ձիեր և ուղեկիցներ տալ մեզ Անդրավիդ տանելու համար։

—Սան-Զաքարիա գնալ, պատասխանեց Նօնը, մօտենալով Ռօբէրի հետ միասին ծղօտով ծածկած երկու խրճիթին և եկեղեցուն, որ քանդուում էր հնութիւնից,—դժուար չէ, որովհետև մենք արդէն հէնց այժմ էլ այնտեղ ենք։ Բայց ո՞ւր է Սան-Զաքարիան։

—Ահա՛ այս իսկ եկեղեցին է. իսկ այդ խրճիթները—պետական շինութիւններն են, գրասենեակ մաքսապետի և բնակարան նաւահանգստի վերակացուի։ Իսկ այն անշնորհքը, որ պառկած է արևի առաջ և խոմբում է—նա և՛ ժողովուրդ է, և՛ քաղաքապետ։

Այդ առաջին քայլը նոր կալուածքներում շատ փառաւոր չթուեցաւ Ռօբէրին։ Բայց պէտք էր խոնարհուիլ հանգամանքների առջև և քաղել նոցանից հնարաւոր օգուտը։ Ռօբէրը մօտեցաւ քնածին։

—Լսի՛ր, սիրելիս, ասաց նա, հրելով նորան ոտով,—

կարո՞ղ ես դու երեք ձի գտնել մեզ համար մինչև Անդրավիդ։

—Հը՞. ի՞նչ է, ի՞նչ էք ուզում, կոպիտ ձայնով հարցրեց գիւղացին, վեր թռչելով և աչքերը շփելով։

—Մեզ հարկաւոր է երեք ձի Անդրավիդ գնալու համար։

—Դուք ո՞վ էք, ի՞նչպէս եկաք դուք այստեղ, բարկութեամբ հարցրեց մաքսատան կոպիտ վերակացուն։

—Մենք օտարական ենք, պատասխանեց Ռոբէրը. եկել ենք Կորֆուից, ահա այն նաւակով, որ գնում է, տեսնո՞ւմ ես։

—Ի՞նչպէս համարձակուել են հանել ձեզ այստեղ ափը առանց իմ հրամանի։ Ո՞ւր են ձեր անցաթղթերը. ո՞ւր է նաւապետի վկայականը, գոռում էր մաքսատան պահապանը, ձեռքերը թափ տալով։

—Թո՛ղ մեզ հանգիստ քո թղթերով, ապա թէ ոչ կարող ես յետոյ զղջալ։ Լաւ է ասա՛, կարո՞ղ ես գտնել մեզ համար երեք ձի մինչև Անդրավիդ, ասաց Ռոբէրը, արդէն զայրացած մաքսաւորի յանդգնութեամբ։

—Ա՛, ձեզ հանել են ափը առանց իմ հրամանի, շարունակում էր պահապանը անպատուած պաշտօնեայի ձայնով։ Դուք գո՛ղ էք։ Դուք չունիք թուղթ։ Դուք մաքսանենգ էք։

—Անմի՛տ։ Գիտե՞ս դու թէ ո՞վ եմ ես։ Ես Ռոբէր դը-Շամպլիտն եմ՝, իշխա՛ն Պելոպոնէսի։ Հրամայում եմ քեզ իսկոյն ձիեր բերել մեզ։

—Դուք ամենքդ բանտ կերթաք. այնտեղ կպարզուի թէ ովքեր էք դուք—խելագարներ թէ խաբեբաներ։

Նօնը բռնեց Ռոբէրի ձեռքը, որ բարձրացրեց յանդուգնին պատժելու համար։

—Ձերդ բարձրութիւն, ասաց նա, ներեցէք այդ յիմարին. դորան նստեցրել են այստեղ սոյն անապատ ափին պահապան. աշխարհի անցքերից դա տեղեկութիւն չունի, չէ հասկանում թէ՝ ի՞նչ ենք պահանջում դորանից։

Յետոյ դառնալով դէպի պահապանը, Նօնը շարունակեց.

—Լսիր սիրելիս. մենք գող չենք և ոչ մաքսանենգ։ Ես շատ լաւ տեսնում եմ, որ դու ձի չունիս մեզ համար. բայց ահա այնտեղ, ճահիճների մէջ, ես տեսնում եմ, մի ջորի է թափառում։ Տ՛ւր ջորիդ մեր ծառային, նա կեր-

թայ նորանով Անդրավիդ և կբերի ձիեր. իսկ մենք մինչև նորա վերադարձը կմնանք այստեղ։ Ջորիդ տալու համար առ այս քեզ։—Եւ Նոնոնը մեկնեց նորան մի ոսկի։

—Իսկ եթէ դու չես կամենայ կատարել մեր խոսքը, աւելացրեց Նոնոնը, ես ունիմ ուրիշ միջոցներ քեզ խրատելու.—և նա ցոյց տուեց իւր հաստ փայտը։

Մաքսատան պահապանը ոչինչ չկարողացաւ ասել ընդդէմ այդպիսի համոզեցուցիչ փաստերի. նա վերցրեց ոսկին և յանձնեց իւր ջորին։

Ամբողջ չորս ժամ Ռոբէրը, նստած իւր կալուածների ափի մօտ, սպասում էր ծառայի դարձին։ Երբեմն երբեմն նա ոտով շշափում էր գետինը, կարծես կամենում էր համոզուել թէ՝ արդեօք յիրա՞ւի գտնուում էր վերջապէս ցանկալի երկրում, որ այնպէս երկար ժամանակ չէր ընկնում նորա ձեռքը և ուր պէտք է ձգէր նա իւր հզօրութեան և փառքի արժատները։ Մինչդեռ Մորէի իշխանը զբաղուած էր այդպիսի մտքերով, նա տեսաւ վերջապէս հեռուից մի ամբողջ փոշեղէն ամպ. որ մօտենում էր ինչպէս հողմից մղուած։ Երբ այդ ամպը հասաւ իշխանի կանգնած տեղին, նորանից անջատուեցաւ մի ձիաւոր, որ վազում էր սաստիկ։ Ռոբէրը ճանաչեց նորան—նա Մատիս Դը-Մոնսն էր։

Մատիսն արագութեամբ իջաւ ձիուց և ընկաւ Ռոբէրի գիրկը։

Ռոբէրը ընդունեց Դը-Մոնսին փոքր ինչ պաղ քաղաքավարութեամբ։ Բայց նա, միջոց չտալով իւր իշխանին խոսքերով յայտնել դժգոհութիւնը, սկսեց պատմել նորան թէ՝ ինչպէս Կորֆուի նզոված նաւապետը, հրաման ստանալով փոխարքայից հետապնդել Առիւծի քամակից, չկամեցաւ լսել նորա աղերսանքներին և չհամաձայնուեցաւ ափը հանել նորան։

—Բոլոր ժամանակ աւելացրեց Դը-Մոնսը, տեսնում էինք Առիւծին միայն տասը մղոն հեռաւորութեամբ, բայց չկարողացանք հասնել։ Այսպիսով մենք մօտեցանք Պելոպոնէսին։ Եւ երբ տեսայ, որ հարկաւոր էր հետանդնել նաւի յետևից մինչև Կրէտէ, ես օգուտ քաղեցի յաջողակ րոպէից, երբ նաւը անցնում էր ոչ հեռու ծանծաղուտից և

կամեցայ լողալով անցնել։ Միայն այդ տեղ նաւապետը համաձայնուեցաւ ափը հանել ինձ։

Այս պարզ բացատրութիւնը ցրուեց վերջին ամպը Ռոբէրի ճակատից և հին բարեկամի հետ տեսակցութիւնը ստացաւ շատ ախորժելի կերպարանք։

Մի քանի րոպէից յետոյ մի նոր փոշեխառն ամպ երևեցաւ դարձեալ հորիզոնի վերայ. բայց այդ ամպի ընթացքը աւելի ծանր էր և հանդիսաւոր։ Այնու ամենայնիւ նա մօտեցաւ, և նորա միջից երևեցաւ Անդրավիդի քաղաքապետը, որին ուղեկցում էին քաղաքային վարչութեան անդամները և քաղաքի պատուաւոր բնակիչները։ Նոքա ամենքը եկել էին հանդիսաւոր կերպով դիմաւորելու և ընդունելու իւրեանց նոր իշխանաւորին։

Իւր հպատակներին հէնց առաջին անգամ ընդունելու ժամանակ Ռոբէրը վարւում էր վեհութեամբ և քաղցրութեամբ։ Քաղցր էր տեսնել թէ օրպիսի քաղաքավարութեամբ նա վեր քաշեց մատների ծայրերով իւր ոտների առջև գետին խոնարհուած քաղաքապետին, օրպիսի մտերմութեամբ ողջունում էր միւսներին, պատասխանելով նոցա ողջոյններին։

Ճանապարհ ընկնելով՝ Շամպլիտը գնում էր ամենից առաջ իբրև հանդիսագլուխ, որպէս իսկ վայել էր նորա բարձր դրութեան։ Ամեն մի քառորդ ժամից յետոյ Ռոբէրը դառնում էր դէպի հետևող քաղաքապետը զանազան հարցմունքներով, որ ամենևին չէին վերաբերւում նորա ապագայ իշխանութեան մեծ հարցերին։

Հասնելով Անդրավիդ՝ Ռոբէրին տարան տեղաւորեցին քաղաքի ամենափառաւոր տան մէջ, այն իսկ տան մէջ, ուր նստում էր Վիլլարդուինը։ Բայց Ռոբէրը մնաց զարմացած, փոխանակ կուսակալի, հանդիպելով Պետրալիֆասին, որ ընդառաջ ելաւ նանդուխքը՝ իշխանին ընդունելու համար։ Այնուամենայնիւ Ռոբէրը մեծ ներողամտութեամբ լսեց կուսակալի բացակայութեան պատճառը, որով Վիլլարդուինը գնացել էր Բլիզիրի սպասելու և այնտեղ ընդունելու նոր իշխանին, եթէ նա ցամաքը դուրս կգար Պոնտիկոյում։

Վիլլարդուինի բացակայութեան այդ բոլոր պատճառները աւելի զօրութիւն ստացան Ռոբէրի աչքին, երբ բարձ-

բապատիւ ծերունու մօտ նա տեսաւ Աննային, որի մի ժպիտը աւելի ճարտարաբան երևեցաւ նորան, քան թէ Անդրավիդի պաշտօնեաների բոլոր ճառերը, որ պատրաստել էին նորա ընդունելութեան համար։

Պաշտօնական ընդունելութիւնից յետոյ, ուր Պետրալիֆասը ներկայացրեց երիտասարդ իշխանին իւր դրանիկներից աւելի նշանաւոր անձինքը, և ուր Ռօբէրը իւր կողմից նոյնպէս ներկայացրեց նոննը Պետրալիֆասին, ծերունի պալատականը առաջարկեց մարդ ուղարկել Վիլլարդուինին։

—Ա՛խ, ոչ, աղաչում եմ ձեզ, մի՛ ուղարկէք, ասաց Ռօբէրը, թոյլ տուէք հանգստանամ գոնէ մի օր։ Այնպիսի ծանր, անտանելի ճանապարհից յետոյ, ինձ հարկաւոր է մի քանի ժամ անցկացնել բարեկամներիս հետ, հեռու ամեն գործերից։ Բացի սորանից՝ քաղաքավարութեան պարտք եմ համարում ինձ և հոգով ցանկանում եմ անձամբ գնալ ծերունի Վիլլարդուինի մօտ, և ոչ թէ պահանջել նորան այստեղ։ Թոյլ տուէք, որ ես ինքս անձամբ յայտնեմ նորան իմ գալուստը։

Այդպիսի ցանկութեան դէմ Պետրալիֆասը ոչինչ չկարողացաւ ասել. մանաւանդ, որ ծերունին կամենում էր մնալ մի առ ժամանակ երիտասարդ իշխանի հետ առանձին, նախ քան նա կմտնէր պետական գործերի մէջ։

Անդրավիդի ընակիչներից ոմանք կարող էին կարծել թէ արդէն մարդ էր ուղարկուած Վիլլարդուինի մօտ, որով հետև երեկոյեան ուշ նոքա տեսան ինչպէս Դը Մօնսը քաղաքի ծայրում կամացուկ խօսում էր մի ձիաւորի հետ, որ իսկոյն կայծակի արագութեամբ սլացաւ դէպի հարաւ։ Բայց այդ մարդիկը չլսեցին իշխանի խօսքերը, իսկ որք լսել էին, նոքա կարծում էին թէ՝ այդ ձիաւորի ուղարկելը կապ ունէր երեկոյեան պատրաստուելիք հանդիսի հետ։

Եւ յերաւի՝ երեկոյեան բոլոր պաշտօնական և հասարակական տները լուսաւորուած էին, փողոցներում վառւում էին ճրագները, որոնց վերայ տղաները թռչկոտում էին զուարճալի աղաղակներով։ Իսկ Պետրալիֆասի տան մէջ Ռօբէրը վայելում էր փառաւոր ընթրիք. նորա աջ կողմը նստած էր Եալադայի իշխանի անները, իսկ ձախ կողմը հրաշագեղ աղջիկը։

Ամբողջ գիշերը թմբուկների և փողերի ձայները հընչում էին իշխանի բնակարանի պատուհանների մոտ, խլացնում էին Համպլիտին և երբեմն երբեմն արթնացնում էին թմբուութիւնից, որ գործել էր ոչ թէ Անդրավիդի թանձր և պատուական գինին, այլ գեղեցիկ Աննայի հրաշալի աչքերը։

Միւս օրը խօսք անգամ չէր լսւում գնալու մասին։ Ռօբերը, նախընթաց երեկոյին լսելով Աննայից, որ նա շատ սիրում է զբօսնել ձիով, հրամայեց պատրաստել ամեն բան այդպիսի զբօսանքի համար ճաշից առաջ։ Շրջեցին ամբողջ քաղաքը և նորա շրջակաները, և բոլոր զբօսանքի ժամանակ իշխանը գնում էր Աննայի հետ միասին և էր նորա հաւատարիմ ուղեկից։ Երեկոյեան նա իր բնակարանի մէջ պատրաստեց ընթրիք իւր երեկեան ասպնջականների համար։

Ընթրիքի ժամանակ՝ Ռօբերը մի քանի խօսք ասաց իւր վաղորդեան գնալու մասին. բայց նա խօսում էր շատ անվճռական կերպով և պարզ երևում էր, որ նա ցանկանում էր հանդիպել որևիցէ արգելքին։ Իսկական, թէև ոչ խոստովանած, արգելքը էր Աննայի աչքերը. բայց նորա բերանը փակ էր։ Իսկ ինչ վերաբերում է Պետրալիֆասին՝ նա չէր շտապեցնում իշխանի գնալը, բայց և չէր վստահանում յորդորել նորան չգնալ, այնպէս որ՝ դրական կերպով որոշուեցաւ գնալ միւս օրը։ Վերջապէս ընթրիքից յետոյ ներկայացաւ քաղաքապետը և յայտնեց թէ՝ շրջակայ գիւղերի բնակիչները հրաման են խնդրում գալ միւս օրը իւր նոր իշխանին ողջունելու համար։

Այդ հանգամանքը վճռեց հարցը. որոշեցին մնալ դարձեալ մէկ օր։

Միւս առաւօտ, արևը ծագելուց մէկ երկու ժամ յետոյ, սկսեցին խումբ խումբ քաղաք մտնել շրջակաների բնակիչները, ծաղիկներով զարդարած, ծաղկափունջերը ձեռքին բռնած, թմբուկներ զարկելով, սրինգների և քնարների վերայ նուագելով։ Շուտով Ռօբերի բնակած տան բակը լցուեցաւ ժողովրդով։ Մօրէի իշխանը գնաց նստեցաւ պատշգամբի վերայ. նորա աջ ու ձախ կողմում նստեցան Պետրալիֆասը, Աննան և քաղաքի պատուաւոր պաշտօնեաները։ Գոյնզգոյն գեղեցիկ շորերը, որ ներդաշնակութիւն ունէին Ցու-

նստանի երկրի բնաւորութեան հետ, հարաւային ազդու դէմքերը, պարը — մերթ պարփակած, մերթ հին պիրէական կենտապար, — այս բոլորը զմայլեցնում էր ապշած իշխանին։ Իսկ քաղցրահնչիւն լեզուի ձայները, երգի մեղմ ներդաշնակութիւնը, և մանաւանդ անդադար կրկնած կեցցէները փաղաքշում էին նոր իշխանի լսողութեան։

Ռօբէրը հրամայեց բաժանել ամենքին առատութեամբ գինի և քաղցրեղէններ, և տօնը շարունակւում էր մինչև գիշերը։

Նոյն իսկ ժամանակ, երբ գիւղացիքը դատարկում էին գինու վերջին տակառը և պարում էին հրաժարական պարը, իսկ Ռօբէրը քնքշութեամբ խօսում էր Աննայի հետ, — վազելով ներս մտաւ պատշգամբը վախեցած Նօննը։ Նա մօտեցաւ Պետրալիֆասին և երկար խօսում էր նորա հետ ոգևորուած։ Թւում էր թէ նորա շփոթութիւնը շուտով անցաւ և ծերունուն, որովհետև նա էլ սկսեց սաստիկ շարժել ձեռքերը. յետոյ վերկացաւ, մօտեցաւ Ռօբէրին և մեկուսացրեց նորան։

— Ցայտնի՞ է արդեօք ձերդ բարձրրութեան Վիլլարդուինի և կոմս Համպիտի մէջ եղած պայմանը կոմսի բացակայութեան ժամանակի մասին Պելոպոնէսից։

— Ի՞նչ պայման, պատասխանեց Ռօբէրը, դեղնելով։ Ես ինչ որ մի բան լսել եմ դորա մասին, բայց առակ էի համարում այդ լուրը։ Մի՞թէ այդ ուղի՞ղ է։

— Ահա՛, թո՛ղ Նօննը պատմէ ձեզ։

— Այո՛, շտապով պատասխանեց Նօննը. ինձ այս բոպէիս հաստատեցին այդ լուրը։ Կոմսի և Վիլլարդուինի մէջ կայ յիրաւի մի պայման — Վիլլարդուինը պէտք է մնայ լիակատար տէր և իշխան Պելոպոնէսի, եթէ կոմսը իւր այստեղից գնալուց յետոյ մի տարի և մի օր անցուցած չի վերադառնայ ինքը կամ չի ուղարկի իւր տեղը մէկ ուրիշին։

— Բայց, չէ՞ որ կոմսը ինձ ուղարկել է իւր ժամանակին. յոյս ունիմ որ՝ եկել եմ դեռ տարին չլրացած։

— Սակայն բաւական է արդեօք միայն ձեր գալուստը. Վիլլարդուինի իշխանութիւնը կդադարի անշուշտ միայն այն բոպէից, երբ դուք կհաղորդէք նորան ձեր գալու պատճառը։ Եւ ահա՛ այդ իսկ հաղորդութիւնը պէտք է կատա-

ռուած լինի մի տարին և մի օրը լրանալուց պռաջ։

—Բայց ուղի՞ղ է արդեօք, որ կայ այդպիսի պայման, հարցրեց Ռօբէրը շփոթուած։

—Կարծեմ այո, ուղիղ է, պատասխանեց Նօննը։

—Մինչև անգամ եթէ պայմանը երկբայելի էլ լինէր, աւելի լաւ կլինի եթէ ձերդ բարձրութիւնը համարէ նորան իբրև եղած։

—Իսկ հօրեղբայրս ե՞րբ գնաց, հարցրեց Ռօբէրը։

—Այն մարդը, որ ինձ պատմեց պայմանի մասին, ճիշտ չէր իմանում ամսաթիւը, պատասխանեց Նօննը։ Բայց նա պնդում էր թէ մարտ ամիսն էր։

—Ուղի՞ղ է, հօրեղբայրս պէտք է գնացած լինէր մօտաւորապէս մարտին, ասաց Ռօբէրը։ Բայց այժմ մեզ հարկաւոր է իմանալ թէ՝ յատկապէս ո՞ր ամսաթուին. գուցէ քաղաքապետը կպարզէ մեզ այդ բանը։

Այդ միջոցին ժողովուրդը սկսեց ցրուիլ իւրեանց տները, շարունակելով կեցցէները և զարկելով թմբուկները։

Ռօբէրը մօտեցաւ պատշգամբի ափին վեհութեամբ գլուխ տուեց ժողովրդին և յետոյ մտաւ սենեակը Պետրալիֆասի, Նօննի, Դը-Մօնսի, քաղաքապետի և այլ պատուաւոր հիւրերի հետ։ Սենեակում նա հարցրեց թէ՝ ե՞րբ և ո՞ր օրը գնաց կոմս Դը Շամպլիտը Պելոպոնէսից։

Ամենքը միաբերան վկայում էին թէ նա գնաց մարտին, բայց ամսաթուի մասին ամեն մէկը ասում էր միտարբեր բան։ Ներկայ եղողներից մէկը մտաբերեց, որ այդ պատահեցաւ Քառասուն մանկանց տօնից յետոյ շուտով։ Այդ տեղեկութիւնը կարծես թէ պաղ ջուր լցրեց հարցով հետաքրքրուածների գլխին, որովհետև այդ տօնը եղել էր մարտի 9-ին, իսկ այժմ 7 էր։

Քաղաքապետը ենթադրում էր, որ կոմսը գնաց 20-ին կամ 21-ին, և նա հաւատացած էր, որ կոմսի գնալուց յետոյ շուտով եղաւ Աւետման տօնը [1])։ Մի խօսքով՝ բոլոր ասածներից այնուամենայնիւ ճիշտ չիմացուեցաւ Շամպ-

---

[1]) Մեր տօնացուցով 40 մանկանց տօնը լինում է միշտ մեծ պասի 27 րդ օրը, այսինքն՝ 4-րդ շաբաթ օրը, իսկ Աւետման տօնը ապրիլի 7-ին։ Դանոթ թարգ.

լիտի գնալու օրը, և ամենքը, որոնք իմանում էին գաղտնի պայմանի գոյութիւնը համոզուեցան, որ հարկաւոր էր շուտով գնալ կուսակալի տեսութեան։

Իշխանը խնդրեց քաղաքապետից ձիեր պատրաստել նորա համար միւս օրը դեռ արշալոյսը չբացուած, և հիւրերը ցրուեցան։ Երիտասարդ իշխանը ճանապարհ ձգեց Աննային մինչև սանդուղքի վերջը, համբուրեց նորա ձեռքը և խոստացաւ չգնալ առանց մնաս բարև ասելու նորան, յարակցելով թէ՝ աշխարհքի բոլոր թագաւորութիւնները չեն կարող ստիպել նորան բացակայ լինել երկար ժամանակ։

Վերադառնալով տուն՝ Պետրալիֆասը գնաց ուղղակի իւր թոռնուհու սենեակը։

—Զաւակս, ասաց նա, ես կարծում եմ, որ մեզ կըվայելէր վաղը ուղեկցել իշխանին։

Այդ խօսքերից Աննայի երեսի վերայ ուրախութիւն փայլեցաւ։

—Մանաւանդ որ, շարունակեց ծերունին, քեզ պէտք է յայտնի լինի մեր՝ այստեղ, Պելոպոնէսում գալու նպատակը. դու պէտք է օգնես ինձ այդ նպատակին հասնելու համար։ Իմ այստեղի կալուածները և քո զուարճութիւնը – միայն առիթ են մեր գալու համար. իսկ իսկական պատճառը — քո հօր դիտաւորութիւններն են. թագաւորները, զաւակս, գործիք են բարձր Աստուածային տնօրէնութիւններին երկրիս վերայ։ Թագաւորները ապրում են ուրիշների համար, և ոչ թէ իւրեանց համար. նոքա պէտք է կատարեն իւրեանց վերայ ի վերուստ դրած պարտաւորութիւնները։ Քո նոր ցանկութիւնները, քաղաքական խորհրդածութիւնները, ստիպում են նորան միանալ այն իշխանական տոհմի հետ, որը տիրապետում է Պելոպոնէսին։ Գոդֆրիդ Դը-Վիլլարդուինը քրիստոնէութեան ասպետների մէջ կատարելագոյններից մէկն է. նա քաջ է, ազնիւ, գեղեցիկ, հարուստ։ Դու նորան տեսել ես, խօսել ես նորա հետ, ինչպէս էլ ես։

Այդ գովասանքներից ամեն մէկից յետոյ ամպ ամպի ետևից դիզւում էին չքնաղ օրիորդի ճակատի վերայ։

—Միւս կողմից, շարունակեց Պետրալիֆասը, Գիւի Դը-Լա-Ռոշը դեսպան է ուղարկել և պնդելով խնդրում է քո ձեռքը։ Երիտասարդ Գիւին փառաւոր Օտոնի ժառանգն է

և Նորան սպասում է Ամէնքի իշխանութիւնը։ Եթէ դու լինէիր հասարակ մահկանացու աղջիկ, ես քեզ կասէի — ընտրի՛ր։ Բայց այժմ ասում եմ — Մորէն գերակշռում է Ամէնքի քաղաքական կշեռքի վերայ։ Ես հաւատացած եմ, որ Վիլլարդուինը սպասում է քեզանից իւր վիճակի վճիռը։ Բայց մենք էլ մեր կողմից նոյնպէս պէտք է սպասենք հանգամանքների վճռին, իսկ հանգամանքները Վիլլարդուինին ընդդէմ են. Նորա հայրը այժմ չէ այլ ևս Մորէի կուսակալ — նա ոչինչ է։ Իսկ որպիսի և լինին երիտասարդ Գոդֆրիդի անձնական արժանաւորութիւնները, Նորա դրութեան այդպիսի փոփոխութիւնը ստիպում է մեզ հեռացնել Նորանից մեր աչքը։ Քո ձեռքը չէ կարող պատկանել Վիլլարդուինին։

Աննայի երեսը դարձեալ պայծառացաւ։

— Բայց, շարունակեց հեռատես ծերունին, մինչդեռ մայր է մանում մէկ արեգակը, Պելոպոնէսի հորիզոնի վերայ բարձրանում է միւսը, աւելի պայծառը և փայլունը։ Երիտասարդ Շամպլիտը ծագում է երևելի տոհմից և իշխան է դառնում այնպիսի հասակում, երբ ուրիշները դեռ նոր են ձի նստում. նա նոյնպէս շրջապատած է երիտասարդութեան, բախտի և փառքի փայլմունքով։ Ահա՛ այն մարդը, որը ես ընտրում եմ քեզ համար, զաւակս, յանուն քո հօրից ինձ տուած իրաւունքներին և յանուն այդ իրաւունքներով ինձ վերայ դրած պարտաւորութեանց։ Վասն որոյ ճանապարհորդութեան ժամանակ, փարուիր Նորա հետ ինչպէս որ պահանջում են հանգամանքները, և մինչդեռ ես կխաղամ Նորան քաղաքական թելերով, դու խաղիր Նորան քո ոսկի ուրկանով։

— Հայրիկ, ասաց Աննան, կարմրած և աչքերը խոնարհած, — դուք յատկացնում էք ինձ աւելի շատ կարողութիւն քան թէ ես ունիմ։ Ի՞նչպէս կարող եմ իմ անհմուտ ձեռքովս լինել ձեր մեծ նախապատրաստութիւնների գործուածքը. ես միայն կխաղամ թելերը, որ այդպիսի իմաստութեամբ դասաւորած են։ Եթէ հօրս հարկաւոր են դաշնակիցներ, կարծեմ, նա պէտք է գտնէ նոցա միայն յանուն իւր հզօրութեան և ազդեցութեան։

— Ո՛չ. դստրիկս, պատասխանեց ծերունին, դու պէտք է մատուցանես հօրդ այդ մեծ ծառայութիւնը։ Եւ եթէ

այդ դիպուածում քեզ կհարկաւորի մաքառել սրտիդ հետ — մի՛ կանգնիր այդպիսի մեծահոգի վարմունքի առաջև։

— Սիրելի պապ, ասաց Աննան, և նորա աչքերի մէջ փայլեցին արտասուքներ, — երբ զօրով կամենում են բաց անել վարդի կոկոնը, նա ոչ թէ բացւում է, այլ թառամում։

— Չէ՛, ես զօրով չեմ բացանի կոկոնը, պատասխանեց Պետրալիֆասը, — և քեզանից խնդրում եմ միայն աշխատիր քաղցրութեամբ վարուիլ նորա հետ, և ոչ թէ պազութեամբ։ Ես հաւատացած եմ, Ռօբէրը ունի այնպիսի յատկութիւններ, որ նորա առաջ վարդը կբացուի իսկոյն։

Երբ ծերունին փոքր ինչ զիջողութիւն արեց, Աննան յօժարութեամբ խոստացաւ կատարել ամեն բան ինչ որ նորանից պահանջում են, մանաւանդ որ՝ հրաժարուելով քաղաքավարութիւն ցոյց տալ օտար իշխանին, նա վախենում էր, որ պապը կհրաժարուէր ուղեկցութիւնից, որը նա ինքը շատ ցանկանում էր։

Միւս օրը Ռօբէրը թոյլ տուեց դը-Մօնսին գնալ Վելիգոստ և պատրաստել իւր բարօնութիւնը կառավարութեան առաջիկայ փոփոխութեանց համար։ Երիտասարդ իշխանը շատ ուրախացաւ, երբ ծերունի Պետրալիֆասը յայտնեց նորան թէ՝ իբրև կուսակալի ներկայացուցիչ պարտք է համարում իւր համար ուղեկցել իշխանին և ներկայացնել նորան Վիլլարդուինին։

Ուղեկիցների այդպիսի աւելանալու պատճառով Շամպլիտի ճանապարհորդութիւնը պահանջեց աւելի երկարատև պատրաստութիւններ և կարողացան ճանապարհ ընկնել հազիւ կէսօրին։

Քաղաքից կէս մղոն անցած, Պետրալիֆասը տեսաւ մի որսորդ, որ բարձրանում էր սարի վերայ ճանապարհից մօտ։ Պետրալիֆասը փոքր ինչ ոտը կախ ձգեց և թողեց, որ ամենքը առաջ ընկնեն, իսկ ինքը և Աննան, որ այդ օտարականների մէջ չէր հեռանում իւր պապից, մնացին մինակ։ Իսկոյն Պետրալիֆասը ձայն տուեց որսորդին, որ նոյնպէս կանգ առաւ։

— Պարոն Խամարէթ, ասաց Աննան, ո՛րպիսի բախտաւոր հանդիպումն։

— Բախտաւո՛ր, գոչեց Խամարէթը։ Ես վարում եմ կեանքս գայլերի նման, խոյս եմ տալիս մարդկայինն հասարակութիւնից. իմ միակ ընկերներս — լեռներում թափառող վայրենի գազաններն են։ Բայց այժմ, երբ ես լսեցի այդ խօսքը, որ չէ պարունակում իւր մէջ ոչինչ իմաստ, ես աւելի հեշտութեամբ կատանեմ ճակատագրի հարուածները և կեանքի ծանրութիւնը։

— Լեռնաբնակ գա՛յլ, շուտով փոթորիկ կունենանք, ասաց Պետրալիֆասը։ Տեսնում էք, ես շարժում եմ ամպեր, նոքա շուտով կընդդիմահարուին։ Եւ ասելով այդ խօսքերը Պետրալիֆասը մտրակեց իւր ձին և հասաւ Ռօբէրին։

16.

ՆՈՐ ՅՈՒՍԱԲԵԿՈՒԹԻՒՆ։

Անցնելով Պինէեան լեռները՝ ճանապարհորդները երեկոյեան հասան Բլիզիրի գիւղը, որ զետեղուած էր լեռների ստորոտում Կատակէլօի մօտ։ Այժմ այդ տեղում կան միայն մի քանի աղքատ խրճիթներ. բայց այն ժամանակ դա Ելլադայի գլխաւոր աւաններից մէկն էր Պինէի միւս կողմում։ Գիւղի մէջ մտնելուն պէս ճանապարհորդները դիմեցին դէպի տանուտէրի տունը. նա շատ զարմացաւ տեսնելով այնչափ ձիաւորներ, մանաւանդ երբ իմացաւ թէ ովքեր են նոքա և թէ պտտում են կուսակալին։

— Կուսակա՛լը, բացականչեց նա, ներս ընդունելով տան մէջ Ռօբէրին և նորա ուղեկիցներին մեծ պատուով, — կուսակալը այստեղ չէ։

— Ինչպէս, նա այստեղ չէ՞, բարկացած գոչեց Շամպլիտը։ Հապա ո՞ւր է նա։

— Երկու օր առաջ նա գնաց դիմաւորելու ձերդ բարձրութեան։

— Դիմաւորե՛լ ինձ։ Այս ի՞նչ է նշանակում։

— Մի քանի օր կուսակալը սպասում էր այստեղ ձերդ բարձրութեան գալուն և տեսաւ բոլոր պատրաստութիւնները ձեզ ընդունելու համար։ Ամենայն օր առաւօտից պա-

հապաններ էր կանգնացնում բոլոր բարձրաւանդակների վերայ դիտելու ձեր նաւի երևալը իրան իսկոյն տեղեկութիւն տալու համար։ Կուսակալը չգիտէր թէ ինչպէս բացատրէր ձեր ուշանալը։ Վերջապէս երեկ չէ միւս օրը տեղեկութիւն ստացուեցաւ թէ Կարօնեան նեղուցում երևացել են երեք մեծ նաւ։ Կուսակալը հաւատացած լինելով, որ այդ նաւերով գալիս է ձերդ բարձրութիւնը, իւր իշխանաւորի եղբօրորդին, գնաց Կալամատա առանց մի բոպէ կորցնելու, թէպէտ և տանջւում էր թեթև տենդով։

—Եւ այժմ Վիլլարդուինը Կալամատո՞ւմն է։

—Անկասկած, Կալամատումն է, և շատ կվշտանայ երբ կիմանայ, որ ձերդ բարձրութիւնը ժամանել է այստեղ նորա գնալուց յետոյ միայն երկու օր անցած։

Ռօբէրը աւելի ևս վշտացած էր այդ հանգամանքից. մնում էր երկուսից մէկը—կամ կանչել Կալամատից Վիլլարդուինին և կամ անձամբ գնալ նորա մօտ։ Սոյն վերջին միջոցը էր և՛ աւելի քաղաքավարի, և՛ աւելի համառօտ և Ռօբէրը ընտրեց դորան առանց տատամսելու։ Բայց այդ վճիռը կարելի էր ի կատար ածել միայն միւս օրը. և Ռօբէրը այդ գիշեր մխիթարուեցաւ մաքրազարդելով իւր ընդունելութեան համար տեսած փառաւոր պատրաստութիւնների մնացորդները։

Միւս օրը ճանապարհորդները շարունակեցին իւրեանց ընթացքը միևնոյն ձիերով։ Այդ բանը ունէր մի քանի անյարմարութիւններ, որովհետև ձիերից մեծ մասը պատկանում էր Անդրավիդի ջրաղացպաններին, և եթէ այդ ճանապարհորդութիւնը երկար շարունակուէր, Անդրավիդը կարող էր մեռնել սովից, ինչպէս պաշարման ժամանակ։

Ճանապարհորդութիւնը մեծ զուարճութիւն էր տալի Ռօբէրին։ Պելոպոնէսի գեղեցիկ տեսարանները մեծ ազդեցութիւն էին գործում երիտասարդ իշխանի զգայուն հոգու վերայ։ Արքայական պատիւները, որ վայելում էր նա առաջին անգամ իւր կեանքի մէջ ամեն տեղ, շատ փաղաքշում էին նորա ինքնասիրութեան։ Ընդ նմին նա միշտ գնում էր Աննայի հետ միասին, հիանում էր նորա շնաշխարհիկ գեղեցկութեան և նազելութեան վերայ, որով նա նստած էր ձիու վերայ, անդադար խօսում էր նորա հետ,—և այդ

բոլորը բորբոքում էր նորա զգայուն սիրտը։ Այնու ամենայնիւ Ռոբէրը շատ փափաքում էր որքան կարելի է շուտով հասնել տեղը. բայց այդ անկարելի էր ուեթ օրից առաջ։

Ճանապարհին ամեն մէկ քաղաքում և մինչև անգամ ամեն մէկ գիւղում Ռոբէրին ընդունում էին արքայավայել պատիւներով և շքեղ հանդէսներով։ Մանաւանդ փառաւոր էր ընդունելութիւնը Վուլկալո վանքում, շինած Թեոմատ Արամազդի տաճարի աւերակների վերայ։ Վանահայրը աւորժելի լուր յայտնեց Ռոբէրին թէ՝ միայն երեք օր առաջ վերադարձել է Կալամատից և թէ՝ Վիլլարդուինը այնտեղ է և սպասում է Մորէի իշխանի գալստեան։

Որքան աւելի մօտենում էր Ռոբէրը ճանապարհորդութեան կէտին, այնքան աւելի փառաւորւում էր նորա հոգին։ Անցնելով Ստենիկլարոսի ընդարձակ և գեղեցիկ հովիտով և յետոյ Պամիոսի անտառախիտ ափերով իշխանը յանկարծ հեռուից տեսաւ Կալամատի միջնաբերդը, բարձրաւանդակ ժայռի վերայ։ Մի ոտքով նա արդէն շօշափում էր այնպիսի ջերմ եռանդով փափաքած նպատակը։ Նորա հոգեկան հրճուանքը փայլում էր երեսի վերայ և մի քաղցր գոհ ժպիտ անձնասիրութեան խաղում էր նորա շրթունքի վերայ։

Խարամանկ Պետրալիֆասը նկատեց այդ։

—Ահա՛, ասաց ծերունին, ցոյց տալով Կալամատի բերդի պարիսպները,—ահա՛ որտեղ է սպասում կուսակալը, որ յանձնէ ձեզ ինքնակալ իշխանութեան գայիսոնը։ Ահա՛ այնտեղ սպասում է ձեզ Պելոպոնէսը, որ ծունր խոնարհեցնէ իւր իշխանաւորի առջև։

—Ինձ համար մեծ բախտաւորութիւն կլինի, պատասխանեց Ռոբէրը, սկսել այս հրաշալի երկրի տիրապետութիւնը։ Բայց այդ երջանկութեան գլխաւոր և նշանաւոր մասը ձեր ձեռքումն է։

—Եթէ իմ ձեռքումն է, պատասխանեց Պետրալիֆասը փորձառու պալատականի ոճով, ի հարկէ պահուած է ձերդ բարձրութեան համար։

—Իմ բախտաւորութիւնը միայն այն ժամանակ կլինի լիակատար, շարունակեց Շամպլիտը, ցածացնելով ձայնը, երբ ես կարող կլինեմ ինձ հետ մատնակից անել նորան, ով ինձ

թանկ է և մոտ սրտիս։ Նոննը ինձ յոյս է տուել թէ ինձ արգելուած չի լինի առաջարկել ձեր թոռնուհուն Պելոպոնէսի թագը։

Պետրալիֆասը զսպեց իւր երեսի մկանունքների ցնցմունքը։

—Ձերդ բարձրութիւն, շտապով պատասխանեց ծերունին, եթէ դուք առաջարկէիք իմ թոռնուհուն ոչ թէ արքայական գահը, այլ մի խրճիթ անգամ, ես հաւատացած եմ, որ նորա բախտաւորութիւնը կլինէր նոյնպէս ապահով և նորա հօր ու իմ համաձայնութիւնը աւելի աներկբայելի։ Ես հաւաստի եմ, որ Աննայի զգացմունքները նոյն են, որպէս և իմս։ Բայց, եթէ դուք թոյլ կտաք, ես կխօսեմ նորա հետ այդ բանի մասին երբ մենք կհանգստանանք ճանապարհորդութիւնից յետոյ։

—Ես շատ և շատ շնորհակալ կլինեմ ձեզանից։

Այդ խօսակցութիւնից յետոյ շուտով ճանապարհորդները մտան Կալամատը և առաջին պատահողից հարցրին կուսակալի տունը։ Անցորդը ցոյց տուեց մի մեծ դրանդիք, որ ամենագեղեցիկն էր բոլոր քաղաքի մէջ։ Տան մէջ երբ իմացան թէ ովքեր են ճանապարհորդները, ծառան իսկոյն տարաւ նոցա ընդարձակ ընդունարան դահլիճը և գնաց յայտնելու իւր տիրոջը։ Մի քանի րոպէից յետոյ ներս վազեց դահլիճի մէջ մի կայտառ, գեղեցիկ մանուկ։ Նա վստահ և աներկիւղ մօտեցաւ Ռօբէրին և, թաթիկը մեկնելով նորան ասաց.

—Բարի ես եկել իմ քաղաքը։

Ռօբէրը նստացրեց մանուկին իւր ծունկի վրայ և համբուրեց նորան։

—Բայց դու ո՞վ ես, փոքրիկս, որ քաղաք ունիս, հարցրեց Ռօբէրը։

—Ես, պատասխանեց մանուկը մեծամտութեամբ, ես Վիլհելմն եմ, իշխան Կալամատի։

—Ա, ուրեմն դու իշխա՞ն ես. բայց ինչպէս, ծիծաղելով հարցրեց Ռօբէրը։

—Այնպէս, ինչպէս որ և իմ հայրս իշխան է Մօրէի։ Թագաւորը տուեց նորան Մօրէն, իսկ նա ինձ—Կալամատը։

—Ա՛խ, ուրեմն դու Վիլլարդուինի որդին ես։ ո՞ւր է հայրդ։

—Հայրս այստեղ չէ։

—Ի՞նչպէս թէ այստեղ չէ, գոչեց Ռոբէրը և քիչ էր մնում, որ ծունկից վայր ձգէր փոքրիկ Վիլհելմին։—Հապա ո՞ւր է նա։

—Չգիտեմ ուր է. հայրս սովորութիւն չունի ասել մեզ թէ ուր է գնում։ Մայրս տանն է, նա կարող է ընդունել ձեզ։

Չիմանալով դեռևս թէ ո՞րքան կարելի է հաւատալ երեխայի խօսքերին, Ռոբէրը վերկացաւ տեղից և սկսեց խոշոր քայլերով մանգալ սենեակի մէջ։

Փոքրիկ Վիլհելմը մնալով փոքր ինչ էլ և զարմացած նայելով օտարականի վրայ, դուրս գնաց դահլիճից անբաւական։

Համպլիտը երկար չմնաց մտատանջութեան մէջ։ Շուտով դահլիճի դուռը բացուեցաւ և մտաւ Զապելը, Վիլլարդուինի կինը։ Նա քնքշութեամբ գրկեց Աննային և ընդունեց հիւրերին անարուեստ վեհութեամբ, որ կազմում էր լաւագոյն զարդարանք այն ժամանակի մեծատուն կանանց։ Տարաբախտաբար՝ մեր ճանապարհորդները լսեցին նորանից հաստատութիւնը այն անախորժ լուրի, որ յայտնեց արդէն նորա փոքրիկ որդին։ Վիլլարդուինը տեղեկանալով, որ ծովի վրայ նկատած նաւերը չեն ներում Ռոբէր իշխանին, գնացել էր Վելիգոստ, երկու օր Կալամատում էլի սպասելուց յետոյ։ Պետական ծանր գործերը պահանջում էին նորան այնտեղ։

Ուրեմն պատահեցաւ նոր արգելք, որ կարող էր գըրգռել ամենապինդ ջղեր, եթէ մինչև անգամ բանը վերաբերուէր այնպիսի ծանր հարցին ինչպէս էր Պելոպոնէսի տիրապետելը։ Բայց քաղաքավարութիւնը և մանաւանդ արդարադատութիւնը ստիպում էին Ռոբէրին զսպել բարկութիւնը և լռել։ Նա չէր կարող չհասկանալ որ եթէ նա ինքը ճանապարհորդում էր ամբողջ Պելոպոնէսում պտռելով Վիլլարդուինին, Վիլլարդուինը նոյնպէս ճանապարհորդում էր, և աւելի մեծ անշահախնդրութեամբ, պտռելով նորան։ Բայց իշխանի դրութիւնը աւելի անելանելի էր դառնում նորանից, որ չէր կարող մերժել Զապելի հրաւէրքը հիւր մնալ

նորա մօտ գէթ մի օր։ Այդ միջոցին գոնեա Կալամատի քաղաքապետը կարող էր գտնել նոր ձիեր, որովհետև հները հարկաւոր էր վերադարձնել Անդրավիդ։

Երրորդ օրը մեր ճանապարհորդները ուղևորուեցին դէպի Վելիգոստ։

Երկարատև, ծանր և տաղտկալի ճանապարհորդութիւնից յետոյ Ռօբէրը և իւր ուղեկիցները վերջապէս հասան Վելիգոստի ամրոցին։ Տեղադրութիւնը շատ գեղեցիկ էր, իսկ ամրոցը նստած էր բարձր ժայռերի վերայ։ Իշխանը որոշեց փոքր ինչ հանգստանալ հովտում, Ներիլլա, հին Կրօնիօն, գետակի ափի մօտ։ Արեգակը արդէն մայր էր մտնում, և որովհետև այդ ժամում սովորաբար ամրոցների դռները փակւում էին, Ռօբէրը մարդ ուղարկեց ամրոցապետից հրաման խնդրել ներս մտնելու համար։ Բայց ուղարկուածին նա պատուիրեց չյայտնել իշխանի գալը, որպէս զի չանհանգստանար Վիլլարդուինը. իսկ եթէ Մատիօ դը Մօնսը այնտեղ կլինի, հրամայեց դուրս կանչել նորան և յայտնել իւր գալը։

Ուղարկուածը շուտով վերադարձաւ առանց յաջողութեան։ Նա պատմեց թէ՝ Մատիօ դը Մօնը այնտեղ չէ, իսկ բերդապահը բարկանալով ասաց.

—Գնացէ՛ք, կորէ՛ք, արեգակը մայր մտնելուց յետոյ դուռը ոչ ոքի համար չէ բացւում։

—Ես կամենում էի, աւելացրեց ուղարկուածը, յորդորել բերդապահին, ասել նորան, որ ցածում սպասողը ևրևելի օտարական է. բայց նա պատասխանեց թէ բերդի տէր բարօնը տանը չէ և առանց նորա հրամանի արեգակը մայր մտնելուց յետոյ չէ կարելի մարդ ներս առնել։

Առաջ, զայրացած, Ռօբէրը կամենում էր ինքը գնալ, հաւատացած լինելով որ՝ բաւական է ասել իւր անունը և բոլոր դրները կբացուին նորա առաջև։ Բայց յետոյ, լուրջ մտածելով, նա որոշեց չյարուցանել ոչինչ աղմուկ և գնաց գիշերելու փոքրիկ վանքում, գետի միւս ափի վերայ։

Միւս օրը, արեգակը դեռ նոր էր բարձրացել երբ Վելիգոստի ամրոցապետը եկաւ շտապով և ներողութիւն խնդրեց Ռօբէրից երեկուայ անցքի համար, որով անքաղաքավարութեամբ չէին բացել ամրոցի դուռը նորա բարձ-

բութեան համար։ Յետոյ նա հրաւիրեց իշխանին և նորա ուղեկիցներին մտնել ամրոցը։

Բայց այնտեղ նոր կայծակ էր սպասում Ռոբէրին — Վիլլարդուինը Վելիգոստում չէ՛ր։

— Ի՞նչպէս, նա Վելիգոստում չէ՞, գոչեց Ռոբէրը լայն բացանելով բերանը և աչքերը։

— Տարաբախտաբար, այստեղ չէ, ասաց ամրոցապետը։ Յետոյ մեկուսացնելով Ռոբէրին և Պետրալիֆասին՝ ամրոցապետը աւելացրեց կամացուկ.

— Կուսակալի այստեղ գալու պատճառը մի ապստամբութեան նշաններն են, որ պատրաստել են, ինչպէս երեւում է, տեղացիները — յոյները։

Այդ խօսքերից Պետրալիֆասը դեղնեցաւ։

— Բայց ապստամբութեան բունը, շարունակեց ամրոցապետը, ինչպէս երևում է, աւելի Արկադիայումն է։ Այդ պատճառով, երբ բարձ Դը. Մօնսը յայտնեց կուսակալին թէ ձերդ բարձրութիւնը դուրս է եկել արևմտեան ափի վերայ, կուսակալը շտապեց բարձի հետ երկու օր առաջ Նիկլի։

— Գնալու ժամանակ, վերջացրեց խօսքը ամրոցապետը, նա մեզ ասաց վճռողական կերպով թէ կ՚մնայ Նիկլիում առանց հեռանալու այնքան ժամանակ մինչև որ կիմանայ ձերդ բարձրութեան տնօրէնութիւնը։

— Դէ՛, ուրեմն գնանք Նիկլի։

— Ձերդ բարձրութիւնը արդեօք չի բարեհաճի թոյլ տալ, որ տեղեկութիւն հասցնենք կուսակալին ձեր գալըստեան մասին։ Ես գիտեմ թէ ոՐպիսի անհամբերութեամբ սպասում է ձեր տեսութեան և հաւատի եմ, որ նա իսկոյն կգայ։

— Ո՛չ, ո՛չ, ամենևին ո՛չ, գոչեց Ռոբէրը, եթէ նա որոշել է մնալ մի տեղ, չշարժենք տեղից, ապա թէ ոչ գուցէ դարձեալ կծկուի մեզանից։

— Ես ինքս կերթամ Վիլլարդուինի մօտ, վճռաբար ասաց Ռոբէրը, այդ աւելի հաստատ բան կլինի։

Եւ արդարև գուցէ այդ աւելի հաստատ բան էր, բայց ոչ աւելի հեշտ, որովհետև այն ժամանակներում ձիերը շատ հազուագիւտ բան էին Վելիգոստում։ Այնու ամենայնիւ ամ-

րոցապետը այնպիսի մարդկանցից էր, որք կխոստանան ամեն բան, ինչ որ կամիս։ Հրամաններ ստանալով Ռոբէրից պատրաստել փութով ամեն բան, ինչ որ հարկաւոր է ճանապարհորդութեան համար, նա ոչ մի բանում չհակառակեց իշխանին և ցուցեց կատարեալ հնազանդութիւն։ Սակայն, ժամերն անցնում էին արագութեամբ և ամրոցապետը չէր երևում։

Ռոբէրը դողում էր անհամբերութիւնից։ Ամրոցապետը ներկայացաւ միայն երեկոյին, բայց տրտում և չարագուշակ դէմքով։ Նա յայտնեց թէ պատուիրել է ձիեր գտնել բոլոր շրջակայ գիւղերում, բայց աւելացրեց թէ՝ այդ շատ դժուար է ամառային պարապմունքների պատճառով։ Ընդ նմին նա հարևանցի ակնարկութեամբ հասկացրեց Ռոբէրին թէ՝ այն տեղերի էշերը շատ լաւ տեսակից են և վազում են շատ արագ։ Այդ խօսքերից Ռոբէրի գլխի մազերը ցից ցից կանգնեցան։

Բայց ամրոցապետի կարգադրութիւնները ի զուր չէին անցել. օրը մթնելիս ամեն կողմից սկսեցին բերել ձիեր և հարկաւոր թիւը գրեթէ պատրաստ էր։

Առաւօտեան արշալուսի հետ ճանապարհորդութիւնը նորից սկսուեցաւ, որպէս զի վերջապէս շուտով հասնին այն տեղին, ուր Վիլլարդուինը որոշել էր մնալ։ Ճանապարհին դարձեալ նորոգուեցաւ Ռոբէրի հոգեկան զուարթութիւնը և լաւ տրամադրութիւնը։

Երկարատև ճանապարհորդութիւնը Աննայի ընկերակցութեամբ և այն յոյսը թէ շուտով կվերջանայ տեղից տեղ թափառելը, իրաւունք էին տալի Ռոբէրին, ինչպէս նա կարծում էր, փորձել և իմանալ չքնաղ օրիորդի զգացմունքները և օր առաջ տեսնել այն երջանկութիւնը, որը պէտք է Պետրալիֆասը յայտնէր նորան իւր ժամանակ։

Ամբողջ օրը աշխատում էր Ռոբէրը միշտ չհեռանալ Աննայից և խօսել նորա հետ։ Բայց պատահմամբ էր լինում թէ դիտաւորութեամբ, Աննան ամենևին չէր մնում նորա հետ միայնակ։ Իսկ երբ Ռոբէրին յաջողւում էր երբեմն մեկուսացնել նորան և սկսել ծանր խօսակցութիւն, Աննան շատ անարուեստ կերպով փոխում էր իսկոյն խօսքը

ուրիշ առարկայի վերայ։ Վերջապէս Ռոբէրը շատ և ապարդիւն փորձերից յետոյ, անբաւականութեամբ քշեց իւր ձին և առաջ ընկաւ։

Անցնելով այնուհետև էլի մի երկու մղոն, ճանապարհորդները պատահեցան մէկ ձիաւորին, և Ռոբէրը հարցրեց նորանից թէ ո՞րտեղից է գալի։

—Նիկլից, պատասխանեց ձիաւորը։

—Կուսակալը ա՞յնտեղ է։

—Ո՛չ։

—Ո՞չ, գոչեց Ռոբէրը, կարծելով թէ՝ կա՛մ այդ անծանօթ մարդն է խելագար, և կա՛մ ինքն է ցնորուել։

—Ի հարկէ ո՛չ, պատասխանեց ձիաւորը։—Կուսակալը Նիկլիումն էր մինչև երրորդ օրը, յետոյ իմանալով, որ Պելոպոնէսի իշխանի եղբօրորդին հասել է Կալամատ, նա գընաց Լակեդեմոն, ուր կամենում էր սպասել երիտասարդ իշխանին և գուցէ այնտեղից կերթայ Կալամատ։

—Գնաց Լակեդեմո՛ն, գոչեց վերստին Ռոբէրը պինդ բռնելով իւր գլուխը, և փոքր էր մնացել, որ ընկնէր ուշաթափ։

Այդ միջոցին հասան միւս ուղեկիցները և իմացան նորա վրդովմունքի պատճառը։ Ինքն անծանօթ ձիաւորը ոչ սակաւ զարմացաւ իմանալով որ Պելոպոնէսի իշխանի եղբօրորդին էր իւր հետ խօսողը։ Նա յայտնեց թէ Վիլլարդուինը գնացել էր Նիկլի շատ ծանր գործի պատճառով, որ կապ ունի յոյների ապստամբողական պատրաստութեան հետ։ Բայց այնու ամենայնիւ Ռոբէրի գալը իմանալուն պէս նա ձգեց ամեն բան և շտապեց դիմաւորելու նորան։ Այդ ձիաւորը մի արագնթաց սուրհանդակ էր, որ պարտաւոր էր վազել գիշեր ցերեկ ապստամբութեան մասին տեղեկութիւններ հասցնելու Վիլլարդուինին։

Իսկոյն խորհուրդ կազմեցին բացօթեայ տեղում և համաձայն ընդհանուրի կարծիքին Ռոբէրը նամակ գրեց Վիլլարդուինին թէ ինքը գտնուում է Նիկլիում և խնդրում է կուսակալին յայտնել թէ—կսպասէ՞ արդեօք թէ ոչ Լակեդեմոնում, որպէս զի ի զուր տեղը չշարունակուի ապարդիւն վազվզելը միմեանց քամակից։

Սուրհանդակը վերցրեց նամակը, ստացաւ լաւ պարգև և մտրակելով ձին թռաւ արագութեամբ։

Իսկ Ռոբէրը և նորա ուղեկիցները շարունակեցին ճանապարհը և կէս ժամից յետոյ հասան Նիկլի, որ այժմ մի ամայի տեղ է և կոչվում է Պալէոպիսկոպի։

Ռոբէրը մնաց Նիկլիում երկու օր։ Նա ինքն զգում էր արդէն, որ բաւական նեղացել է և ձանձրացել ճանապարհից. ուրեմն ինչ պէտք է զգային զառամեալ ծերունին և մատաղահաս օրիորդը, որք ուղեկցում էին նորան այդ երկար և տաղտկալի ճանապարհորդութեան մէջ։

Բացի սորանից, եթէ Պետրալիֆասը իւր համար պարտք համարեց ուղեկցել մի միջոց երևելի հիւրին, որի ընդունելութիւնը յանձնուած էր նորան, այժմ ծերունին սկսեց նկատել որ՝ նորա ուղեկցութիւնը Ռոբէրին Աննայի հետ միասին, կարող էր այնուհետև անպատեհ համարուել, և նա յայտնեց թէ եթէ Համպլիտը կամենում է շարունակել ճանապարհորդութիւնը, իւր ծերութիւնը և թուլութիւնը այլ ևս չեն ներում ուղեկցել նորան։ Ուստի Պետրալիֆասը որոշեց մնալ Նիկլիում և սպասել, մինչև որ՝ կիմացուի թէ դրական կերպով ո՞րտեղ կարելի է տեսնել Վիլլարդուինին։

Ռոբէրը որոշեց նոյնպէս մնալ և սպասել։ Բայց նա չկամեցաւ ի զուր կորցնել օրը և նորից սկսեց փորձել Աննայի սիրտը։ Աւաղ, այդ յաղթութիւնը սկսեց երևալ նորան նոյնպէս դժուար, որպէս և Պելոպոնէսին տիրապետելը։ Գործ դնելով ամեն տեսակ խորամանկութիւնները՝ Ռոբէրին յաջողեցաւ վերջապէս երեք չորս անգամ միայնակ մնալ Աննայի հետ։ Բայց նա կամ իբր չէր հասկանում իշխանի ասածը, կամ ստիպուած լինելով հասկանալ կտրում էր յանկարծ նորա փայլուն ճարտասանութիւնը բարձրաձայն ծիծաղով, կամ գտնում էր որևիցէ բարեպատեհ առիթ դուրս գնալ սենեակից, այնպէս որ Ռոբէրը, վերջապէս, զայրացած և յուսահատուած, գնաց գտաւ Նոննին և սկսեց գանգատուիլ նորան Աննայի սառնասրտութեան վրայ։

—Ես եկայ Պելոպոնէս, ասաց Ռոբէրը, բոլորովին հաւատացած թէ՝ ոտքս այս երկրի վերայ դնելուն պէս կը-գառնամ իսկոյն սորա տիրապետող, իսկ այժմ ահա՛ քսան

օր է որ ես թափառում եմ սարերում և ձորերում, միայնակ, առանց թիկնապահների, առանց կարողութեան ազդելու երկիւղ և յարգանք առիս, և իշխանութեանս ստուերը այնքան աւելի հեռու է փախչում ինձանից, որքան աւելի մօտենում եմ նորան։ Ես եկայ այստեղ, հաւատալով քո ասածներին թէ՝ Ելլադայի իշխանը կտայ ինձ կնութեան իւր աղջիկը և ես տեսայ որ Աննայի գեղեցկութիւնը գերազանց է քան թէ քո բոլոր նկարագրութիւնը։ Բայց չէ՞ իմանում արդեօք նա իւր հօր ցանկութիւնը, թէ չէ կամենում հետևել նորան,—Աննան խոյս է տալի բացատրութիւնից։ Թող ասեն թէ՝ սիրահարութիւնը կոյր է, բայց հաւատացնում եմ քեզ որ՝ անկարելի է որ ես սխալվում լինեմ։

Նօննը զարմացած էր երևում. նա աշխատում էր մի որևիցէ կերպով բացատրել օրիորդի վարմունքը։ Նորա կարծիքով շատ հաւանական էր, որ պապը դեռ չէր յայտնել նորան իշխանի դիտաւորութիւնը, կամենալով առաջ իմանալ նորա զգացմունքները։ Ընդ նմին պէտք էր ի նկատի ունենալ օրիորդներին յատուկ ամօթխածութիւնը և վրդովմունքը, որը Աննան պէտք է ակամայ զգար ուղեկցելով այնպիսի երկար ճանապարհորդութեան ժամանակ մի օտարական երիտասարդ իշխանին։ Վերջապէս Նօննը խոստացաւ, որ գործի մասին հարկաւոր ակնարկութիւններ կանի Պետրալիֆասին առանց թեթևացնելու, ի հարկէ, Ռօբէրի պատիւը։

Եւ յիրաւի Նօննը իսկոյն վազեց Պետրալիֆասի մօտ և հաղորդեց նորան Ռօբէրի տրտունջը։

—Եթէ, ասաց Նօննը, վաղը կամ միւս օրը այս օտարական ասպետը կքաշէ իւր, կամ աւելի լաւ է ասել՝ մեր կրած նեղութիւնների պտուղները, միթէ այդ բանը ոչինչ օգուտ չի՞տայ մեր պետութեան։ Չկա՞յ արդեօք տեղիք կարծելու, որ եթէ Աննան կշարունակէ յամառութեամբ ցոյց տալ նորան իւր պաղութիւնը, Շամպլիտն էլ իւր կողմից կփոխէ իւր դիտաւորութիւնը նորա մասին, մանաւանդ իւր ինքնասիրութեան բաւարարութիւն տալուց յետոյ։

Պետրալիֆասը վեր կացաւ. նա բաւական խիստ զարկում էր իւր ծունկերը. նորա մազերը և մօրուքը ցցուել էին հատ հատ։ Նորա բարկութիւնը անչափ էր։

—Ի՞նչպէս, գոչեց նա, իմ սիրելի փափաքը—խաղաղութեամբ տիրել Պելոպոնէսին, Յունաստանի երկիրները միացնել իմ փեսային ձեռքի մէջ,—այդ բոլորը յանկարծ խորտակուած կլինի մի անմիտ աղջկայ յիմար յամառութեան շնորհիւ։ Ո՛չ, այդ չի՛լինի։ Աննան շատ է ի չար գործ դընում իմ քնքշութիւնը։ Գնացէք, կանչեցէք ինձ մօտ այդ անմիտ աղջիկը։

Նոնոնը գնաց և մի քանի րոպէից յետոյ ծերունու սենեակը մտաւ Աննան։ Նա նայեց իւր պապի վերայ հարցական և փոքր ինչ երկչոտ դէմքով։

—Իմ սիրելի թոռնուհի՛ս, ասաց ծերունին մի քիչ կոշտ, Անդրավիդից դուրս գալու ժամանակ ես քեզ յայտնեցի իմ ցանկութիւնը և հօրդ կամքը։ Քաղաքական շահերը, խոհեմ քաղաքականութիւնը, պահանջում են որ՝ դու ամուսնանաս Ռօբէր դը-Շամպլիտի հետ. և պէտք է քեզ ասել, որ իմ բոլոր հայրական սիրով և հոգատարութեամբ հանդերձ քո բախտաւորութեան մասին—աւելի լաւ փեսացու չէի կարող ճարել քեզ համար։ Ես խնդրեցի քեզանից աջակցել իմ դարսողութիւններին և չեմ տեսնում ոչինչ պատճառ, որով դու վարուում ես բոլորովին հակառակ իմ խորհուրդներին։

—Պա՛պս, ասաց Աննան ծիծաղելով.—իմ աջակցութիւնը բոլորովին աւելորդ էր. Ռօբէրը և առանց նշան ցոյց տալու իմ կողմից՝ սաստիկ ձանձրացնում է ինձ։

—Դու չպէտք է այդպէս խօսես մի փեսացուի վերայ, որին ընտրել են քո ծնողները, խստութեամբ նկատեց Պետրալիֆասը։

Զուարթ ժպիտը իսկոյն անհետացաւ երիտասարդ օրիորդի շրթունքից. արտասուքը ցոլաց աչքերում։

—Մի՞թէ ուրեմն անպատճառ հարկաւոր է, գոչեց Աննան, որ Եղլադայի փառաւոր իշխանի աղջիկը ինքը վազէր այդ հպարտ ասպետի մօտ և ընկնէր նորա ոտքը։ Փոխանակ քաշելու մեզ իւր ետևից և ցոյց տալու նոր հպատակներին իբրև գերիներ, փոխանակ ստիպելու մեզ ընդունել նորա քաղցր հայեացքը իբրև ողորմութիւն, միթէ նա պարտաւոր չէ՞ր, եթէ ցանկանում է ստանալ իմ ձեռքը,

գնալ մինչև աշխարհքի ծայրը — խնդրել իմ համաձայնութիւնը։

— Աղջիկս, պատասխանեց ծերունին, — քո զայրոյթը արդար և անկեղծ չէ. — դա ոչ այլ ինչ է եթէ ոչ մի առիթ։ Դու շատ լաւ գիտես, որ ուղեկցեցի Համպլիտին իւրեան արժանի պատիւը ցոյց տալու համար. ես վախենում էի հանդիպել Նորան Պելոպոնէսում։ Աւելի ևս լաւ յայտնի պէտք է լինի քեզ, որ Ռօբէրը չէ պահանջում հպարտութեամբ, որ դու ստորանաս Նորա առջև, այլ ընդհակառակն ինքն տրտնջում է, հառաչում է և ընկած է ոտքիդ առաջ։ Ես խնդրեցի քեզանից, և իրաւունք ունէի խնդրելու, մի բան — չցոյց տալ Նորան աւելորդ պաղութիւն և չքանդել դատարկ կամակորութեամբ իմ դարսողութիւնները։

— Բայց, սիրելի՛ պապս, չէ՞ որ ես ձեզ ասացի, պատասխանեց Աննան ձայնով, որ հնչում էր ուղղակի սրտից, — ես թոյլ աղջիկ եմ, անկարող մասնակցել ձեր բարձր դարսողութիւններին։ Մի՛ պահանջէք ուրեմն, որ ես լինիմ ձեր գործիքը. ես արժանի չեմ ո՛չ այդպիսի պատուին և ոչ այդպիսի անպատուութեան։ Քաղաքականութեամբ փչացած սրտերը միայն կարող են դարձրած լինել կոյր գործիք. իսկ թոյլ սրտերը, որպէս իմս է, տրորուում են բընութեան մուրճի տակ և բանի պէտք չեն գալի։

— Բռնութի՛ւն, գոչեց Պետրալիֆասը, հազիւ զսպելով իւր բարկութիւնը։ Մի՞թէ հարկաւոր է բռնութիւն գործ դնել, որ դու ստիպուիս աջակցել քո հօր փառքի մեծանալուն։ Մի՞թէ բռնութիւն է հարկաւոր, որ դու ամուսնանաս ամբողջ քրիստոնէութեան ամենաերևելի ասպետներից մէկի հետ, որը տալիս է քեզ բոլոր օգուտները, որպիսիք կարելի է միայն փափաքել, քո ոտի տակը դնելով արևելեան (Ցունաստան) պետութիւններից ամենամեծագոյնը։

— Պետութի՛ւն, ասաց Աննան, աչքերը դէպի երկինքը բարձրացնելով, — Պետութի՛ւն,... մի՞թէ բախտաւորութիւնը ուրիշ անուն չունի ձեր լեզուով։

— Լսի՛ր, Աննա՛, ասաց ծերունին մեծախորհուրդ կերպով, պէտք է վերջ դնել այդ բոլոր մանկական կամակորութիւններին։ Դու ոչինչ հիմնաւոր պատճառ չունիս հրաժարուելու Ռօբէրի առաջարկութիւնից։ Վաղը ես կյայտ-

նեմ նորան քո համաձայնութիւնը, և եթէ դու չես կամենայ շարժել քո վերայ հօրդ բարկութիւնը և սպանել ծերունի պապիդ,—դու կհաստատես իմ խօսքը։

—Պա՛պս, իմ թանկագին պա՛պս, բացականչեց Աննան թափելով ջերմ արտասուքներ,—փոխեցէ՛ք այդ հրամանը։ Աղաչում եմ ձեզանից միայն մի շնորհք—թոյլ տուէք ինձ նուիրել անձս Աստուծուն, հեռանալ մի սուրբ վանք և այնտեղ անցնել խաղաղութեամբ կեանքիս մնացած օրերը։ Ես չե՛մ կամենում փառք, ես հրաժարուո՛ւմ եմ բախտաւորութիւնից,—ես խնդրում եմ ձեզանից միայն խաղաղութիւն։ Մի՛ բացասէք ինձ, աղաչում եմ ձեզ։

Պետրալիֆասի հոգու մէջ սկսում էր արդէն բարձրանալ մի մրրիկ, այն մրրիկներից մէկը, որ այնքան աւելի կատաղի են լինում, որքան աւելի կսպում են նոցա։ Արդէն ծերունու շրթունքները դողալով պատրաստւում էին որոտալ, և ահա յանկարծ փողոցում թնդացին կեցցէներ և աղաղակներ։ Մրրիկը պաղեց զայրացած պապի շրթունքի վերայ և նորա բոլոր ուշադրութիւնը դարձաւ դէպի փողոցի աղմուկը։

Այդ իսկ րոպէին ներս վազեց Նօննը։

—Կուսակա՛լը, ասաց նա, Կուսակալը եկա՛ւ։

Պետրալիֆասը վեր թռաւ տեղից և վազեց դէպի դուռը։ Բայց նախ քան թէ դուրս կերթար սենեակից՝ նա դիմեց դէպի Աննան։ Արիւնը դարձեալ վառեց օրիորդի դեղնացած այտերը։

—Ուրեմն մինչև վաղը, ասաց Պետրալիֆասը։ Վաղը ես կիմանամ՝ թէ դու արժանաւոր դո՞ւստր ես Թէոդորի, թէ ոչ։

17.

ՁԱՐԱԲԱԽՏ ԺԱՄԱՆԱԿԱԿԷՏ։

Կուսակալի գալուստը իմանալուն պէս Ռօբէրը շտապեց դիմաւորել նորան։ Վիլլարդուինը գրկեց Ռօբէրին, ինչպէս հայրը, ջերմ շնորհակալութիւններ յայտնեց Պետ-

բալիֆասին իւր կրած նեղութիւնների մասին այնպիսի մեծ գործի համար, որպիսին էր ընդունել նորա իշխանաւորի և բարեկամի եղբօրորդուն, և քնքշութեամբ համբուրեց Անանայի ճակատը։ Յետոյ կուսակալը պատմեց թէ ինչպէս կէս գիշերից մի ժամ անցած սուրհանդակը հասել էր Լակեդեմոն Ռօբէրի նամակով, թէ ինքը թէպէտ արդէն քնած էր, բայց զարթնելով և իմանալով նամակի բովանդակութիւնը, իսկոյն վերկացաւ անկողնից, հագաւ շորերը, ժողովեց բոլոր առձեռն եղած ասպետներին և առանց հանգստանալու վազեց հասաւ Նիկլի։

Ռօբէրը շնորհակալութիւն յայտնեց Վիլլարդուինին՝ առ ինքն ցուցած այդպիսի ուշադրութեան համար, և զարմանում էր թէ ինչպէս նա այդպիսի հասակում կարողացել է պահպանել դեռ ևս երիտասարդական աշխոյժ և գործունէութիւն։ Իւր կողմից նա նոյնպէս պատմեց կուսակալին իւր ճանապարհորդութեան արկածները։

— Երևակայեցէք, ասաց նա, ես ճանապարհ ընկայ Շամպանիայից հինգ ամիս առաջ, և եթէ չլինէին այդ բոլոր արկածներն ու արգելքները, ես վաղուց Պելոպոնէսում կլինէի։

— Մինչև անգամ Պելոպոնէս հասնելուցս յետոյ, շարունակեց Ռօբէրը, մի անբախտ աստղ չէր դադարում հալածել ինձ, ես մտածեցի պտռել ձեզ, մինչդեռ դուք էլ պտռում էիք ինձ, և այս փոխադարձ որոնելու մէջ անցաւ ամբողջ քսան օր։

— Ո՛հ, որպիսի անուղղելի ձախորդութիւն, գոչեց Վիլլարդուինը։

Կուսակալի այդպիսի ձայնարկութիւնները փոքր ինչ չափազանց էին թւում ներկայ դիպուածի համար, և Շամպլիտը նկատեց այդ։

— Ի հարկէ, ասաց նա, ժամանակի այդպիսի կորուստը շատ ցաւալի է ինձ համար, բայց գոնէ Պելոպոնէսը ամենևին վնաս չկրեց դորանից—նա լաւ կուսակալի ձեռքն էր, և այդ քսան օրում Պելոպոնէսը միայն վաստակ ունեցաւ։

— Շնորհակալ եմ, պատասխանեց Վիլլարդուինը, սեղմելով Ռօբէրի ձեռքը։ Այնուամենայնիւ ես հոգով ցաւում

եմ այդպիսի անախորժ յետաձգութեան համար։ Իսկ առ այժմ չէ՞ք թոյլ տայ ինձ ներկայացնել ձեզ ինձ հետ եկած ասպետներին։

Ռօբէրը յօժարութեամբ ընդունեց այդ առաջարկութիւնը և գնաց Վիլլարդուինի ետևից փառաւոր լուսաւորուած մեծ դահլիճը, ուր սպասում էին նորան հարիւրից աւելի ասպետներ։

Մինչդեռ շարունակւում էր սովորական ներկայացնելն և ողջոյնները, Աննային մօտեցաւ հին ծանօթ Գօտիէն և յարգանքով համբուրեց նորա ձեռքը։ Ցետոյ նայելով Աննայի երեսին, նկատեց որ նորա աչքերում արտասուք էին եղած։

— Արտասո՛ւք, ի՞նչ է նշանակում այդ, ասաց ասպետը անհանգստութեամբ։

Աննան ժպտաց, ինչպէս ժպտում է մայիսի արեգակը անձրևից յետոյ։

— Մի՞թէ իմ արտասուքը հաճելի չեն ձեր տիրոջ, հարցրեց նա։

— Իմ տէրը, պատասխանեց Գօտիէն, եթէ ես դատեմ նորա կողմից իմ զգացմունքով, պատրաստ է վրէժ առնել իւր բոլոր արիւնով ձեր արտասուքի ամեն մէկ կաթիլի համար։ Բայց չէ՞ որ դորա համար հարկաւոր է ինձ իմանալ ձեր արտասուելու պատճառը։ Եթէ դուք հաւատում էք որ կարելի է թեթևացնել վիշտը, յայտնելով այն անկեղծ և հաւատարիմ սրտին, — ասացէ՛ք ինձ, ասացէ՛ք, ի՞նչ է ձեր վիշտը։

— Որպէս զի դուք յետոյ ամենքին պատմէ՞ք Աթէնքում։

— Երբ ես տեսնում եմ որ դուք վշտամաշ էք լինում, քնքշութեամբ ասաց Գօտիէն, մի՛ լինէք այդպէս խըստասիրտ, մի՛ պատասխանէք հանաքներով, այլ տուէք ձեր դառնութեան բաժակի կէսը։ Հաւատացէք ինձ, որ ես երբէք ոչոքին ոչինչ չեմ ասի։ Երբ գործը ձեր մասին է, ես երբէք չեմ դիմի ոչոքին, իմ սեփական անձնուիրութիւնը առ ձեզ բաւական է որ օգնեմ ձեզ։ Արժանացրէք ինձ ձեր վստահութեան։

— Պարո՛ն դեսպան, պատասխանեց Աննան, — ես համարում եմ ձեզ բոլորովին անարժան իմ վստահութեան,

բայց միևնոյն ժամանակ ո՛րպէս մեծ է կնոջ սրտի հակասութիւնը և ինքնավստահութիւնը։ Ես վստահանում եմ, ինքս էլ չգիտեմ ի՞նչու, հաւատալ ձեզ բոլորովին և կուրօրէն, որպէս դուք այդ ցանկանում էք։

Յետոյ, աւելի ևս ցածացնելով ձայնը, խոնարհեցնելով աչքերը և կարմրելով, աւելացրեց նա։

—Պապս պահանջում է որ ես համաձայնուիմ յանձնել ձեռքս Պելոպոնէսի նոր իշխանին։

Ասելով այդ խօսքերը՝ Աննան զգաց որ սաստիկ զարկում էր նորա սիրտը, և հասկացաւ որ իւր այդ խոստովանութիւնը աւելի մեծ նշանակութիւն ունէր քան թէ կարծում էր առաջ։

—Ուրեմն ի՞նչ, հարցրեց Գոտիէն, որի սիրտը զարկում էր նոյնպէս սաստիկ, ո՛պէս և նորա խօսակցուհու սիրտը։

—Այո՛, պատասխանեց նա, որ ես աւելի շուտով կը մեռնեմ քան թէ կհամաձայնուիմ այդ բանին։ Բայց, շտապեց աւելացնել նա ժպտալով, խնդրեմ ըստ ձեր սովորութեան, ծուռը մեկնութիւն չտաք խօսքերիս, յօգուտ ձեր տիրոջ։ Պապս սպասում է ինձանից պատասխանին վաղը։

Այդ միջոցին Վիլլարդուինը, որ ծանօթացնում էր Ռոբէրին ասպետների հետ, մօտեցաւ Գոտիէին, նա հազիւ կարողացաւ ասել Աննային կամացուկ.

—Աշխատեցէք երկու օր յետաձգել պատասխանը։

Կուսակալը ներկայացրեց իւր հիւրին Գոտիէին իբրև Աթէնքի իշխան Օտոն Դը-Լա Ռոշի դեսպան։

Ներկայացման հանդիսից յետոյ, Վիլլարդուինը հարցրեց Ռոբէրից թէ չո՞ւնի արդեօք որ և իցէ բան հաղորդելու նորան ծեր՝ իշխանի կողմից։

—Այո՛, պատասխանեց Շամպլիտը, ունիմ և կամենում եմ հաղորդել ձեզ ասպետների ընդհանուր ժողովի մէջ։

—Նիկլիում չէ կարելի կազմել այդպիսի ժողով, ասաց Վիլլարդուինը։ Թոյլ տուէք ինձ տանել ձեզ Սպարտա ուր դուք կգտնէք աւելի արժանաւոր ընդունելութիւն, և ուր այժմ, յաջողակ պատահմունքով, հաւաքուել է ապպետների մեծագոյն մասը։

Այդ նոր ճանապարհորդութիւնը, ի հարկէ, շատ ախորժելի չէր Ռօբէրին, բայց նա հասկանում էր այդպիսի առաջարկութեան հիմնաւորութիւնը։ Մանաւանդ որ այս անգամ կուսակալը նորա հետ էր և ճանապարհը կարճ էր և ապահով։

Վճռուած էր միւն օր առաւօտը գնալ Սպարտա, և ամեն կողմ ուղարկուեցան սուրհանդակներ որքան կարելի է շատ բարօններ հաւաքելու համար։

Նշանակած ժամին ամենքը ճանապարհ ընկան, և երեկոյեան դէմ Ռօբէրը մուտք էր գործում Սպարտայի պալատը, շրջապատած արքայավայել պատուով և փառքով։

Այդ օրը Աննան առանց դժուարութեան ազատուեցաւ իւր պապի հետ ունենալու բացատրութիւնից։

Միւս օրը Աւետման տօնն էր։ Կանուխ առաւօտից սուրհանդակը ձիով ման էր գալիս քաղաքի մէջ և բարձր ձայնով հրաւիրում էր բոլոր ասպետներին և երևելի մարդոց հաւաքուիլ պատարագից յետոյ մայր եկեղեցու մէջ, ուր, ասում էր, պէտք է քննուին շատ ծանր գործեր իշխանութեան վերաբերմամբ։

—Լսո՞ւմ ես, աղջիկ», ասաց Պետրալիֆասը, երբ սուրհանդակի ձայնը լսուեցաւ նորա տան մօտ, — դա քո վիճակի ձայնն է։ Մի ժամից յետոյ Ռօբէրը կստանայ ասպետներից Մօրէի իշխանութիւնը, իսկ երկու ժամից յետոյ դու կյանձնես նորան նշանադրութեանդ մատանին։

Եւ թողնելով Աննային կիսամեռ յուսահատութիւնից, Պետրալիֆասը գնաց։

Ահագին եկեղեցին, որից այժմ աւերակներն են մնացել, լուսաւորուեցաւ զէնքերի փայլմունքով։ Ասպետները հաւաքուելով հետզհետէ, բռնեցին տեղերը ըստ իւրեանց տիտղոսի և արժանաւորութեան։ Առաջին տեղում կանգնեցան կաթոլիկ եպիսկոպոսները. բոլորը ներկայ էին բացի Օլէնի եպիսկոպոսից։ Ամենից յետոյ կանգնած էին մի քանի յոյն հոգևորականներ, որոց հրաւիրել էին իբրև մի առանձին շնորհք։

Երբ ամենքը տեղաւորուեցան և տիրեց լռութիւնը, եկեղեցի մտան վերջապէս Վիլլարդուինը և Ռօբէրը միասին, ձեռք ձեռքի բռնած։ Երկուսը միասին բռնեցին ամե-

նապատուաւոր տեղը։ Կուսակալի մօտ նստեցաւ նոյնպէս Պետրալիֆասը, թէպէտ նա, որպէս և նոնները, ոչինչ ձայն չունէին այդ ժողովի մէջ, որովհետև նոքա Մօրէի իշխանութեան բնակիչներ էին։

Հանդիսի կարգադիրը, ըստ սովորութեան, յայտնեց ժողովի բացման սկիզբը։ Այդ իսկ րոպէին մի սուրհանդակ, որ եկել էր Անդրավիդից, յանձնեց Վիլլարդուինին Օլէնի եպիսկոպոսի նամակը։ Կուսակալը իսկոյն պոկեց կնիքը, և արագութեամբ կարդալով նամակը՝ նշանով կանչեց իւր որդի Գոդֆրիդին և մի քանի խօսք ասաց նորա ականջին։

Գոդֆրիդը դուրս գնաց, շտապով թամբել տուեց իւր ձին, նստեց և վազեց դէպի Անդրավիդ։ Բայց այս անցքը չգրաւեց իւր վերայ ոչոքի ուշադրութիւնը։

Գոդֆրիդի ժողովից գնալու յետոյ, Վիլլարդուինը ոտի կանգնեցաւ և դառնալով ժողովին ասաց թէ՝ հոգեկան ուրախութեամբ ներկայացնում է այդպիսի բազմաթիւ և փառաւոր ժողովին իւր լաւագոյն ընկերի և Պելոպոնէսի իշխանի եղբօրորդուն։ Յետոյ յարակցեց թէ՝ երիտասարդ բարոնը բերել է իւր հետ հրահանգ և պատուէր, որ կամենում է յայտնել ժողովին։

Այդ խօսքերը ընդունուեցան ծափահարութեամբ։ Ապա Ռօբէրը ելաւ տեղից մեծ պատուարժանութեամբ, հանեց մետաքսագործ և արծաթազարդ թղթամանից մի մագաղաթ մեծ կնքով և յանձնեց Մատիս Դը-Մոնտին կարդալու։

Այդ հրովարտակով Վիլհելմ Շամպանեանը, Դիժոնի կոմսը և բոլոր Աքայիայի իշխանը, յանձնում էր Մօրէի իշխանութիւնը իւր եղբօրորդի Ռօբէր դը-Շամպլիտին, բոլոր իրաւունքներով և արտօնութիւններով, և հրաւիրում էր ասպետներին, եպիսկոպոսներին, գլխաւոր բարոններին, ամենքին, որոնք իրաւունք ունին դրօշակ ունենալ, և տեղացի ժողովրդին ճանաչել այնուհետև իւր փոխանակ, Ռօբէրին իբրև օրինաւոր իշխան և պետ երկրի։

Այդ հրովարտակը բարձր և հասկանալի ձայնով կարդալուց յետոյ, ամենքը լռեցին և բոլորի աչքերը նայում էին Վիլլարդուինի վերայ։

Վիլլարդուինը ոտի կանգնեցաւ, խորին յարգանքով գլուխ տուեց իշխանի հրովարտակին և ասաց.

—Ազնիւ ասպետներ, իմ քաջ զինակիցներ և թանկագին բարեկամներ, դուք լսեցիք մեր իշխանի հրամանը։ Ինձ համար նորա կամքը—օրէնք է. և այդ ոչ միայն այն պատճառով, որ նա իմ աւատական տէրն է, այլ և այն պատճառով, որ կոմս դը-Շամպլիտը միշտ եղել է սրտիս սիրելին և ուսուցիչ պատերազմական գործի մէջ։ Ոչինչ բան աշխարհի երեսին չէ կարող ստիպել ինձ, որ անհնազանդ լինիմ նորա կամքին, որ ես սրբազան եմ համարում,—ոչինչը, բացի պարտաւորութեանս ձայնից, որը իմ աչքին առաւել ևս բարձր է և սրբազնագոյն, և բացի Աստուածային հրամանից, որ միայնակ ունի իրաւունք իշխել մարդկային գործերի վերայ։ Եղբայրներ և ընկերներ, իմ խիղճս տարակուսում է, և ես խնդրում եմ ձեզանից, իբրև բարեպաշտ քրիստոնեաներ և պատուոյ մարդիկ, դրէք ձեռքը ձեր կուրծքի վերայ, կոչեցէք ձեր շրթունքի վերայ ճշմարտութեան խօսքը և խելամուտ արէք ինձ ձեր խորհրդների և խրատների լուսով։ Ասացէք, ի՞նչ է այժմ իմ պարտաւորութիւնը, ո՞ր ճանապարհով պիտի գնամ, որպէս զի կենդանութեան ժամանակ արժանանամ մարդոց գովեստին, իսկ մահից յետոյ—Աստուծոյ ողորմութեան։ Աղաչում եմ նոյնպէս ձեզ, իշխան Ռօբէր. խոհականութեամբ կշռադատել հանգամանքները և սրտի անկեղծութեամբ ասել ինձ ինչ որ կթելադրէ արդարադատութեան զգացմունքը։ Դուք կարող էք բոլորովին հաւաստի լինել, որ ձեր վճիռը մեծ ծանրութիւն կլինի իմ մտքերի կշեռքի թաթի վերայ։

Քաջալերողական շշուկը պատասխան եղաւ ամեն կողմից այդ ազնիւ և խելացի խօսքերին։

Բայց կուսակալի ճառը Պետրալիֆասի վերայ գործեց վատ տպաւորութիւն, ինչպէս պողպատի քերթուածքը մարմարի վերայ։ Ծերունին ցնցուեցաւ և նստած էր ինչպէս փշի վերայ։

—Այլ տեսակ զգացմունքներ ես չէի էլ սպասում ձեզանից, եղբայր իմ և բարեկամ, պատասխանեց Ռօբէրը դառնալով դէպի Վիլլարդուինը, երբ գործը վերաբերում էր ձեր խոհականութեան և արդարադատութեան։ Ես կամենում եմ լսել ազնիւ բարոնների և ասպետների վճիռը, որպէս զի ըստ այնմ որոշեմ և իմ գործունէութեան եղանակը։

Այնուհետև, կուսակալի պատուէրով, պետական քարտուղարը հանեց ոսկեթելով բանուած թաւիշեայ թղթամանից մի այլ մագաղաթ նոյնպիսի կնքով, որպէս և առաջինը, և կարդաց հետևեալը.

—Մենք, Վիլհելմ Շամպանեան, կոմս Դիժոնեան, տէր Լա-Մարշի, իշխան ամբողջ Աքայիայի, յայտնում ենք ամենքին, սոյն հրովարտակը տեսնողներին—որովհետև Տէր Աստուած հաճեցաւ իւր մօտ կոչել Շամպանեան Լուդովիկոսին, մեր աւագ եղբօրը, մենք գնում ենք Ֆրանսիա տիրել հայրենի կալուածքներին—Դիժոնին և Լա-Մարշին, իսկ Մօրէում թողնում ենք իբրև լիազօր կուսակալ մեր Մարաջախտ Գոդֆրիդ Վիլլարդուինին, որ նա կատարի մեր փոխանակ և մեր անունով բոլոր պետական պարտաւորութիւնները և վայելէ մեր բոլոր իրաւունքները և արտօնութիւնները։ Յարակցում ենք որ եթէ մինչև մի տարի և մի օր լրանալը մենք կվերադառնանք Մօրէ—մեր իշխանութիւնը, կամ մի այլ ոք, մեր ազգական կամ օտար, կը-գայ Մօրէ մեր անունով իբրև ժառանգ և տէր իշխանութեան, կուսակալը պարտաւոր է մեզ կամ այդ ուրիշին, իբրև մեզ ի՛սկ, վերադարձնել և յանձնել երկրի տիրապետութիւնը առանց հակառակութեան։ Իսկ եթէ կանցնի մի տարի և մի օր, ոչ ոք չի գայ մեր անունով պահանջել իշխանութիւնը, յայնժամ վսեմափայլ Գոդֆրիդ Վիլլարդուինը կմնայ,—չնայելով ուրիշ հրամանին որպիսի և իցէ և որտեղից և իցէ, իբրև մեր օրինաւոր և հաստատ ժառանգ Պելոպոնէսի իշխանութեան, բոլոր իրաւունքներով և արտօնութիւններով, և նա, Վիլլարդուինը իրաւունք ունի վայելել այդ իրաւունքները և արտօնութիւնները, ինչպէս կը-վայելենք մենք ինքներս։ Այսպէս է մեր անփոփոխելի կամքը։ Տուաւ Արկադիայում, ի 10 մարտի 1209 ամի։

Աւարտելով կարդալը, քարտուղարը դրեց հրովարտակը գրքակալի վերայ, որ դրած էր եկեղեցու մէջ տեղում, որպէս զի ամեն ցանկացող ինքը կարողանար կարդալ այն։ Բայց ոչ ոք չշարժուեցաւ տեղից, ոչ ոք չէր վստահանում առաջինը խօսել այդպիսի ծանր գործի վերայ։

Ռօբէրը նստած էր իւր աթոռի վերայ ինչպէս բևեռուած. նա դեղնել էր և ահու դողով սպասում էր իւր

վիճակի որոշման։ Պետրալիֆասը շփոթուած էր՝ նա օրորվում էր իւր տեղի վերայ ինչպէս դող բռնած հիւանդ։ Իսկ ինչ վերաբերվում է Նօնին, նա կարծես թէ խեղդւում էր արեան յորդ հոսանքից դէպի կոկորդը։

Վերջապէս ինքն Վիլլարդուինը ընդմիջեց լռութիւնը։

— Դուք լսեցիք, եղբայրներ և բարեկամներ, ասաց նա, մեր միապետի երկու հրովարտակն էլ։ Իմ հոգեկան ցանկութիւնն է - հեռանալ իմ սիրելի հայրենիքը, կեանքիս վերջին օրերում վայելել հանգստութիւն, որին կարօտ է արդէն իմ ծերութիւնը, և թաղել ոսկորներս այնտեղ, ուր հանգստանում է իմ նախնիքների փոշին։ Բայց ես պատրաստ եմ կատարել պարտքս և իմ միապետի կամքը, որպիսի զոհաբերութիւններ և հարկաւոր լինին առ այդ։ Առաջ քան թէ ես, կընդունեմ որևիցէ որոշմունք վերջնական կերպով, ես սպասում եմ ձեր դատողութեան։ Ցոյս ունիմ որ դա համապատասխան կլինի իմ ցանկութեան։

Իսկոյն առաջ եկաւ Վելիգոստի բարոն Մատիս դը Մօնսը, և Ռօբէրը, որ չէր կամենում խօսել ինքը, շատ ուրախացաւ որ իւր մտերիմ բարեկամը յանձն է առնում պաշտպանել նորա իրաւունքները։

— Մեր պարտաւորութիւնն է, ասաց Մատիօն, կատարել այն, ինչ որ բացատրեց կուսակալը։ Մենք ամենքս այստեղ հաւասար կերպով կախում ունինք մեր իշխանից, և որպիսի և լինին մեր զգացմունքները կամ ցանկութիւնները մենք, իբրև պատուոյ մարդիկ և հաւատարիմ ասպետներ, չենք կարող չհնազանդուել մեր միապետի կամքին։ Եթէ ուրիշի իրաւունքները խանգարել կամ յափշտակել յանցանք է, թողնել իշխանաւորներից մեզ յանձնուած տեղը և պաշտօնը, որի համար մենք ստացել ենք և Աստուածային վաւերացումն, կլինի ամօթալի փախուստ։ Մենք այստեղ պէտք է դատենք ո՛չ ըստ բարեկամութեան, ո՛չ թէ ըստ սրտի թելադրութեան, այլ պարտաւոր ենք կշռադատել մեր միապետի կամքը և ճշտութեամբ կատարել այն։

Յետոյ ոտի կանգնեցաւ Ժան դը-Նէյլին, Մանի Բարոնը, և ասաց.

— Մենք լսեցինք մեր միապետի կամքը, որ յայտնած է շատ պարզ կերպով։ Եթէ մարտի 10-ից յետոյ մի աւուր

ընթացքում, այսինքն 11-ին մինչև արեգակի մայր մտնելը վսեմափայլ Ռոբէրը եկած և պահանջած լինէր իշխանութիւնը իբրև ժառանգութիւն, դաւաճան և երդմնազանց կլինէր նա, ով չէր ընդունի նորան իբրև իշխան և միապետ։ Բայց որովհետև մարտի 10 ից յետոյ անցել է 15 օր, այժմ մենք կլինենք դաւաճան և երդմնազանց մեր միապետի առաջ և չարամիտ յեղաշրջողներ նորա պարզ հրամանների, եթէ կընդունենք մեզ իշխան մէկ ուրիշին բացի վսեմափայլ Գոդֆրիդ Վիլլարդուինից։ Մենք իրաւունք չունինք ընտրութիւն անել,—մեր պարտքն է հնազանդուիլ։ Ինքն Վիլլարդուինը չունի իրաւունք հրաժարուելու այն պաշտօնից, որի համար նորան ընտրել են և նշանակել. ապա թէ ոչ նա ինքն էլ կլինի յանցաւոր։ Մեր իշխանն է—Գոդֆրիդ Վիլլարդուինը։

—Կեցցէ՞ Գոդֆրիդ Վիլլարդուինը։

Եւ այդ կեցցէն հնչեց յետևի շարքերից, ուր նստած էին յունաց հոգևորականները։

—Կեցցէ՛ն, իբրև արձագանգ, կրկնուեցաւ եկեղեցու բոլոր անկիւններում, և բոլոր աստիճանները իբրև մի մարդ գոչեցին.

—Կեցցէ՞ Գոդֆրիդ Վիլլարդուինը, Մորէի իշխանը։

Կուսակալը կանգնեցաւ և նշանով վերականգնեցրեց լռութիւնը։

—Ազնիւ ասպետներ, ասաց նա,—եղբայրներ և զինակիցներ, շնորհակալ եմ ձեզանից այն սիրոյ համար, որ ցուցիք ինձ, և այն վճռի համար, որ յայտնեցիք Աստուծոյ երկիւղով և ձեր խղճի մաքրութեամբ։ Ես պատրաստ եմ զոհել ամենայն ինչ առ ձեզ ունեցած սիրոյս համար. ձեզ համար ես յօժարութեամբ կհրաժարուիմ քաղցր յոյսից տեսնել երբ և իցէ հայրենիքս և վայելել հանգստութիւն կեանքիս վերջերում։ Բայց առաջ քան թէ կփարատուին իմ բոլոր երկմտութիւնները, ես պէտք է լսեմ իմ վսեմափայլ իշխանի և բարեկամի—մեծաշուք Ռոբէրի կարծիքը։ Ես յանչափս գնահատում եմ նորա կարծիքը և խնդրում եմ նորանից ասել ինձ ամեն բան կատարեալ վստահութեամբ և անկեղծութեամբ։

Ամենքը նայեցին Ռոբէրի վերայ։ Նա ոտի կանգ-

նեցաւ, դեղին, երեսի վերայ ջղային շարժմունքներով։

—Բոլոր երևելի ասպետների միաձայն զգացմունքները յայտնելուց յետոյ, ցրտութեամբ ասաց Ռոբէրը, —ինձ այլ ևս բան չէ մնում ասելու։—Ես որոշեցի վաղը վերադառնալ Ֆրանսիա։

—Ի՛մ թանկագին իշխան Ռոբէր, խոհեմ և առողջամիտ մարդու պարտաճանաչութեան զգացմունքը իշխում է նորա մտքի վերայ, և ինչ որ ինձ է վերաբերում—ես ծառայ եմ պարտաճանաչութեան։ Որովհետև բոլոր ազնիւ ասպետները յայտնեցին իւրեանց դատողութիւնը իմ պարտաւորութեանց նշանակութեան մասին, ես չեմ համարձակւում և ինձ իրաւունք չեմ համարում առանց ուշադրութեան թողնել նոցա կարծիքը։ Խնդրում եմ ձեզանից, սիրեցեա՛ք իմ եղբայր, չբարկանալ իմ վերայ, և եթէ կբարեհաճիք, մնացէք Պելոպոնէսում։ Դուք կվայելէք ինձ հետ միասին բոլոր պատիւները, ձեզ հետ կվարուեն ամենքը իբրև իմ բարեկամի և ընկերի հետ։ Ձեզ հետ միասին մենք կվերցնենք Արգոս, Կորնթոս, Մոնեմբազ և այլ ամրոցները, վերջին հակառակորդները մեր ձէնքին, և ես կյանձնեմ ձեզ իշխանութեան մի մասը, որ կպատկանի ձեր քաջութեան։

—Շնորհակա՛լ եմ ձեզանից, դուք շատ բարի էք, վսեմաշուք տէր, պատասխանեց Ռոբէրը, չկարողանալով թագցնել ձայնի մէջ մի թեթև շեշտ դառնութեան։ Խնդրում եմ ձեզանից միայն մէկ շնորհք—տուէք ինձ ձիեր մինչև Անդրավիդ, որտեղից ես մտադիր եմ ուղղակի գնալ Ֆրանսիա։ Ես խնդրում եմ այս բոլոր ազնիւ ասպետներից տալ ինձ գրաւոր կերպով իւրեանց յայտնած վճռադատութիւնը, որպէս զի ես կարողանամ ցոյց տալ այն հօրեղբօրս և արդարացնել ինձ որպէս նորա առջև, նոյնպէս և նորին մեծութեան Փիլիպպոս-Օգոստոս թագաւորի առաջ։ Թո՛ղ այդ վկայականը ապացոյց լինի, որ ես ո՛չ առանց պատճառի և ոչ անմտութեամբ թողի այն դրութիւնը, որը բռնելու համար ուղարկուած էի այստեղ, և թո՛ղ պաշտպանէ ինձ ծաղրից և արհամարհանքից։

—Ձեզ կյանձնեն, վսեմափայլ եղբայր, պատասխանեց Վիլլարդուինը, մեր ամենիս անուան կողմից գրաւոր և կնիքով վաւերացած վկայական, ուր բացատրած կլինի թէ՝

դուք վարուեցաք, որպէս պէտք էր կատարեալ և խելացի ասպետին, թէ դուք կատարեցիք ձեր բոլոր պարտաւորութիւնները առ ձեր թագաւորը և նահանջեցիք միայն երկրիս բոլոր ասպետների և կալուածատէրերի միաձայն վճռի առաջ։ Առ այդ ես կաւելացնեմ իբրև ապացուցութիւն և աւելի մեծ փաստ արդարանալու, իմ միապետի Վիլհելմ Համպանեանի հրովարտակի պատճէնը։ Իսկ ինչ վերաբերում է ձեր գնալուն, բոլոր ձիերը, թէ՛ իմ և թէ՛ ասպետների պատրաստ են ձեզ համար. և ես չեմ համաձայնուի որ այլ ոք, բացի ինձանից, լինի ձեր ուղեցոյցը իմ երկրի մէջ։

—Յետոյ, դառնալով դէպի ասպետները, աւելացրեց Վիլլարդուինը.

—Աղը, պարոններ, մենք կուղեկցենք բարձր-ազնիւ իշխան Ռոբէրին մինչև Անդրավիդ։ Որովհետև այսպիսի բարձրապատիւ հիւրը արժանացրեց մեզ իւր ներկայութեան, ես ցանկանում եմ, որ նորան ցուցած լինին բոլոր պատիւները, որ վայել են ամենաերևելի և ամենաբարձրաստիճան անձանց։ Իսկ այժմ գոհութիւն և փառս մատուցանենք Աստուծուն, որ լուսաւորեց և առաջնորդեց ձեզ ձեր վճռի մէջ, և աղաչենք նորան, որ իմաստնացնէ մեզ իւր շնորհքով և օգնէ մեզ մեր բոլոր գործերի մէջ։

Այնուհետև առաջ եկաւ Լակեդեմոնի եպիսկոպոսը և կատարեց գոհաբանութեան մաղթանք, որից յետոյ բոլոր ժողովը ցրուեցաւ ոգևորուած կեցցէների գոչումներով։

Երբ դուրս էին գնում եկեղեցուց, Պետրալիֆասը գնալով Նօնի հետ միասին ասաց Նորան ականջին։

—Ամենևին չէին ենթադրում, որ առիւծի մորթուտակ թագնուած է այդպիսի խորամանկ աղուէս։ Ի՞նչ արած, պէտք է դարձնել առագաստները քամու կողմը։

18.

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Նոր իշխանը դառն բաժակի շրթունքը քաղցրացնելու համար, մեծ խնջոյք պատրաստեց ի պատիւ Ռոբէրի, հրա-

ւիրելով և բոլոր երևելի անձինքներին ֆրանկներից և յոյներից։ Այդ նշանաւոր բարձունների և տիկինների ներկայութեամբ մեծ պատիւ և ուշադրութիւն էր ցոյց տալի Վիլլարդուինը Ռոբէրին. նորա բոլոր վարմունքը արտայայտում էր անկեղծութիւն և մտերմութիւն։ Իշխանը կամենում էր այսպիսի վարմունքով գէթ սակաւ ինչ մեղմացնել այն բոլոր անբաւականութիւնները, որ այն օրը կրեց եշխանութեան տարաբախտ ժառանգը։ Եւ ամբողջ հասարակութիւնը, որ ներկայ էր խնճոյքին, հասկացաւ նոր իշխանի միտքը, շնորհիւ այն նրբամտութեան, որ կարելի է կոչել վեցերորդ զգայարանք պալատականների և որը միջոց է տալի նոցա հասկանալ իսկոյն իշխանաւորի ցանկութիւնները և վարուել ըստ այնմ։ Վասն որոյ ամենքը նոյնպէս մեծ յարգանք և ուշադրութիւն էին ցոյց տալիս Ռոբէրին։ Այնպէս որ՝ կարելի էր կարծել թէ Հանդիսի իսկական հերոսը ոչ թէ նոր իշխանն էր, որպէս պէտք է լինէր բնականաբար, այլ ձախորդութեան Հանդիպած ժառանգը իշխանութեան, որ դատարկաձեռն վերադառնում էր իւր հայրենիքը։ Բոլոր հիւրերը շատ ուրախ էին և բաւական, բայց ոչ ոքի երեսի վերայ չէին նշմարւում այնպիսի ուրախ ժպիտներ, ինչպէս Աննայի գեղեցիկ շրթունքների վերայ. որչափ երջանկութիւն կար նորա աչքերի մէջ։

Գոտիէն ընտրեց յարմար միջոց, երբ ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում նոցա վերայ, և մօտեցաւ Աննային։

— Ցոյս ունիմ, ասաց նա, որ այլ ևս չեմ տեսնի արտասուք ձեր հրաշալի աչքերի վերայ։

— Մի՞թէ դուք այդպէս էք կարծում, հարցրեց Աննան, իբր հաստատ իմանալով թէ որպիսի պատասխան կըստանայ. մի՞թէ դուք կարծում էք, որ այժմ ինձ այլ ևս հարկաւոր չէ վախենալ այդ ձանձրալի առաջարկութիւններից։

— Գոնէ հաւատացած եղէք որ ձեր պապը այլ ևս չի ստիպի ձեզ պատասխանել նոցա։ Ինչպէս կուրախանայ իմ իշխանը, երբ կիմանայ որ ազատուել է հզօր հակառակորդից։

— Իսկոյն աւելի ևս ուրախ կլինէի, պատասխանեց Աննան, դէմքի նազելի և ծաղրաշարժ ծամածռութեամբ, եթէ կարողանայի ազատուիլ և ձեր իշխանից, և զգուշացէք որ ես չաւելացնեմ — և նորա դէմքից նոյնպէս։

Միւս օրը սկսուեցաւ ճանապարհորդութիւնը, որ նը-
ման էր մի ամբողջ զօրքի կամ մի հանդիսաւոր թափօրի
ընթացքին։

Իշխանը բոլոր ասպետների հետ, որոնք այն միջոցին
գտնուում էին Սպարտայում, ուղեկցում էր Ռօբէրին։ Պետ-
րալիֆասը և նորա թոռնուհին նոյնպէս մասնակցում էին։
Վիլլարդուինը յայտնեց Պետրալիֆասին թէ նամակ է գը-
րել իւր կնոջ գալ նոյնպէս Անդրաւիդ իւրեանց գնացող
բարեկամին պատուելու համար։

Ամենապատրաստական ուշադրութիւնը և ամենանուրբ
քաղաքավարութիւնը, որ անդադար ցոյց էր տալիս իշխա-
նը Ռօբէրին, ստիպում էին նորան մոռանալ գրեթէ իւր ա-
նախորժ դրութիւնը։ Ամենքը լաւ հասկանալով որ այդպի-
սի մեծ ցոյցերը հարկաւոր էին իբրև արտաքին դիմակներ-
կայ հանգամանքներում, և թէ, բացի դորանից, շատ էլ չէ
մնացել կրել այդ դիմակը, — մեծ յարգանք և մեծարանք էին
ցոյց տալիս գնացող իշխանին, իբր բոլորովին մոռանալով
մնացող իշխանին։

Միայն Պետրալիֆասը, սարսափով տեսնելով Վիլլար-
դուինի անսահման խորամանկութիւնը և ճարպիկութիւնը,
յիշեց մի քանի մեղքեր, որ պահուած էին իւր խղճի ան-
կիւններից մէկի մէջ և պտտում էր ամեն տեսակ յարմար
դէպք յայտնելու իւր մեծ ուրախութիւնը որ գործերը
ստացան նոր ուղղութիւն։ Ծերունուն շատ ցանկալի էր ա-
ռանձին մնալ իշխանի հետ, որպէս զի քննէր, եթէ կարելի
էր, նորա մտքերի ամենահեռաւոր անկիւնները և ստուգէր
թէ չէ՞ր ընկել արդեօք այնտեղ գէթ մի հատիկ սերմ կաս-
կածանքի այն օրից, երբ ինքը, ոչ առանց վրդովմունքի
իմացաւ կուսակալի Արկադիա գնալու պատճառը։ Բայց մը-
նալ նոր իշխանի հետ առանձին շատ դժուար էր, որովհե-
տև Վիլլարդուինը ամեն կերպ աշխատում էր միայնակ չը-
թողնել Ռօբէրին ոչ մի րոպէ իւր մռայլ մտքերի հետ։

Վերջապէս նորա ձեռքը ընկաւ մի յաջողակ դէպք առ-
այդ Կարիտէնում, ուր Հուգօ դը-Բրիէրը, այդ կալուածքի
բարօնը, առաջարկեց Ռօբէրին տեսնել հին, ամայի մը-
նացած ամրոցը, երկու մղոն հեռու ճանապարհից դուրս։
Ասպետներից մեծագոյն մասը ցանկացան մասնակցել այդ

բանին, իսկ Վիլլարդուինը, գլխացաւը պատճառ բռնելով, մնաց Կարիտէնում։ Շատ կարելի է որ նա նկատեց և հասկացաւ Պետրալիֆասի ցանկութիւնը և կամեցաւ աւելի շուտով միջոց տալ Նոլան իւր հետ խօսելու։ Թէ այսպէս և թէ այնպէս՝ Պետրալիֆասը ձեռքից չփախցրեց այդ յաջողակ դէպքը։ Նա ներողութիւն խնդրեց թէ ծերութեան և նուազութեան պատճառով չէ կարող գնալ ամրոցը տեսնելու, և ուրիշների գնալուց յետոյ հազիւ քառորդ ժամանցած գնաց Վիլլարդուինի մօտ։

—Ուղի՞ղ է որ ձերդ բարձրութիւնը հիւանդ է, ասաց նա։ Այդ լուրը սաստիկ վրդովեց ինձ, բայց յոյս ունիմ որ՝ իզուր էր վրդովմունքս։

—Ո՛չ, այդ կատարեալ ճշմարտութիւն է, ձերդ պայծառափայլութիւն, պատասխանեց Վիլլարդուինը այնպիսի ձայնով, որ կարծես թէ ձանձրացել էր կեանքից։ Այս ծեր մարմինս լուծւում է, սա ոչ այլ ինչ է, եթէ ոչ իբրև մի փշրած աթոռ։ Ես մի քանի օր ճանապարհորդեցի ձիով և բոլոր արիւնս զարկեց գլխիս, և կարծես թէ գլուխս կամենում է ճաքել։ Ինձ հարկաւոր է հանգստութիւն. ո՛չ, իմ ձեռքիս շատ թոյլ է գայիսոն բռնելու։ Դուք հիմնաւորապէս էիք ենթադրում, վսեմափայլ տէր, թէ՝ աւելի թարմ և ուժեղ ձեռքը—Ռոբէրի ձեռքը պէտք է բռնէր այն։

—Ես հիմնաւորապէս էի ենթադրում, գոչեց Պետրալիֆասը, ցնցուած. երբ և իցէ իմ գլխումս ծագե՞լ է այդպիսի միտք։ Թոյլ տուէք ինձ ասել, որ զայրոյթը պատում է ինձ. լսելով այդպիսի միտք ձեր բերանից, ես յայտնում եմ որ դա—սրբապղծութիւն է։

—Զարմանալի է, ասաց Վիլլարդուինը մեծ պարզմտութեամբ, հապա ո՞րտեղից եմ մտածել ես որ դուք ունէիք յատկապէս այդպիսի միտք։

—Ձեզ հետ պատահել է այն, պատասխանեց Պետրալիֆասը, ինչ որ երբէք ձեզ հետ չէ պատահում—դուք սխալուել էք։ Իմ մշտական մտածմունքս էր, ընդհակառակն, այն որ Պելոպոնէսին պէտք է իշխէ նա, ով նուաճել է Պելոպոնէսին։ Այն երկրին, ուր իշխանաւորները, բախտի այդ պատահական սիրելիները, միշտ պատրաստ են

դիմել իւրեանց սրի օգնութեան, յուսալով բախտի վերայ, որ բաւարարութիւն տան իւրեանց փառասէր մտադրութիւններին և խլել իշխանութիւնը նորա ձեռքից, ով առաջինը ձեռք էր բերել նորան. այն երկրին, ուր հպատակները կատաղութեամբ կրծում են իւրեանց շղթան և խոնարհում են վիզները սպասելով միայն յաջող դէպքին ոտի կանգնել և թոթափել շղթաները, այդպիսի երկրին հարկաւոր է փորձուած խելքով, բազմամեայ հմտութեամբ և փորձառութեամբ մարդ, որի աղդեցութիւնը հիմնուած լիներ վարժութեան և սովորութեան վերայ իշխել պատերազմական փառքով, նուաճած ժողովրդի սիրով և յարգանքով։ Իսկ եթէ, յանբախտութիւն այդպիսի երկրի, կառավարութեան ղեկը անցնէր ուրիշի ձեռքը, իսկոյն կբարձրանային ապստամբութեան փոթորիկները ամեն կողմից, իսկ երիտասարդ իշխանի դիւրաբորբոքութիւնը և անխոհեմ շտապողութիւնը փոխանակ փոթորիկները խաղաղացնելու աւելի ևս կսաստկացնէր նոցա, և ապստամբութիւնը անպատճառ յաղթող կհանդիսանար։ Ո՛չ, ձերդ բարձրութիւն, հաւատացէք ինձ, մնալով Պելոպոնէսի մէջ, դուք կատարեցիք մի սրբազան պարտք, իսկ հեռանալով Պելոպոնէսից, դուք կատարած կլինէիք մի մեծ յանցանք։ Ահա՛ իմ միտքս։

—Շնորհակալ եմ որ յայտնեցիք ինձ ձեր միտքը։ Այն խորիմաստ տեսութիւնը, որ դուք ունիք իմ իշխանութեան գործերի մասին, երաշխաւորում է ինձ ձեր հայեացքի ուղղութիւնը իմ վարմունքի մասին։ Այն, ինչ որ դուք ինձ ասացիք, փարատում է իմ խղճիս վերջին անհանգստութիւնները։ Ես միշտ զղջում էի որ չհետևեցի սրտիս թելադրութեան և չվերադարձայ սիրելի հայրենիքս մշակել պապերիս դաշտերը։

—Ձեր դաշտը, պատասխանեց Պետրալիֆասը, այս ընդարձակ պետութիւնն է, և դուք կմշակէք նորան, ցոնելով նորա մէջ փառքի և բարօրութեան սերմեր։ Իսկ ինչ վերաբերում է ինձ,—բախտաւոր դէպքը բերեց ինձ այստեղ այս խորհրդաւոր ժամին, որ փառաւոր է ձեր բարձրութեան համար, և երիցս օրհնեալ Պելոպոնէսի համար,—և ես յանչափս բախտաւոր ինձ կհամարէի, եթէ ինձ թոյլատրուէր աջակցել գէթ որչափ կարող էի, ձերդ բարձրու-

թեան փառքին և հզօրութեան և աւելի ևս ամրացնել ձեզ վերայ այն, ինչ որ վաստակուած է ձեր ձեռքով։

— Ի՞նչպէս, գոչեց Վիլլարդուինը, ուրախութեան կերպարանք տալով իւր երեսին, այդ առաջարկութիւնը անգնահատելի է ինձ համար. չգիտեմ անգամ ի՞նչպէս յայտնեմ ձեզ իմ շնորհակալիքս։ Անհամբերութեամբ ցանկանում եմ լսել ձեր բացատրութիւնը։ Ասացէք ուրեմն, ո՞րպիսի օգնութիւն կամ աջակցութիւն կարող եմ սպասել ձեզանից։

— Ձեր իշխանութիւնը շատ հաստատ է և ամուր այստեղ, պատասխանեց Պետրալիֆասը, նա հիմնուած է բարոնների յարգանքի և ժողովրդի սիրոյ վերայ։ Բայց դորանից չէ հետևում որ ձեր իշխանութիւնը չէր կարող աւելի ևս հզօրանալ։ Ասպետների մէջ, որք բաժանեցին իւրեանց մէջ Ալէքսիանոս կայսեր ժառանգութիւնը, կան ոչ սակաւ անձինք, որք վայելում են իշխանութիւն, գրեթէ հաւասար ձերին։ Իսկ այնպիսի ժամանակներում, որպէս մերն է, երբ ոչինչ չկայ ամուր և հաստատ, աւելի լաւ կլինէր, որպէս ինձ թւում է, աւելի հզօր լինել հարևաններից, քան թէ հաւասար նոցա։ Կայ միջոց հասնել այդպիսի նպատակին, և այդ միջոցն է — միաբանութիւն։ Ձէ՞ք կարծում արդեօք, ձերդ բարձրութիւն, որ եթէ ձեր բազուկը հզօր է այժմ, միացած Ելլադայի իշխանի բազկի հետ — կլինի անյաղթ։

— Ո՛հ, ի հարկէ, պատասխանեց Մօրէի նոր իշխանը։ Եթէ դուք ինձ առաջարկում էք դաշնակցութիւն ձեր փեսայ Թէոդորի հետ, — ընդունում եմ այդ հոգեկան ուրախութեամբ և համարում եմ այդ ինձ համար ամենամեծ բախտաւորութիւն։

— Բայց, յարակցեց Պետրալիֆասը, ամենաքաղցր ձայնով և տալով իւր աչքերին ամենաթափանցող հայեացք, — դաշնակցութիւնները, որպէս և ամենայն շինուածք մարդկային ձեռքով կատարած, յաճախ լինում են շատ անհաստատ։ Իսկ մեր դաշնակցութիւնը, եթէ դուք կամենում էք, կարող ենք շաղկապել ադամանդեայ կապերով, կամ աւելի լաւ ասել կապերով, թէպէտ ծաղկահիւս, բայց ոչ նուազ ամուր։ Ես երբէք չեմ ծածկել իմ յարգանքը դէպի քաջ Գոտֆրիդը — ձեր որդին։ Ելլադայի իշխանը չէ կարող ցանկալ աւելի յարմար փեսացու իւր աղջկայ համար։ Եթէ ձերդ

բարձրութեան հաճելի լինէր համաձայնուիլ, ձեր զաւակների ամուսնական կապը կդառնար հիմն անսասանելի դաշնակցութեան ծնողների մէջ։

—Ի՛նչպէս, դուք առաջարկում է՞ք Աննայի ամուսնութիւնը իմ որդի Գոդֆրիդի հետ։

—Այո։ Մի՞թէ իմ առաջարկութիւնը ձեզ հաճելի չէ։

—Բոլորովին ընդհակառակն, դա հաճելի է ինձ մինչև վերին աստիճան. բայց դա միևնոյն ժամանակ ինձ զարմացնում է։

Զարմացնում է՞ ձերդ բարձրութիւնը։ Չեմ հասկանում։...

—Որովհետև, պատասխանեց Վիլլարդուինը, չէ՞ որ խօսք կար Աննայի ամուսնութեան մասին Ռօբէրի հետ։

—Ռօբէ՞րի հետ, փնթփնթաց քթի տակ Պետրալիֆասը և ցնցուեցաւ։

—Ի հարկէ Ռօբէրի հետ, պատասխանեց Վիլլարդուինը։ Ա՛խ, այժմ հասկացայ թէ ինչո՞ւ ես կարծում էի որ դուք ցանկանում էիք իմ հեռանալը Պելոպոնէսից և Ռօբէրի իշխելը։ Չէ՞ որ դուք Նոննին ուղարկեցիք Ֆրանսիա որ շտապեցնէ Ռօբէրին գալ այստեղ և կամենում էիք առաջարկել նորան Աննայի ձեռքը։

—Նոննի՞ն, փսփսաց Պետրալիֆասը ապշած և աչքերը աչ ու ձախ մոլորեցնելով։

—Այո, ի հարկէ։ Մի՞թէ դուք մոռացե՞լ էք որ ասպետական մենամարտութեան օրը Նոննը եկաւ Լակեդեմոն, Վլաքի հովուի շորերով կերպարանափոխուած, հաղորդեց ձեզ որ Ռօբերը համաձայն է ձեր առաջարկութեան։

Մահագոյն դեղնութիւնը ծածկեց ծերունու երեսը, բայց նա շուտով սթափուեցաւ և, կարծես թէ վայրկենական արագութեամբ մի բան վճռելով, մօտեցաւ Վիլլարդուինին։

—Այժմ ես տեսնում եմ, ասաց Պետրալիֆասը, որ մաքառել ձեզ հետ մտածել անգամ անօգուտ է։ Մեր ոյժերը հաւասար չեն, ես հասկանում եմ այդ։ Դիտաւորութիւն չունիմ հարց ու փորձ անելու թէ ինչպէս ձերդ բարձրութիւնը կարողացել է թափանցել իմ մտքի ամենածածուկ ծալքերը։ Ես յայտնում եմ ինձ յաղթուած և չեմ կամենում այլ ևս կեղծել. դիմակը աւելորդ է, և նորանով

ես միայն ծիծաղելի եմ։ Այո՛, ուղիղ է, ես ուղարկեցի Նոննին Ֆրանսիա և առաջարկեցի Աննայի ձեռքը Ռոբէրին։ Ձեմ սկսի արդարացնել իմ նախկին վարմունքը։ Ձերդ բարձրութիւնը գիտէ ուրիշներից աւելի լաւ, որ թագաւորների յարգանքը դէպի մի որոշեալ դրութիւնը շատ անգամ ստիպում է լսել սրտի ձայնին։ Բայց ես պատրաստ եմ ներկայացնել ձեզ երաշխաւորութիւն ապագայի համար և ես կաշխատեմ կատարել այդ։

Եւ փոքր ինչ կանգ առնելուց յետոյ Պետրալիֆասը շարունակեց.

—Բայց առաջ խօսենք անցեալի վերայ։ Ես դեսպան ուղարկեցի Ռոբէրի մօտ և բանագնացութիւններ բացի նորա հետ ընտանեկան կապերի մասին.—այդ նշանակում է որ մինչդեռ հայրական զգացմունքը թելադրում էր ինձ յօգուտ Գոտֆրիդի, պետական մարդու խոհեմութիւնը բարշում էր ինձ դէպի Ռոբէրը։ Այժմ այդ երկու զգացմունքն էլ կենդրոնանում են, բարեբախտաբար, միևնոյն առարկայի վերայ։ Հետևաբար, իմ եռանդս կրկնապատկուել է։ Փոխադարձ օգուտ—միթէ կա՞յ որևիցէ բան այսպիսի երաշխաւորութիւնից աւելի հաստատ բան։

—Իսկ եթէ և կայ, պատասխանեց Վիլլարդուինը ժըպտալով, այնու ամենայնիւ փոխադարձ օգուտների երաշխաւորութիւնը—ամենահաստատներից մէկն է։ Նորա մէջ կայ միայն մի պակասութիւն—նա քակւում է երբ չունի իւր տակ հաստատ հիմք։

—Այդ ճշմարիտ է, ասաց Պետրալիֆասը, բայց ձեր դատողութիւնը յարմար չէ ներկայ հանգամանքներին։ Բարձրագոյն իշխանութիւնը այժմ ամբողջապէս պատկանում է ձեզ և ձեր ժառանգներին։ Ուրեմն օգուտը նոյնպէս հաստատ է և յարատև, ինչպէս և նորանից հետևող երաշխաւորութիւնը։

—Կարելի է, պատասխանեց Վիլլարդուինը։ Բայց ձերդ վսեմափայլութիւնը բոլորովին իրաւամբ ասաց այս բոպէիս թէ—իշխանութեանս սպառնում են մրրիկներ, որք կարող են ամեն բոպէ բարձրանալ չորս կողմից։ Գիտէք դուք արդեօք, օրինակ, որ մի քանի օր առաջ ես գտել եմ ապստամբութեան մի հետք, բայց դեռևս չեմ յաջողել յայտ ածել

նորան։ Եթէ այդ ապստամբութիւնը կամրանայ և կունենայ գէթ թեթև յաջողութիւն, օգուտը կարող է ստանալ այլ ուղղութիւն։

Ասելով այդ խօսքերը՝ Վիլլարդուինը նայում էր Պետրալիֆասի երեսին զննական աչքով. բայց նորա շրթունքից չէր հեռանում ժպիտը և մեղմացնում էր նորա հայեացքը։

Մի քանի բոպէ ծերունին չէր խօսում ոչ մի խօսք, կարծես թէ ընկղմել էր ծանր մտածմունքների մէջ։ Վերջապէս, գլուխը թափ տալով ասաց.

—Փորձել հասկանալ ձեր մտքերը, երբ դուք չէք կամենում յայտնել նոցա, անմտութիւն կլինէր իմ կողմից։ Եւ որովհետև ձեզ, թուի թէ, մէկ երաշխաւորութիւնը բաւական չէ, ես կարող եմ առաջարկել և երկրորդը։ Այդ երաշխաւորութիւնը կարող է ապահովացնել ձեզ ապագայում և քաւել անցեալը, որպիսի և լինէր նա, կամ որպիսի և համարէիք դուք նորան։

—Դուք կարող էք առաջարկել ինձ ո՞ւրիշ երաշխաւորութիւն։ Ո՞րպիսի, հետաքրքրութեամբ հարցրեց Վիլլարդուինը։

—Ահա՛ որպիսին, պատասխանեց Պետրալիֆասը, հանելով ծոցից մի թուղթ և յանձնելով այն իւր խօսակցին։ Դուք ասում էք թէ՝ գտել էք մի հետք յոյների ապստամբութեան, բայց դեռ ևս ոչինչ չէք յայտ ածել։ Այժմ բոլոր ապստամբութիւնը ձեր ձեռքին է։ Դա ապստամբողների անունների ցուցակն է։

—Ապստամբողների, գոչեց իշխանը, և կայծակ փայլեց նորա աչքերին։

Նա շտապով բացեց թուղթը և աչքերով վազելով կարդաց ցուցակը։ Առաջ նշմարւում էր նորա վերայ մի ծանր տպաւորութիւն։ Յետոյ, շարունակելով կարդալը, ասաց։

—Վուտսարո՞ս։ Դժոխքի՞ց է դուրս եկել, ի՞նչ է, ինձ հետ պատերազմելու համար... Եւ այդ բոլորը իմ թշնամիներն են եղել։ Կարծում էի թէ հնազանդեցրել էի նոցա։ Ուրեմն, պէտք էր փշրել նոցա։ Բայց,—յարակցեց Վիլլարդուինը փոքր ինչ մտածելուց յետոյ,—ո՞վ կարող է հաստատել, որ այս ցուցակը ճիշտ է։

—Ապացուցութիւնը ձեր ձեռքին է։ Հինց որ դուք երեք գիշեր շարունակ խարոյկներ կվառէք Օլէնի սարի գագաթին, Անդրավիդից բարձր, երրորդ գիշերը դուք կարող էք գտնել այդ ցուցակի մէջ յիշածներին միասին ժողոված։

—Ա՛խ, ասաց Վիլլարդուինը, աւելորդ չէ ինձ իմանալ այդ։ Շնորհակալ եմ ձեզանից այդպիսի թանկագին տեղեկութեան համար. ես կլինեի ամենաանշնորհակալ և ապերախտ մարդկանցից մէկը, եթէ չճանաչէի, որ դուք ներկայացրիք ինձ ապացոյց ամենաանկեղծ մտերմութեան։

—Եւ ուրեմն այդ մտերմութիւնը կարող է ամրապնդուել մեր զաւակների ամուսնութեա՞մբ։

—Ոչ միայն կարող է, այլ պէտք է ամրապնդուի, պատասխանեց իշխանը։—Դուք այս րոպէիս խօսում էիք օգտի մասին. պարզ է, որ այդ բանը շատ օգտակար է ինձ համար։ Ինձ հաւասար և իմ բոլոր հարեւանների մէջ ո՞րին կարող եմ գտնել աւելի հզօր և հռչակաւոր քան թէ Ելլադայի իշխանը։ Եւ իմ որդիս կարո՞ղ է միթէ գտնել աւելի գեղեցիկ կին, քան թէ Թէոդորի չքնաղ դուստրը։ Անդրավիդ հասնելուն պէս ես իսկոյն կխօսեմ Գօդֆրիդի հետ։ Ես չեմ կարող ստիպել նորան ամուսնանալ հակառակ իւր կամքին, բայց երբ խօսքը Աննայի մասին է, նորա գեղեցկութիւնը կներգործէ ինքն ըստ ինքեան ամեն ստիպողութիւնից աւելի սաստիկ։

—Բախտաւոր կլինի փեսայիս համար այն օրը, երբ նա կգրկէ Գօդֆրիդին իբրև իւր որդի, ասաց Պետրալիֆասը։

—Ես վաղուց նայում եմ Աննայի վերայ իբրև իմ ամենասիրելի աղջկան վերայ, պատասխանեց Վիլլարդուինը։

—Այդ ամուսնութեան շնորհիւ, շարունակեց Պետրալիֆասը, դուք երկուսդ էլ կլինիք ահարկու Կ. Պոլսի թագաւորութեան համար։

—Աւելի լաւ է ասէք կլինինք նորա համար ամենահաստատ պատնէշ, ժպտալով պատասխանեց իշխանը։

Այդ իսկ րոպէին փողերի ձայնը յայտնեց Ռոբէրի և իւր ուղեկիցների վերադարձը։ Պետրալիֆասը շտապեց հեռանալ։

Հազիւ թէ Պետրալիֆասը դուրս գնաց սենեակից,

Վիլլարդուինը արագութեամբ պատռեց ծերունուց ստացած թղթի վերին մասը, յետոյ ծալեց այն և պահեց ծոցի մէջ։

19.

ՆՈՐ ՀԻՒՐ։

Ճանապարհորդութիւնը շարունակւում էր էլի երեք օր։ Երբ երրորդ օրը, ճաշից յետոյ, մտան Անդրավիդ, այդ քաղաքի մէջ կար մեծ շարժողութիւն, մի տեսակ տօնական տեսարան, անսովոր ոգևորութիւն։ Հազիւ մի քանի հարիւր քայլ առաջ գնացած, քաղաքագլուխը ներկայացաւ դիմաւորելու իշխանին և նորա ուղեկիցներին։

Առաջին պաշտօնական ողջոյններից յետոյ, Վիլլարդուինը ասաց քաղաքապետին։

— Դուք ինձ չբացատրեցիք թէ ինչո՞ւ ձեր քաղաքում մի տեսակ ուրախութիւն է կատարւում։ Ես չգիտէի, որ այս միջոցին տօնավաճառ է լինում այստեղ։

— Տօնավաճառ չունինք այստեղ, պատասխանեց քաղաքապետը։ — Երևելի տիկնոջ գալը ոտի շարժեց ամբողջ քաղաքը։

— Երևելի տիկնո՞ջ, ասաց Վիլլարդուինը զարմացած։ Ի՞նչ երևելի տիկին է եկել։

— Իշխանուհին Կ. Պոլսից։

— Այստեղ է եկե՞լ իշխանուհին Կ. Պոլսից։ Հապա ինչո՞ւ տեղեկութիւն չհաղորդեցիք ինձ, պարոն։

Քաղաքապետը նայեց Վիլլարդուինի աչքերին. յետոյ պատասխանեց.

— Ներեցէ՛ք ինձ, ձերդ բարձրութիւն. ես տեղեկութիւն ուղարկեցի ձեզ իսկոյն, բայց իմ սուրհանդակը, որ պէտք է գնար ուղղակի Սպարտա, երևի չկարողացաւ հասնել ձեզ իւր ժամանակին։

— Ո՞վ է այդ իշխանուհին Կ. Պոլսից։

— Իշխանուհի Ագնէս դը-Կուրտենէ։

— Ագնէս դը-Կուրտենէ, ասաց Վիլլարդուինը, մի բան

մտաբերելով. յետոյ աւելացրեց, կարծես թէ ինքն իրան խօսելով.

—Ագնէս.... այո՛, դա երևի կայսեր քրոջ աղջիկն է, գուցէ Նորա Յօլանդա քրոջ աղջիկը։

—Ճիշտ այդպէս է, ձերդ բարձրութիւն.

—Բայց, ի՞նչպէս է նա եկել այստեղ, ինչո՞ւ, ո՞ւմ հետ։

—Նա եկել է կայսերական նաւատորմիղի երեք նաւով։

—Այժմ ես հասկանում եմ, ասաց Վիլլարդուինը, դառնալով դէպի Ռոբէրը։ Ահա՛ այդ խսկ երեք նաւի մասին տեղեկութիւն տուին ինձ, երբ ես Բլիզիրումն էի։ Ես կարծեցի թէ դուք էք գալիս նոցա վերայ, և այդ պատճառով գնացի Կալամատ։

Յետոյ, դառնալով դէպի քաղաքապետը, իշխանը հարցրեց։

—Ո՞վքեր են իշխանուհու ուղեկիցները։

—Մի եպիսկոպոս, պատասխանեց քաղաքապետը, և երկու ալեզարդ վարդապետներ տաճարականների ուխտից, երևելի մարդիկ կայսերական պալատի մէջ, և բաղմաթիւ ասպետներ։

—Բայց, ի՞նչ է նշանակում այդ ճանապարհորդութիւնը։ Ո՞ւր է գնում իշխանուհին։ Պարո՛ն, արդեօք դուք չգիտէ՞ք։

—Այդ բանը գաղտնիք չէ ոչ ոքի համար։ Նորին բարձրութիւնը գնում է Սպանիա պսակուելու Նորին մեծութեան՝ Արրագոնիայի թագաւորի հետ։ Բայց հակառակ քամիները և նաւերի վնասուիլը, ստիպել են նորան ափը դուրս գալ Պոնտիկոյում։

—Տարօրինակ բաներ էք պատմում, պարոն քաղաքապետ։ Բայց ասացէք, ցուցա՞ծ են նորան այստեղ բոլոր արժանավայել պատիւները ըստ նորա բարձր ծագման և դրութեան։ Իմ որդիս, Գոդֆրիդը, պէտք է գնար Բլիզիրի և Անդրավիդ զանազան գործերով. ա՞յստեղ է նա և կատարե՞ց արդեօք հիւրասիրութեան բոլոր պարտաւորութիւնները իշխանուհու վերաբերմամբ։

—Նորին վսեմափայլութիւնը եկաւ այստեղ երեք օր առաջ, որ գնար այստեղից Բլիզիրի։ Բայց, իմանալով իշխանուհու գալը, մնաց այստեղ և գտնւում է միշտ նորա մօտ։

—Բախտաւոր դասաւորութիւն հանգամանքների, բացականչեց Վիլլարդուինը։ Բացի սորանից՝ ես հրաւիրեցի իմ կին Զապէլին գալ Անդրավիդ, որովհետև մտադիր եմ մնալ այստեղ մի քանի ամիս։ Եթէ նա գար շուտով, ես կարող էի աւելի լաւ ցոյց տալ թէ՝ որպէս եմ գնահատում այն բարձր պատիւը, որը ուղարկել են մեզ բամին և բախտի բերմունքը։

—Պելոպոնէսի վսեմաշուք իշխանուհին շնորհ բերեց մեզ մօտ այսօր առաւօտը, պատասխանեց քաղաքապետը։

—Եկա՛ւ, ուրախ ուրախ գոչեց Վիլլարդուինը։ Դէ՛, փա՛ռք Աստուծոյ։ Ուրեմն մենք կարող ենք ընդունել մեր թանկագին հիւրին—իշխանուհուն ինչպէս հարկն է, և դուք կօգնէք մեզ ձեր կողմից, պարոն քաղաքապետ։

—Բարեբախտ նշան, ասաց կամացուկ Պետրալիֆասը Վիլլարդուինի ականջին։ Բախտը ուղարկում է ամենաերևելի վկաներ մեր զաւակների ամուսնական միաւորութեան համար։

Վիլլարդուինը, լռիկ, մտերմաբար սեղմեց նորա ձեռքը։

Երբ հասան քաղաքի դռներին, Վիլլարդուինը դարձաւ դէպի քաղաքապետը.

—Ա՛խ, ես մոռացայ հարցնել ձեզանից—Օլէնի եպիսկոպոսը Անդրավիդո՞ւմ է արդեօք։

—Այո՛, պատասխանեց նա, էլի մի անգամ զննական աչքով նայելով նորա վերայ.—նա այստեղ է։

—Ուրեմն, մի մարդ ուղարկեցէք յայտնելու նորան, որ ես եկել եմ և ցանկանում եմ տեսնել նորան։ Աշխատեցէք պատրաստել ամեն բան Անդրավիդում որքան կարելի է շքեղ և փառաւոր կերպով։ Ես այս ունիմ վաղը ընդունել այստեղ կայսեր քրոջ աղջկան։

Ցետոյ Վիլլարդուինը մտաւ իւր պալատը մի քանի նշանաւոր մարդոց հետ։ Ներկայացնելով նոցա Զապէլին, որը ընդունեց Աննային անկեղծ ուրախութեամբ և մայրական քնքշութեամբ, Վիլլարդուինը թողեց Ռօբէրին նորա համար առանձին պատրաստած սենեակների մէջ։ Պետրալիֆասը իւր թոռնուհու հետ գնացին իւրեանց սեփական տունը, որ լաւ հանգստանան։

—Սիրելիներս, ասաց Ռօբէրը Նոննին և Դը.Մոնսին, երբ փակուեցաւ իւր սենեակի մէջ, ուրեմն ես գնում եմ

ինչով որ եկայ։ Իմ փառասիրական ցնորքները, բարձր դարսողութիւնները, ցրուեցան ինչպէս խարուսիկ ստուեր։

Յետոյ նա շարունակեց.—Ասպետը իւր հետ ունի իւր փառքը. նորա ապագայ յաջողութիւնը իւր նիզակի սուր ծայրի վերայ է։ Մինչև որ կան աշխարհիս երեսին քրիստոնէութեան թշնամիներ, քաջերը դեռ շատ դէպք կունենան փառք ստանալ։ Ինձ վախեցնում է միայն ծաղրանքի թունաւոր լեզուն։ Ֆրանսիայում դա ամենասարսափելի զէնքն է։ Եկայ ինչպէս իշխան և թագաւոր, գնում եմ ինչպէս ծեծ կերած աշակերտ դպրոցի—ուրպիսի հարուստ նիւթ կլինեմ ես օձ պալատականների ծաղրանքին։ Կանայքը կխօսեն իմ վերայ արհամարհական ժպիտով, և գուցէ իմ անունս կընկնի աշուղների երգերի մէջ։

—Մի՛ երևակայէք ձեզ այդպիսի մռայլ կերպարանքով ձեր դրութիւնը, ասաց Դը-Մոնսը։ Դուք եկաք Պելոպոնէս հնազանդելով ձեր երևելի հօրեղբօր կամքին. դուք արիք բոլորը, ինչ որ պահանջում էր խոհեմութիւնը և պարտքը։ Հանգամանքները, անկախ ձեր կամքից, ուշացնում էին ձեզ ճանապարհին։ Եւ այնու ամենայնիւ դուք մինչև վերջը հնազանդում էիք կոմսի, ձեր հօրեղբօր, օրէնքին, և պատուի զգացմունքից շարժուած՝ դուք վեհանձնութեամբ և անտրտունջ տարաք գահի կորուստը, որ ձեզ էր նշանակած։ Ոչ թէ ծաղրանքով այլ գովասանքով պէտք է ամենքը խօսին ձեր վարմունքի մասին։

—Դուք մխիթարում էք ինձ իմ տրտմութեան մէջ, պատասխանեց Ռօբէրը,—դուք կամենում էք ոգի տալ ինձ, իմ թանկագին Մատիօ։ Այո՛, պէտք է խոստովանել, որ անյաջող հանգամանքները ուղեկցում էին ինձ բոլոր ճանապարհիս ընթացքում։

—Արդարև, ասաց Նոնը, ըստ երևութին բաւական կորցրած լինելով իւր նախկին անհամբերութիւնը և հոգեկան վատ դրութիւնը,—արդա՛րև, կարծես թէ մի չար աչք կախարդել էր մեզ։ Բնութիւնը և բախտը միշտ հակառակ էին մեր ձեռնարկութիւններին, մինչդեռ մարդիկը բարեմիտ էին լինում դէպի մեզ և պատրաստ ամեն կերպ օգնել մեզ։ Չէ կարելի ուրանալ որ Վենետկի Դոժն անգամ այնպիսի ուշադրութիւն ցոյց տուեց մեզ, որպիսին ցոյց է տալիս շատ

քիչ թագաւորներին։ Կօրֆուի փոխարքան վնասեց մեզ իւր աւելորդ եռանդով, իսկ Վիլլարդուինը սար ու ձոր էր շափում, աշխատելով հանդիպել ձեզ նշանակած ժամանակից առաջ։ Բայց, երևի թէ կեանքի դպրութեան մէջ գրած էր, որ այդ տեսութիւնը ուշանար։ Իսկ երբ այդ պատահեցաւ, Վիլլարդուինը չէր կարող ի հարկէ, առանց քանդելու հնազանդութեան պարտքը, հրաժարուիլ այնտեղից, որ նշանակել էր նորա համար նորա միապետը։ Տարօրինա՛կ և տարաբա՛խտ դասաւորութիւն հանգամանքների։

— Բայց, ասաց դը-Մոնսը, աչքով անելով Ռօբէրին, — եթէ մէկ ձեռնարկութիւնը չյաջողեցաւ, մնում է միւսը, անկախ առաջինից։ Եւ այդ ձեռնարկը կարող է ի զուր չհանել ձեր Պելոպոնէս գալը։

— Իմ սիրելիս, պատասխանեց Ռօբէրը, գլուխը շարժելով, հանգամանքների դասաւորութիւնը, ինչպէս կոչում է Նօնը, կամ որպիսի անուն և տաք նոցա, — տուին ինձ իւրեանց օգուտը։ Ես սովորեցի աւելի հեռատես լինել։ Ես արդէն ասացի ձեզ, որ վախում եմ ծաղրելի դառնալ, էլ ինչու կենթարկեմ ինձ վտանգին աւելի ևս ծաղրելի լինելու համար։ Եթէ Պելոպոնէսը չկամեցաւ ընդունել ինձ իւր իշխան, Աննան էլ չի կամենայ ի հարկէ լինել իմ կինը։ Իշխանութիւնը ընտրեց իւր համար իշխան, գուցէ և Աննան ընտրել է իւր համար փեսացու։ Լա՛ւ է ամենքին թողնել հանգիստ։ Զանազանութիւնը միայն այն կլինի, որ դուք այլ ևս չէք ուղեկցի ինձ։

— Ի՞նչպէս, դուք չէք կամենում թոյլ տալ մեզ, որ ուղեկցենք ձեզ, գոչեց դը-Մոնսը։

— Ո՛չ, իմ բարեկամներս, ձեր ապագայ յաջողութեան ճանապարհը պիտի բացուի այստեղ, և ոչինչ պատճառ չը-կայ արգելք լինելու այդ բանին։ Ես չունիմ ոչ մի փոքրիկ անկիւն արեգակի տակ, որ կարողանայի առաջարկել ձեզ։ Դուք երկուսդ էլ պէտք է մնաք այստեղ, — դուք Նօնն, Պետրալիֆասի հետ, իսկ դուք, դը Մոնս, Վիլլարդուինի հետ։ Ես ձեզ երկուսիդ համար էլ կմիջնորդեմ նոցա։ Եթէ օգտակար կարող եմ լինել ձեզ, ստորութիւն չեմ համարի ինձ խնդրել նոցանից ձեզ համար։

Դը-Մոնսը բռնեց Ռոբէրի ձեռքը, գրեթէ մօտեցաւ նորան շրթունքով և ասաց ամենաանկեղծ ձայնով.

—Թէպէտ իշխանական թագը չընկաւ ձեր ձեռքը, բայց դուք այնու ամենայնիւ ունիք իշխանական սիրտ, և այդ ոչ ոք չէ կարող, ի հարկէ, խլել ձեզանից։

Մինչդեռ Ռոբէրի սենեակում կատարւում էր այս խօսակցութիւնը, Օլէնի սրբազան եպիսկոպոսը եկաւ Մորէի իշխանի մօտ։

—Դէ՛, սիրելի Բենուա, ասաց Վիլլարդուինը,—դուք, ի հարկէ, գիտէք արդէն բոլորը, ինչ որ մեզ է վերաբերուս...

—Ինձ ոչինչ հարկաւոր չէր իմանալ, ասաց երիտասարդ եպիսկոպոսը,—ես բոլորը նախատեսել էի։

—Ասացէք ուրեմն, ի՞նչպէս են գնում այժմ մեր գործերը։ Կա՞յ արդեօք գէթ որպիսի և ցէ նշոյլ յուսոյ։

—Նշո՞յլ, ի՞նչ էք ասում, կայ ամբողջ արեգակ, ասաց Բենուան յաղթական դէմքով։—Այդ իմ խորհուրդն էր և ես ունէի առ այդ հնարողի բոլոր սէրը։

—Բայց ասաց Վիլլարդուինը, յոյս ունի՞ք արդեօք, որ կայսրը չի զայրանայ, և թէ երիտասարդ օրիորդի հայրը, որ ամենամերձաւոր անձն է գահին և երևի թէ նորա ժառանգ, վրէժխնդիր չի՞ լինի մեզանից դորա համար։

—Կայսրը, պատասխանեց Օլէնի եպիսկոպոսը, շատ լաւ գիտէ, որ այն, ինչ որ կատարուել է, այլ ևս չէ կարող փոխուել, և թէ նորան աւելի օգտաւէտ է որ Մորէի իշխանը լինի նորա բարեկամ, քան թէ թշնամի։ Նա աղմուկ կբարձրացնէ, կսպառնայ,—այդ անհերքելի է, բայց հէնց որ կանցնի բարկութեան առաջին բորբոքմունքը, անխուսափելի հարկաւորութիւնը կպաղեցնէ նորան։ Կայսրը կհասկանայ այն ժամանակ, որ սխալ քաղաքականութիւնը ստիպել է նորան սխալ քայլ անել, և թէ ճակատագիրը աւելի խոհեմ է, քան թէ նորա խորհրդատուները։ Իսկ եթէ կայսրը, Աստուած երկար կեանք պարգևէ նորան, կմեռնի, Ռոբէր դը-Կուրտենէն երևի թէ ընտրուած կլինի նորա ժառանգ։ Այն ժամանակ նոր կայսրը փոխանակ անօգուտ բարկութեան, կբանայ իւր գիրկը և հայրաբար կգրկէ իւր աղջկան և փեսային։ Ցամենայն դէպս, Աստուծուց մեզ տուած է միայն ներկան, իսկ ապագան—նորա

ձեռին է։ Անենք ինչ որ պէտք է, կամ, գոնեա, ինչ որ կարող ենք անել։ Մնացածը Աստուծոյ կամքիցն է կախուած։

—Աստուծոյ պաշտօնեայ, ասաց Վիլլարդուինը, դուք ինձ համոզեցիք։ Ձեմ ծածկում սակայն, որ իմ ցանկութիւնս համոզուիլ ներգործեց այնքան, որքան և ձեր ճարտասանութիւնը։ Բայց դուք ինձ չասացիք թէ՝ ինչի՞ վերայ էք հիմնում ձեր յոյսերը. գուցէ այդ միայն միտքը հնարողի ինքնասիրութի՞ւնն է։

—Ո՛չ, ձերդ բարձրութիւն. ես ունիմ շատ հիմունքներ։ Նախ և առաջ՝ Ագնէսը ունի կանացի սովորութիւն գրաւել մարդիկ—մի գեղեցիկ պակասութիւն. թակարդներ դնելով, որսորդը շատ անգամ ինքն է ընկնում նոցա մէջ։ Երկրորդ՝ նորա ատելութիւնը դէպի իւր առաջիկայ ամուսնութիւնը։ Երրորդ՝ Գոդֆրիդի այրական գեղեցկութիւնը, նորա շարժուածքների ազնուութիւնը և քաղաքավարութիւնը, և նորա բորբոքուած պերճախօսութիւնը։ Չորրորդ՝ իմ հին բարեկամութիւնը Ռէդէտի եպիսկոպոսի հետ, որ ուղեկցում է իշխանուհուն, նա բոլոր սրտով սիրում է Ագնէսին և շատ վշտացած է, որ նա զոհ է բերուած կայսեր քաղաքականութեան։ Վերջապէս՝ ձերդ բարձրութեան քսակը կոպայ մեզ էլի շատ բաներ, որ մեզ պակաս է։

—Շատ լա՛ւ. ես տեսնում եմ, որ ձեր յոյսը յիրաւի անհիմն չէ։ Այսօր ես շատ յոգնած եմ. բայց վաղը առաւօտեան մենք կերթանք Պօնտիկօ։ Դուք էլ կգա՞ք ինձ հետ արդեօք, իմ սիրելի՛ սրբազան։

—Ես բոլորովին պատրաստ եմ ձերդ բարձրութեան ձեռքին ամեն բանի համար։ Ցանկամ ձեզ բարի գիշեր, և յաջողութիւն վաղը։

—Տէրը թո՛ղ լսէ ձեզ, հա՛յր։

Բենուան գնաց։

Առաւօտեան, արեգակը բարձրանալուն պէս, Վիլլարդուինը, ուղեկցութեամբ Ռօբէրի, իւր որդի Գոդֆրիդի և բազմաթիւ բարօնների, գնաց Պօնտիկօ։ Երկու ժամից յետոյ նա հասաւ այնտեղ, նստեց նաւակը և բոլոր՝ ուղեկիցներով մօտեցաւ կայսերական նաւերին։

Ագնէսը, որի ազնիւ և վեհ գեղեցկութիւնը ազդում էր իսկոյն սէր և յարգանք, մեծ քաղաքավարութեամբ, մին-

չև անգամ մի տեսակ որդիական յարգանքով, ընդունեց Վիլ-
լարդուինին։ Երկար խօսակցութիւն բացուեցաւ Նոցա մէջ
Պելոպոնէսի և Բիւզանդիայի մասին, Նորա հօր մասին, որին
Վիլլարդուինը ճանաչում էր իբրև ամենաքաջ ասպետներից
մէկը խաչակրաց զօրքերի մէջ, և Նորա մայր Հօլանդայի
մասին, որին համարում էր նա իբրև ամենախելօք կին կայ-
սերական ընտանիքի մէջ։ Ցետոյ իշխանը հրաւիրեց իշխա-
նուհուն անցնել ցամաքը և այցելել Նորա պալատին, առաջ-
ջարկելով Նորան մնալ իւր կնոջ մօտ բոլոր ժամանակ, որ-
քան որ նաւերը կմնան Պոնտրկոյում։

—Շնորհակալ եմ ձերդ բարձրութիւնից այդպիսի բա-
րեհաճ առաջարկութեան համար, ասաց Ագնէսը։ Ես շատ
կցանկայի տեսնել Անդրավիդը և ինձ աւելի ախորժելի է
ճանապարհորդել ցամաքով քան թէ ծովի ալիքների վերայ։
Ես նոյնպէս շատ փափաքում եմ ծանօթանալ վսեմաշուք
իշխանուհի Զապէլի հետ. մայրս խօսում էր Նորա վերայ
միշտ մեծ գովասանքով։ Բայց տարաբախտաբար, ես վախե-
նում եմ, որ գուցէ այս գիշեր իսկ ճանապարհ ընկնենք
այս տեղից։

Ասելով այդ, Ագնէսը ծանր հառաչեց։

—Շատ ցաւալի է այդ ինձ համար, պատասխանեց
Վիլլարդուինը. Զապէլը նոյնպէս շատ կվշտանայ եթէ դուք
կերթաք այդպէս շուտով և նա միջոց չի ունենայ տեսնուիլ
ձեզ հետ։ Մի՞թէ ձեզ անկարելի է նուիրել մեզ գէթ մի
օր։ Եղանակը արդէօք յիրաւի այդպէս բարեյաջո՞ղ է ձեր
ճանապարհորդութեան համար։

—Եթէ մեր նաւերի նաւապետները կը համարեն եղա-
նակը ոչ բարեյաջող, ես շատ բախտաւոր կլինէի, ասաց իշ-
խանուհին։

—Ահա՛ այստեղ է այն ասպետը, որ կարծեմ այս րո-
պէիս խօսում էր Նոցա հետ, պատասխանեց Վիլլարդուինը.
—Գուցէ նա մի տեղեկութիւն կտայ մեզ Նոցա կարծիքի
մասին։

Ասելով այդ՝ Վիլլարդուինը նշան արեց դը-Մոնսին, որ
կանգնած էր ոչ հեռու։

—Ես տեսայ, որ դուք նոր խօսում էիք նաւապետ-
ների հետ, բարո՛ն, ասացէք խնդրեմ, ի՞նչ են կարծում

նոքա եղանակի մասին։ Ե՞րբ են մաղիր ճանապարհ ընկնելու։

—Ձերդ բարձրութիւն, վստահութեամբ պատասխանեց դը-Մօնսը,—ես նոցա հետ չէի խօսում այդ բանի մասին։ Եթէ կհրամայէք, իսկոյն կերթամ կհարցնեմ նոցանից։

—Կանչեցէք նոցա այստեղ, ասաց իշխանը։

Եւ դառնալով դէպի Ագնէսը, յարակցեց ժպտալով։

—Եթէ ես չվախենայի ձեր բարկութիւնից, ինձ ոչինչ բան չէր կարող արգիլել փակելու ձեր բոլոր նաւապետներին Պօնտիկօ ամրոցիս մէջ։ Այնտեղ նոցա կսովորեցնէին ցոյց տալ յաջողակ քամի և շտապեցնել ձեզ գնալ այս տեղից։

—Եթէ դուք ինձ ևս փակէիք ամրոցի մէջ, նոյնպէս հանաքով պատասխանեց Ագնէսը, կարծեմ, ես այնտեղ անհամեմատ աւելի բախտաւոր կլինէի, քան թէ այստեղ, այս շարժական բանտի մէջ, որ տանում են ինձ Աստուած գիտէ ուր։

Երբ ներկայացան նաւապետները, Վիլլարդուինը հարցրեց նոցա կարծիքը եղանակի մասին։

Նոքա լուռ և մունջ շարժեցին գլուխները։

—Ի՞նչ կանէք, ուրեմն, պարոններ, կրկնեց Վիլլարդուինը։

—Իշխանուհի, ասաց նաւապետներից մէկը, մի բարկանաք մեր վերայ այն բանի համար, ինչ որ մեզանից չէ կախուած։ Այսօր առաւօտ երկինքը պարզ էր, ծովը բոլորովին խաղաղ. մենք կարծում էինք թէ՝ կփչէ քամին ցամաքի կողմից և թէ երեկոյեան դէմ մեզ հարկաւոր կլինի բանալ առագաստները։ Բայց այժմ, տեսնո՞ւմ էք հորիզոնի վերայ, ահա՛ այնտեղ, հեռու, այն փոքրիկ ամպը, որ նման է սպիտակ գծին։

—Ո՛չ, չեմ տեսնում, պատասխանեց Ագնէսը, նայելով ցոյց տուած կողմը։

—Այդ զարմանալի չէ ամենևին, ասաց միւս նաւապետը, ծովապետի հմուտ աչք է պէտք այդպիսի նուրբ նշանները նկատելու համար։

—Այն փոքր ամպը, իշխանուհի, ասաց երրորդը, նշան է սաստիկ հարաւայինքամու, և մենք կարծում ենք, որ վըտանգաւոր է ճանապարհ ընկնել։

—Մանաւանդ որ, աւելացրեց առաջին նաւապետը, ես

այժմ միայն նոր նկատեցի, որ ձերդ բարձրութեան նաւի ներքնայարկը հարկաւորութիւն ունի փոքր ինչ կարկատանքի. ապա թէ ոչ ձերդ բարձրութիւնը կարող է վըտանգի ենթարկուիլ։

—Ուրեմն, կարկատեցէք նաւերը, ուրախ ասաց Ագնէսը, ես ընդդէմ չեմ դորան և ամենևին չեմ բարկանում։ Հոգացէք ապահովութեան մասին, և ոչ թէ ճանապարհի երկարատև կամ կարճատև լինելու մասին։

—Իսկ ես կուղարկեմ ձեզ մշակներ և վարպետներ, այլ և հարկաւոր նիւթեր, եթէ հարկաւոր է, ասաց Վիլլարդուինը։ Այժմ նորին բարձրութիւնը կանցնի ափը և կվերադառնայ նաւը միայն այն ժամանակ, երբ ամեն բան պատրաստ կլինի ճանապարհ ընկնելու համար։ Ձեզ, պարոններ, նոյնպէս հրաւիրում եմ հետևել մեզ Անդրավիդ։

Վիլլարդուինը բռնեց Ագնէսի ձեռքը և տարաւ նաւակի մէջ նստացրեց։ Երբ ելան ցամաքը, երիտասարդ Գոդֆրիդը օգնեց իշխանուհուն նստելու գեղեցիկ ձիու վերայ, ոսկեհուռ թամբով զարդարած, և ճանապարհորդները դիմեցին դէպի Անդրաւիդ։ Ճանապարհին Ագնէսը, իւրեան յատուկ կենդանութեամբ և ուրախութեամբ, խօսում էր Վիլլարդուինի որդու հետ։ Դը-Մոնսը մօտեցաւ Պելրոպոնէսի իշխանին և ցոյց տալով նորան փոքրիկ սպիտակ կէտը, որ հազիւ նշմարւում էր հեռու երկնքի վերայ, ասաց.

—Գիտէ՞ք, ձերդ բարձրութիւն, ո՞րքան արժէ այն փոքրիկ մասը։

—Ո՞րքան, ժպտալով հարցրեց Վիլլարդուինը։

—Հազա՛ր ոսկի։

—Կարծեմ, պատասխանեց իշխանը, այդ շատ թանկ չէ։

20.

ԱԳՆԷՍ ԴԸ.ԿՈՒՐՏԵՆԷ

Քաղաքապետը բարեխղճաբար և ճշտութեամբ կատարեց իշխանի հրամանը։ Անդրաւիդը, որ կայսերական նաւերի նաւահանգիստը մտնելու օրից մի առանձին կենդանու-

թիւն էր ստացել, այժմ զարդարած էր իբրև նորահարս և ուրախանում էր։ Բոլոր տները զարդարած էին դրսից թանկագին կապերտներով և կտորներով, ծաղկի պսակները և փունջերը կախած էին դռների և պատուհանների վերայ. փողոցների վերայ սփռած էր ծաղիկներ. ամեն խաչաձև փողոցի վերայ կանգնած էր յաղթական կամար, և ամեն մեկի մօտ նուագում էր մի խումբ երաժիշտների և երգիչների, որք թնդացնում էին օդը իւրեանց ձայներով։ Այդպիսի ընդունելութիւնը մեծ հրճուանք էր պատճառում Ագնէսի սրտին, աչքին և ականջին։ Պէտք է սակայն խոստովանել, որ բոլոր ծաղիկներից և կապերտներից աւելի զմայլեցնում էր իշխանուհուն Գոտֆրիդի այրական գեղեցկութիւնը, որ միշտ գնում էր նորա հետ միասին. երիտասարդ ասպետի ձայնը, որ շշէում էր նորան քաղցր խօսքեր, աւելի ախորժելի էին նորան, քան թէ բոլոր երգերը և նուագները։ Բոլոր արքայավայել պատիւները, որ տրւում էին Ագնէսին, աւելի սակաւ էին փաղաքշում նորա ինքնասիրութիւնը, քան թէ իւր գեղեցիկ ուղեկցի քնքոյշ և անոյշ զրոյցները։

Պալատի մէջ Ագնէսին ընդունեց Զապելը, գրկեց նորան, և Աննային ու Պետրայիֆասին ներկայացրեց նորան։ Ամբողջ օրը անցաւ խնջոյքների և ուրախութեան մէջ։ Վիլլարդուինը ցոյց էր տալիս իշխանուհուն ամեն տեսակ յարգանք և ուշադրութիւն, իսկ երբ գործերը պահանջում էին նորա ներկայութիւնը մի ուրիշ տեղ, նա իւր որդուն էր յանձնում զբաղեցնել իշխանուհուն։

Գիշերը պարահանդէս էր, քաղաքը փայլում էր գոյնզգոյն ճրագներով, և բոլորը վերջացաւ հոյակապ ընթրիքով, որի շքեղութիւնը գնահատեցին և գովեցին ոչ միայն Ագնէսին ուղեկցող ասպետները և բարոնները, այլ և Տաճարականների ուխտի վանականները և ինքն Ռէդէտի եպիսկոպոսը։

Ագնէսը գիշերը անցրեց Զապէլի հետ, դէպի որը նա իսկոյն զգաց դստրական սէր և յարգանք։ Թէպէտ իշխանուհին եկել էր Կ. Պոլսից, իսկ յայտնի է, որ աշխարհիս ոչ մի տեղը չէ կարող հաւասարուիլ իւր գեղեցկութեամբ այդ քաղաքի տեղադրութեան, թէպէտ շատ յոգնած էր,

բայց նա չէր կշտանում նայելով Պելոպոնէսի հրաշալի երկրի վրայ, և առանձին բաւականութեամբ ներս էր շընչում գարնանային անուշահոտ օդը։ Եւ երբ որ վերջապէս քունը ծածկեց իւր քօղը անկատելի կերպով նորա յոգնած աչքերի վերայ, իշխանուհու երևակայութիւնը դեռ ևս արթուն էր և ներկայացնում էր նորա առաջև երկրաւոր դրախտը, լուսաւորուած աստղերով, որ կախուած էին հիանալի ծառերի ոստերից. ինքն Ագնէսը զբօսնում էր այդ կախարդական պարտիզի ճեմելիներում, ադամանդեայ ծաղիկների մէջ։ Ահա՛ մօտենում է նորան մի խորհրդաւոր ասպետ, նա ունի լուսափայլ զրահ, ճաճանչավառ սաղաւարտ — դա հրեշտակ է, որ գեղգեղում է զմայլելի, սոխակի ձայնով։ Բայց ահա՛ նա բարձրացրեց իւր երեսածածկը, և Ագնէսը ճանաչեց Գոտֆրիդի դէմքը...

Բայց շուտով այդ տեսիլը անհետացաւ... Իշխանուհին շարժական բանտի մէջ է, դրսից լսւում են քամու աղաղակ, վայրենի գազանների գոռում և վնգստոց։ Անծանօթ, նորան թշնամի մարդիկ յափշտակում են նորան բանտից, հագցնում են նորա ոտներին շղթաներ և հանդիսաւոր կերպով տանում են նորան յայտնի չէ թէ ուր...

Իշխանուհին սարսափած զարթեցաւ. նորա աչքերը թաց էին։ Ցանկարծ դուռը բացուեցաւ և ներս մտաւ Զապէլը. Ագնէսը ուրախ ժպտաց։

Փոքր ժամանակից յետոյ իշխանուհին նստած էր Վիլլարդուինի ընտանիքի հետ նախաճաշի, որ պատրաստած էր խաղողենու տերևներով պատած հովանոցի մէջ։ Ցանկարծ ներս մտաւ Ռէդէտի եպիսկոպոսը իւր երկու ուղեկից վարդապետների և Օլէնի եպիսկոպոսի հետ։

— Ահա՛, իշխանուհի, ասաց Ռէդէտի եպիսկոպոսը, ներկայացնելով Ագնէսին Օլէնի եպիսկոպոսը, իմ պատուական և յարգելի բարեկամը, սա շատ ժամանակ է, որ Կ. Պոլսումն էր, ուր պատիւ ունեցաւ տեսնել ձերդ կայսերական բարձրութիւնը։

— Ինչպէս չէ, քաղցրութեամբ ասաց Ագնէսը, — Հարկաւոր չէ ներկայացնել ինձ նորին սրբազնութիւնը, մենք հին ծանօթներ ենք։ Դորանից ես առաջին անգամ լսեցի Պելոպոնէսի մասին, երբ դա այնպիսի ճարտասանութեամբ

նկարագրում էր մօրս առաջև այստեղի բնութեան գեղեցկութիւնը և բնակիչների բարք ու վարքը։

—Ձերդ բարձրութիւն, պատասխանեց Բենուան, այնքան ներողամիտ էիք ինձ լսում էիք ինձ և յորդորում էիք պատմել։ Բայց, ինչ թագցնեմ, ես յիրաւի նախապաշարուած եմ յօգուտ Պելոպոնէսին և նրա բնակիչներին, այսինքն՝ բնակիչներից մի քանիսին։

—Եթէ ես ասպստ լինէի, ասաց Ագնէսը, ձեր գովասանքները Պելոպոնէսի մասին կարող էին նախանձ շարժել իմ մէջ։

—Մի այդպիսի բան գոնեա ինձ հետ պատահեցաւ Սարագոսսում, ասաց եպիսկոպոսը։ Դուռոզ սպանիացիները ողջ ողջ կայրէին ինձ իբրև հերետիկոս, եթէ ես չդադարէի գովաբանել մեր թագաւորներին։

—Ի՞նչպէս, Սարագոսսում, ուրեմն ձերդ սրբազնութիւնը եղե՞լ է Սարագոսսում։

—Նորին սրբազնութիւնը այնտեղ էր անցեալ տարի, ասաց Վիլլարդուինը, Կ. Պոլիս գնալուց մի քանի ամիս առաջ։

—Մի՞թէ. հարցրեց Ագնէսը, ուրախ կերպարանք առնելով, երևի կամենում էր աւելի լաւ թագցնել իւր ներքին մտքերը, որոնք ընդհակառակն շատ ուրախ չէին։ Ձի՞ք կարող արդեօք հաղորդել մեզ թէ ի՞նչ են մտածում Արրագոնցիք Կ. Պոլսի իշխանուհիների մասին. երևի թէ այդ տեսակ գաղաններ երբէք չեն եղել նոցա երկրում։

—Ներեցէք ինձ ձերդ կայսերական բարձրութիւն, ասաց Բենուան. նորին մեծութեան՝ դօն (թագաւոր) Յակոբի, ձեր ապագայ ամուսնու մայրը նոյնպէս Կ. Պոլսի իշխանուհի էր։ Նորա վիճակը արդարև զարմանալի էր։

—Ա՛խ, պատմեցէք ինձ, գոչեց Ագնէսը,—ես շատ ցանկանում եմ իմանալ այդ պատմութիւնը։

—Էմմանուէլ Կոմնեն կայսեր աղջիկը և Ալէքսիանոս կայսեր քոյրը Եւդոքսիան, առաջարկութիւն ստացաւ Դոն Ալֆոնսից, Արրագոնիայի թագաւորից, որ նորին մեծութեան՝ Դոն Յակոբի պապն էր։ Կայսրը առաջ չէր համաձայնուում արձակել իւր աղջիկը անծանօթ երկիր, մի ժողովրդի մօտ, որ օտար էր լեզուով և բարքով, ուր հայրը չէր կարող մխի-

թարել Նորան վշտացած ժամանակ, օգնել եթէ նեղութիւն կտային Նորան։ Բայց...

—Քաղաքական նպատակները, ընդմիջեց Ագնէսը, յաղթեցին և... Եւդոքսիան զո՛հ բերուեցաւ այդ նպատակներին։

—Եւ Եւդոքսիան զոհ բերուեցաւ նոցա, շարունակեց Բենուան։ Նորան ուղարկեցին փառաւոր ուղեկիցներով—եպիսկոպոսներով և բարոններով, կայսերական նաւերով։ Ամեն տեղ, ուր որ նոքա անցնում էին, ժողովուրդը խումբ խումբ վազում էր ողջունել Արրագոնիայի ապագայ թագուհուն։ Տարաբախտաբար պատահեցաւ այն, ինչ որ յաճախ պատահում է երկարատև և վտանգաւոր նաւորդութեան ժամանակ—Եւդոքսիան չհասաւ Արրագոնիա այն օրը, որ օրը սպասում էին Նորան։ Իսկ երբ նա վերջապէս հասաւ տեղը, ի՞նչ էք կարծում ի՞նչ էր պատահել... Նորա փեսացուն կամենալով ցոյց տալ, որ Արրագոնիայի թագաւորները չեն սիրում սպասել, պսակւում է ուրիշի հետ—Կաստիլիայի թագաւորի աղջկայ հետ։

—Հապա Եւդոքսիա՞ն, հարցրեց Ագնէսը, և նորա ձայնի մէջ լսւում էին արտասուքներ,—Եւդոքսիան չմեռա՞ւ ամօթից և բարկութիւնից։

—Ո՛չ, չմեռաւ, պատասխանեց եպիսկոպոսը,—բայց հնարք գտաւ հանել վրէժը։ Սարագոսսի արքունիքում բոլոր պալատականների մէջ ամենից աւելի աչքի էր ընկնում Վիլհելմ դը-Մոնպէլիէ. երիտասարդ, գեղեցիկ, քաջ,—նա ունէր բոլոր յատկութիւնները, որոնք կարող էին գրաւել ամեն մի օրիորդին. բայց նա չէր արքայական զարմից։—Ես թագ կտամ Նորան, ասաց Եւդոքսիան, և ականջ չդնելով իւր ուղեկիցների և խորհրդատուների բոլոր խրատներին և ընդդիմութեան, ամուսնացաւ Վիլհելմի հետ։

—Շատ լա՛ւ, բացագանչեց Ագնէսը։

—Բայց Նորա վարմունքը անմիտ էր, նկատեց իշխանուհուն ուղեկցող վարդապետներից մէկը։

—Նա ունէր սրտի խելք, որ աւելի հեռատես է քան թէ սովորական խելքը, ասաց Ռեդերի եպիսկոպոսը։

—Այդ ճշմարտութիւնը հաստատուեցաւ և նոյն դէպքում, աւելացրեց Օլէնի եպիսկոպոսը։ - Վիլհելմը դարձաւ երևելի և ամենքից յարգուած մարդ. յետոյ Նորա Մարիամ

աղջիկը ամուսնացաւ Դոն Ալֆոնսի որդու — Դոն Պէդրոյի (Պետրոսի) հետ, որ հօրից յետոյ ժառանգեց Արտագոնիայի գահը. և այդ ամուսնութիւնից ծնաւ նորին մեծութիւն Դոն Ցակոբը։

— Դուք տեսա՞ք արքայական ընտանիքի բոլոր անդամներին, հարցրեց Ագնէսը, կարմրելով։

— Ես ամեն օր գնում էի Սարագոսսի պալատը, պատասխանեց եպիսկոպոսը. — և նորին մեծութիւն Դոն Ցակոբը արժանացնում էր ինձ առանձին ուշադրութեան։

— Եւ... այդ զգացմունքը շարժուած էր նորա մէջ բարեպաշտութեա՞ն պատճառով։ Գուցէ բարեպաշտութիւնը նորա առաքինութիւններից մի՞ն է, հարցրեց իշխանուհին, աչքերը խոնարհեցնելով։

— Գուցէ մասամբ և բարեպաշտութիւնն էր պատճառ նորա բարեհաճութեան առ իս, պատասխանեց Բենուան. բայց գլխաւորապէս առ այդ մեծ ազդեցութիւն ունէր մի այլ հանգամանք։ Ես դիտմամբ գնեցի Իտալիայում և տարայ ընծայ տուի Դոն Ցակոբին մի փոքր փայտի ձի զսպանակով։ Նորին մեծութիւնը այնպէս ուրախացաւ այդ ընծայի համար, որ ամեն օր նստում էր նորա վերայ և վազվզում էր պալատի բոլոր սենեակներում։ Այնուհետև, ամեն անգամ, երբ ես պալատ էի գնում, թագաւորը մեծ քնքշութեամբ փարւում էր վզովս իւր օգոստափառ փոքրիկ ձեռքերով և պինդ համբուրում էր ինձ։

— Ի՞նչպէս, սրբազան հայր, ուրեմն դուք ե՞րբ էիք Սարագոսսում, հարցրեց Ագնէսը դողդոջուն ձայնով։

— Մի տարի սորանից առաջ, ինչպէս որ պատիւ ունեցայ ասել ձերդ բարձրութեան։

— Քանի՞ տարեկան է, ուրեմն, Դոն Ցակոբը։

— Նա միայն սակաւ ինչ փոքր է ձերդ բարձրութիւնից, շտապեց պատասխանել տաճարականներից մէկը. — բայց...

— Այո՛, ի հարկէ փոքր է, ընդմիջեց Օլէնի եպիսկոպոսը. երբ ես Սարագոսսումն էի նա դեռ չկար եօթը տարեկան, ուրեմն այժմ նա պէտք է լինի մօտաւորապէս ութը տարեկան։

Ագնէսը ոտի կանգնեցաւ, դեղին ինչպէս քաթան։

— Շնորհակալ եմ ձեզանից, սրբազան հայր, ասաց նա. ձեր պատմութիւնները մեծ բաւականութիւն տուին մեզ։

Ցետոյ իշխանուհին գլխով նշան տուեց եպիսկոպոսներին և տաճարական վարդապետներին. նոքա գլուխ տուին և դուրս գնացին։

Ագնէսը գնաց պարտիզի ստուերախիտ ճեմելիքները։ Ոչ ոք չհետևեց նորան։ Նորա բացակայութիւնը տևեց մի քառորդ ժամից աւելի։ Գոդֆրիդը, անհանգիստ այդ բանից, նոյնպէս դուրս գնաց մի բարեպատեհ առիթով։ Մանգալով ճեմելիքներում, նա գտաւ Ագնէսին, նոտած ծառի տակ։ Նա լաց էր լինում։ Ցեսնելով Գոդֆրիդին, նա գոչեց և շտապով սրբեց արտասուքները։

— Ո՛հ, մի թագցնէք ինձանից ձեր արտասուքները, քընքշութեամբ ասաց Գոդֆրիդը։ — Թող թափուին նոքա ձեզ անձնուէր և հաւատարիմ կուրծքի վերայ. և եթէ մարդուս կարելի է ցամաքացնել հրեշտակի արտասուքները, ես կը զոհէի դորա համար երկրաւոր կեանքս և հանդերձեալ կեանքիս երանութիւնը։

— Ինձ ուղարկում են իբրև զոհ իւրեանց ինքնասիրութեան սեղանի վերայ, գոչեց չքնաղ օրիորդը, չկարողանալով զսպել նոր արտասուքների հոսանքը։

— Ուրեմն թոյլ տուէք ինձ հրատարակել իմ անձնձեր պաշտպան Աստուծոյ և մարդոց առջև։ Իսկ երբ ես կփրկեմ ձեզ վտանգից, դուք ազատ կլինիք, եթէ կկամենաք։

— Շնորհակալ եմ ձեզանից, պատասխանեց Ագնէսը, որ մխիթարեցիք ինձ մտերմական կարեկցութեամբ և դորանով բուժեցիք, գէթ սակաւ ինչ, սրտիս վէրքը։ Այդքանը բաւական է. ես չեմ կամենում, որ ձեր սրտի ազնիւ եռանդը աւելի հեռու տանէ ձեզ։ Վեհանձնութիւնը ստիպում է ձեզ սխալուիլ ձեր զգացմունքի յատկութիւնների մասին։ Թող ես կրեմ վիճակս, որ ինքն Աստուած է նախատեսմանել ինձ։

— Ուրեմն դուք մերժո՞ւմ էք առաջարկութիւնս արհամարհանքով, գոչեց բարկութեամբ իմ վստահութեան համար, ասաց Գոդֆրիդը արտասուախառն ձայնով, և հեզութեամբ խոնարհելով գլուխը։ Պատասխանեցէք, պատասխանեցէք, աղաչեմ. վճռեցէք — ապրե՞մ թէ մեռնեմ...

—Նախ քան վճիռ կպահանջէք ինձանից, կշռեցէք առաջ մի լաւ ձեր սեփական զգացմունքները։ Թող ձեր սիրտը առաջ փոքր ինչ պաղի, պատասխանեց իշխանուհին։

—Իմ սիրտը կպաղի միայն գերեզմանում։ Ես վեր կկենամ այս տեղից միայն այն ժամանակ, երբ կլսեմ իմ դատավճիռս։

—Անմի՛տ, ելէ՛ք, ասաց դողալով Ագնէսը. մարդ է գալիս, միթէ չէ՞ք լսում։

Լա՛ւ, ասաց Գոդֆրիդը, ես կնորոգեմ այս խօսակցութիւնը երբ ոչինչ չի արգելի ձեզ պատասխան տալ ինձ։

Եւ նա հեռացաւ պարտիզի մէջ կողմը։

Եկաւ Զապէլը և տեսնելով Ագնէսի այտերի վերայ արտասուքի նշաններ, գրկեց նորան պինդ և համբուրեց քնքշութեամբ, բայց ոչինչ չհարցրեց նորա տրտմութեան և արտասուքի պատճառի մասին։ Յետոյ իշխանուհին բռնեց օրիորդի ձեռքը և տարաւ պալատը, որտեղից ամենքը պէտք է գնային տօնախմբութեան, որ քաղաքապետը պատրաստել էր ի պատիւ հիւր իշխանուհուն։ Երբ, կէս ժամից յետոյ, Ագնէսը մտաւ դահլիճը, նա տեսաւ այնտեղ բազմաթիւ փայլուն հասարակութիւն, որ ընդունեց նորան մեծ պատուով, արժանավայել իւր բարձր կոչման։ Այնտեղ էին և Պետրալիֆասը ու Աննան. նորան իշխանուհին քաղցրութեամբ համբուրեց և նստեցաւ նորա մօտ։

Սպասում էին Մօրէի իշխանին. նա սովորութիւն ունէր զուարճութիւններից առաջ աւարտել պետական անյետաձգելի գործերը։ Վերջապէս Վիլլարդուինը մտաւ դահլիճը իւր որդու հետ, սեղմեց Ագնէսի ձեռքը և իսկոյն մօտեցաւ Պետրալիֆասին։ Նա աւելի քաղաքավարի էր ծերունու հետ քան երբ և իցէ, գուցէ այն պատճառով, որ կամենում էր մխիթարել, որովհետև իշխանուհու ներկայութիւնը նսեմացրել էր նորա նշանակութիւնը։

—Ձերդ պայծառափայլութիւնը գուցէ կցանկար շուտով գնալ տօնախմբութեան, ասաց Վիլլարդուինը. շատ ցաւում եմ, որ հարկաւոր կլինի փոքր ինչ էլ սպասել։ Քաղաքապետը կգայ և կտանէ մեզ։

—Ձերդ բարձրութեան կշտին ես երբէք չեմ լինում

անհամբեր, պատասխանեց Պետրալիֆասը, բացի մի հանգամանքից...

—Ի՞նչ։

—Ես անհամբեր սպասում եմ այն դիտաւորութեան իրագործման, որ մենք որոշեցինք Գարտիսո՛ւմ։ Անշուշտ, այդ չափ բազմաթիւ և ծանր պարապմունքների մէջ ձերդ բարձրութիւնը ժամանակ չէ ունեցել խօսել Գօտֆրիդի հետ։

Վիլլարդուինը ժպտաց։

—Դուք տեսաք որ ես այս լոպէիս առանձին էի որդուս հետ սենեակումս։ Մեր խօսակցութեան առարկան իսկ և իսկ այն էր, որի մասին դուք ակնարկում էք։

—Ա՛յն, բացականչեց Պետրալիֆասը, և նորա աչքերը փայլեցին։ Ի՞նչ ասաց, ուրեմն, Գօդֆրիդը։

—Գօդֆրիդը, պատասխանեց իշխանը, առհասարակ շատ տարօրինակ մարդ է։ Նա այն մարդերիցն է, որք լըսում են և ոչինչ չեն պատասխանում։ Չգիտեմ ո՞րտեղից է զարգացել նորա մէջ այդպիսի ընաւորութիւն։

—Իսկ ես շատ լաւ գիտեմ, ժպտալով պատասխանեց Պետրալիֆասը։

—Ես ասացի նորան, շարունակեց Վիլլարդուինը, որ՝ ես ցանկանում եմ, և մեր շահերը պահանջում են այդ, որ հարսնացու ընտրէ իւր համար։ Ի հարկէ ես հասկացրի նորան, որ ազատ է իւր ընտրութեան մէջ, բայց ակնարկեցի, որ իմ կարծիքով ընտրութիւն անելու համար շատ հեռու գնալ հարկաւոր չէ։—Դու կարող ես, ասացի ես, մանգալ ամբողջ աշխարհ, Արևելքից Արևմուտ, բայց ոչ մի տեղ չես գտնի այնպիսի ազնիւ և գեղեցիկ օրիորդ, որպիսին այժմ պատիւ է բերում Պելոպոնէսին իւր ներկայութեամբ. ուրեմն մնում է քեզ միայն ստանալ նորա համաձայնութիւնը։ Գօդֆրիդը լսեց բոլորը ուշադրութեամբ, ասաց թէ շատ շնորհակալ է ինձանից սիրոյ և խելացի խորհուրդների համար, բայց խնդրեմ մի քանի ժամ մտածելու և խոստացաւ յետոյ յայտնել ինձ իւր որոշմունքը։ Գօդֆրիդը սիրում է միշտ ցոյց տալ թէ գործում է իւր սեփական խելքով և խորհրդով, և ոչ թէ ուրիշի խրատներով և խորհուրդներով, չբացառնելով մինչև անգամ և ինձ։ Եւ ահա՛ այդ իսկ պատճառով պահանջեց նա մի քանի ժամ մտածելու։

— Ուրեմն վաղը, ասաց Պետրալիֆասը. բախտը, կարծես թէ դիտմամբ, ուղարկել է այստեղ կայսերական նաւատորմիղ, որ վկայ լինի այդպիսի երևելի անցքին։

Այդ միջոցին Օլէնի եպիսկոպոսը մօտեցաւ Վիլլարդուինին, և Պետրալիֆասը գնաց Գոդֆրիդի մօտ։ Նա ընդունեց ծերունուն ուրախ և զուարթ կերպով և խօսում էր բոլոր ժամանակ նորա հետ մինչև հանդիսին գնալը։ Ծերունին լաւնշան էր նկատում նորա այդպիսի վարմունքի մէջ։

Վերջապէս մտաւ քաղաքապետը և առաջնորդելով տարաւ իշխանին և բոլոր հիւրերին։

Ցունաստանում շատ վաղուց չէր եղել այնպիսի տօնախմբութիւն, որպիսին պատրաստել էր Անդրավիդի քաղաքապետը։ Ասպետների զինախաղութիւններ, գիւղացիների պարեր, խնջոյքներ ձեռաց պատրաստած հովանոցների մէջ — ամեն բան կատարեալ էր։ Պետրալիֆասը ուշադրութեամբ դիտելով Գոդֆրիդի բոլոր շարժմունքները՝ զգում էր որ իւր յոյսը աւելի և աւելի մեծանում էր, այնպիսի ուշադրութեամբ և քաղցրութեամբ վարւում էր երիտասարդ իշխանը Աննայի հետ։ Ճշմարիտ է, Գոդֆրիդը միևնոյն ժամանակ առանձին ուշադրութեամբ էր վարւում և Ագնէսի հետ, բայց նորա քաղաքավարութեան պարտքն էր, իբրև տանտէր, զբաղեցնել և՛ իշխանուհուն, և այդ բանը ամենևին չէր գըրգռում ծերունու նախանձը։

Տօնը վերջացաւ երեկոյին։ Վերադարձին Վիլլարդուինը դարձաւ դէպի իւր ուղեկից բարոնները և ասպետները և ասաց.

— Նորին կայսերական բարձրութիւնը համաձայնեցաւ մասնակցել վաղը որսորդութեան և իրաւունք տուեց ինձ հրաւիրել ձեզ, պարոններ։ Խնդրեմ, ժողովուեցէք վաղը ինձ մօտ, արեգակը ծագելուց յետոյ։

— Ուրեմն մինչև վաղը, ասաց Պետրալիֆասը, ագդու կերպով սղմելով Վիլլարդուինի ձեռքը։

— Մինչև վաղը, սառնասրտութեամբ պատասխանեց իշխանը։

21.

ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ

Գիշերային մթութիւնը իջել էր արդէն Օլէնի սարերի վերայ, երբ Պետրալիֆասը վերադարձաւ տուն։ Նա միջոց ազուեց իւր թոռնուհուն հանգստանալ. յետոյ ինքը գնաց նորա սենեակը և մտադիր էր ծանր կերպով խօսել նորա հետ։ Ծերունին մտածում էր և կշռում այն բոլորը, ինչ որ մտադիր էր ասել։ Պատշգամբով անցնելիս նա մի տեղից լսեց սաստիկ սուլոց. Պետրալիֆասը կանգ առաւ և սկսեց լսել։ Նոյն ձայնը կրկնուեցաւ և յետոյ լսուեցաւ երրորդ անգամ։ Ծերունին փոխեց ճանապարհը և գնաց մեզ արդէն յայտնի օձապտոյտ սանդուղքով, և բաց անելով փոքրիկ դրռնակը ներս թողեց Առիւծ Խամարէթին, այս անգամ դարձեալ կերպարանափոխուած արեղայական շորերով։ Պետրալիֆասը տարաւ նրան հեռաւոր սենեակներից մէկը։

—Շատ ուրախ եմ ձեզ տեսնելուս, որդեակս. ինձ շատ հարկաւոր էր խօսել ձեզ հետ և ես պատրաստուում էի գալ ձեզ մօտ Կ. Պոլսի իշխանուհու գնալուց յետոյ։ Բայց, ի՞նչ է պատահել. դուք չփոթուած էք և վրդովուած։ Ի՞նչ նոր լուրեր կան։

—Ամենից առաջ, ասաց Խամարէթը, բացատրեցէք ինձ թէ ի՞նչ են նշանակում տուած նշանները։

—Նշա՞ններ, պատասխանեց զարմացմամբ Պետրալիֆասը։—Ի՞նչ նշաններ։

—Ի՛նչպէս, միթէ դուք չգիտէ՞ք։

Եւ տանելով Պետրալիֆասին պատուհանի մօտ՝ Խամարէթը շարունակեց։

—Ահա՛, նայեցէք։ Սարերի բոլոր գլուխների վերայ կրակներ են վառուում, կարծես թէ նոքա լուսաւորուած են, ինչպէս տօներին ճրագալոյց է լինում։ Երեկ ես տեսայ խարոյկ Օլէնի ամենաբարձր գագաթի վերայ, յետոյ երկրորդը և ապա երրորդը։ Ես առաջ կարծում էի թէ՝ հովիւներն են վառել նոցա, բայց յետոյ տեսայ մեծ քանակութիւն խարոյկների։ Ես կարծում էի թէ դա մի պատահական բան է, բայց այսօր դարձեալ տեսնելով կրակներ, եկայ ձեզ մօտ բացատրութիւն խնդրելու։

—Բացատրութիւն խնդրելու ինձանից, ասաց Պետրաչիֆասը. և եթէ նոցա լապտերի լոյսը աւելի մեծ լինէր, Խամարէթը կտեսնէր թէ ինչպէս դեղնեց ծերունին։—Բայց ինձ թւում է, որ այդ չէ կարող ուրիշ բան լինել, եթէ ոչ հովիւների խարոյկներ։ . . . . Կամ թէ ո՛չ, սպասեցէք, այժմ ես հասկանում եմ։ Վիլլարդուինը մեծ որսորդութիւն է պատրաստում իշխանուհու համար. ուրեմն այդ խարոյկները վառել են երևի նորա համար, որ որսը քշեն սարերից ձորը։

—Տարօրինակ բան է, ասաց Խամարէթը,—և մեզ համար շատ վտանգաւոր. ես վախենում եմ, որ մեր ընկերները պայմանաւորեալ նշան չհամարեն այդ կրակները։

—Այդ դէպքում ի՛սկ, պատասխանեց Պետրաչիֆասը անհաստատ ձայնով, նոցա կրած վնասը կլինի այն միայն, որ ի զուր տեղը կկատարեն այդ ճանապարհորդութիւնը։ Վաղը երեկոյեան, որսորդութիւնից յետոյ, այդ կրակները անշուշտ այլ ևս չեն երևայ, և ուրեմն, չտեսնելով երրորդ նշանը, ոչ ոք չի գնայ քարանձաւը։

—Ուղիղ է, ասաց Խամարէթը, այդ նկատողութիւնը հանգստացնում է ինձ։ Ես վախենում էի թէ՝ չլինի դուք էք մտածել ժողովել մեր ընկերներին, կարծելով թէ հասել է ժամանակը գործելու։ Այդ բանը կարող էր մեծ վտանգի ենթարկել մեր ձեռնարկութիւնը։

—Ի զուր դուք ինձ վերայ էք տարել ձեր կարծիքը այդ բանի մասին. երբէք ես չէի կարող մտածել անգամ բաց անել առագաստները մրրկի դէմ և մոռանալ ղեկավարին։ Բայց, ասացէք խնդրեմ, ի՞նչ դրութեան մէջ է այժմ գործը։

Խամարէթը մի քանի րոպէ լուռ մնաց և յետոյ պատասխանեց.

—Մինչև այժմ ես մի աքսորեալ էի, առանց հայրենիքի, առանց յարկի, առանց պատսպարանքի։ Ես չէի համարձակւում նայել արեգակին. չէի համարձակւում ուղիղ նայել ազատ մարդու երեսին, վախենալով տեսնել նորա աչքերի մէջ կարեկցութիւն, շնորհքի վերայ արհամարհանքի ժպիտ։ Այժմ ես ազա՛ատ եմ, ես պարագլուխ եմ ազատ մարդկանց. ես չեմ վախենում, որ ձեռքիս շղթայմունքը կպղծէ ինձ մեկնած ձեռքը։ Եւ եթէ ձեռքերիս շղթաները

դեռևս խորտակուած չեն, բայց այդ ձեռքերը բռնած ունին արդէն սուր, և այդ սուրը կփշրէ շղթաները։ Այժմ ես չեմ տարակուսում մեկնելով ձեզ ձեռքս և առաջագոյն խնդրում եմ ձեզանից պարգևս այն բոլոր վտանգների փոխարէն, որոց ենթարկում եմ իմ անձս... Ես խնդրում եմ ձեզանից Աննայի ձեռքը...

—Աննայի ձեռքը... կակազելով կրկնեց Պետրալիֆասը։

—Այո՛, պատասխանեց Խամարէթը, թող շատ յանդուգն և անախորժ չթուի ձեզ այդ բանը։ Հզօր պետութիւնները, որոց վիճակուած է վերականգնել կայսերական գահը,—Ելլադան և Պելոպոնէսը պէտք է միանան անքակտելի կապերով. հարկաւոր է, որ ապստամբութեան կրակը միշտ բորբոքի Արտայից մինչև Մալը, որ բոլոր յոյները ունենան մի սիրտ, մի հոգի՛, մի նպատակ և մի թշնամի։ Հարկաւոր է նոյնպէս, որ այդ միութիւնը լինի յայտնի և հրապարակական. հարկաւոր է ամեն ցանկացողին պաշտպանել հայրենիքը—ցոյց տալ այդ միութեան վերայ իբրև առհաւատչեայ և գրաւական յաջողութեան. այդ բանը կսրտապնդէ թոյլերին և քաջալերէ անվստահներին։ Թո՛ղ իմ շուրջը հաւաքուածները տեսնեն ամենքը, որ ես գնում եմ առաջ ոչ-միայնակ և չեմ տանում նոցա անհաւասար կռուի դէմ։ Երբ իմ պելոպոնէսցիները կիմանան, որ նոցա պարագլուխն է Ելլադայի իշխանուհին, նոքա կմտածեն, որ յաղթութեան հրեշտակը իջել է երկնքից մեզ մօտ, և կըրկին անգամ անյաղթելի կլինին։ Վերջապէս ինձ համար ինչ, նախ քան ես կմտնեմ այդ կռուի մէջ, հարկաւոր է ընդունել յուսոյ մկրտութիւն, պնդացնել հոգիս բախտաւորութեան ակնկալութեամբ և վարժել ինձ հաւատալ անձիս և ապագային։ Մի ժամանակ ես նշմարում էի, որ Աննայի սիրտը երջանկութիւն էր պատրաստում ուրիշի համար, և ես ընդունակ չէի որևիցէ սխրագործութեան յուսահատութիւնից։ Դուք համոզեցիք ինձ դորա հակառակը, հայր իմ։ Ասացէ՛ք, ուրեմն, կարո՞ղ եմ յուսալ այդ բախտաւորութեան, և այդ յոյսը անյաղթելի կդարձնէ ինձ։

—Բայց, Առի՛ւծ, պատասխանեց Պետրալիֆասը, խոյս տալով վճռողական պատասխանից,—նախ քան կպատաս-

խանեմ ձեզ այդպիսի առաջարկութեան, ես պէտք է իմանամ ի՞նչ դրութեան մէջ է այժմ գործը։

— Ի՞նչ դրութեան մէջ է գործը, ասաց Խամարէթը։— Ես այժմ ձեռքիս ունիմ բռնած ամբողջ Պելոպոնէսը. իմ մէկ խօսքից ամենքը, ում սրտի մէջ դեռևս բաբախում է մարդկային սիրտը, Պելոպոնէսի բոլոր գաւառները կմիանան։ Բաւական է որ ձեռքս բարձրացնեմ — և ահա՛ քառասուն հազար սուր կբարձրանան իսկոյն միասին. բոլոր ապստամբակիցները անհամբեր սպասում են պայմանաւորեալ նշանին։ Ամենքը մի նշանաբան ունին — ազատութիւն Պելոպոնէսի...

— Բայց, որդեակս, հեգութեամբ ասաց Պետրալիֆասը, միթէ դուք չէ՞ք կարծում, որ հանգամանքները փոխուել են։

— Փոխուե՞լ են, պատասխանեց Առիւծը. ի՞նչպէս են փոխուել։ Միթէ մեր հայրենիքը ազատուա՞ծ է արդէն օտարական գիշատիչների ձեռքից։ Միթէ մեր ազգը, որ մի ժամանակ ամենափառաւոր ազգն էր, թոթափե՞լ է իւր վրայից անարգ ստրկութիւնը։ Միթէ Կ. Պոլսի կայսերական սրբազան գահը խլա՞ծ է արդէն արևմտեան բարբարոսների պիղծ ձեռքերից։ Ո՛չ, հա՛յր իմ, ոչինչ չէ փոխուել — ոչ հանգամանքները, և ոչ մեր պարտաւորութիւնը ազատել հայրենիքը, եթէ կարող ենք։ Ցամենայն դէպս, մեր վերայ սրբազան պարտաւորութիւն կայ փրկել մեր հայրենիքի մեծ պատիւը, յիշատակ թողնել նորան ապագայում արիւնաշաղախ ապստամբութեան մասին նորա ազատութեան համար։ Թո՛ղ Յունաստանի բռնակալները յարգեն նորան մինչև անգամ նորա մահից յետոյ։ Եւ եթէ երբ և իցէ նորան վիճակուած է դուրս գալ գերեզմանից, թո՛ղ կանգնի նա հպարտութեամբ գլուխը բարձր բռնած, և վստահութեամբ, ուղղակի նայի ամբողջ աշխարհի աչքին։

— Որդեա՛կս, ասաց Պետրալիֆասը. ձեր խօսքերը լի են անվեհերութեամբ. բայց անվեհերութիւնը, որ ականջ չէ դնում խոհեմութեան, տանում է դէպի կործանումն — փառաւոր, գեղեցիկ, սակայն այնուամենայնիւ կործանումն։ Զմոլորուենք մեր ոյժերի մասին։ Մեր ազգը, մանաւանդ Պելոպոնէսի ժողովուրդը, մաշուած է ստրկութեամբ, ուշաթափ է եղած լուծ կրելու սովորութեամբ։ Իշխանաւորները երեւում են ժողովրդին իբրև բարձրագոյն էակներ. միայն

տեսքը ասպետների, ծածկած պողպատի զրահներով, ըստ երևութին՝ անյաղթելի, անվիրաւորելի,— կարող է փախուստ դարձնել մեր վախկոտ հօտը։ Մեր ցանկութիւնն պն էր, որ օտարականները ջնջէին միմեանց. մենք կամենում էինք, որ լինէր ընդդիմահարումն նոցա ոյժերի, իսկ մենք պէտք է քաղէինք նոցա երկպառակութեան պտուղները։ Այն ժամանակ մեր զինուորները կարող էին կռուել առանց վտանգի, պաշտպանուած պողպատի կենդանի պարիսպներով, որով պատած պէտք է լինէր Ռօբէրը. և երկու հակառակ կողմերից մէկի անկումն յաղթութիւն կլինէր մեզ համար։ Բայց այժմ, երբ Ռօբէրը ամօթալի կերպով թողեց իւր իրաւունքները Վիլլարդուինի ձեռքին, բարեպատեհ դէպքը գնաց մեր ձեռքից։ Հարկաւոր է սպասել այլ յաջող դէպքին, եթէ չենք կամենում, որ մեր ոյժերը փշրուին Վիլլարդուինի ոյժերի վերայ, ինչպէս ծովի ալիքները փշրուում են ծովի ժայռերի վերայ։

— Բայց, պատասխանեց Խամարէթը,— ծովի ալիքները շատ անգամ մաշում են ամենապինդ ժայռի տակը։ Մեր հովիտների հովիւները կարող են կործանել գոռոզ Գողիաթին, ինչպէս Դաւիթը, եթէ աղգասիրական ոգին կոգևորէ նոցա։ Այժմ ամենքը ոտի են կանգնել.— *Խաչակիր պատերազմ խաչակրաց դէմ* — ահա նոցա նշանաբանը։ Նոքա զինուորուել են, որ պատերազմեն Վիլլարդուինի դէմ Ռօբէրի հետ. իսկ այժմ կպատերազմեն Վիլլարդուինի դէմ առանց Ռօբէրի։

— Զափաւորեցէք նոցա եռանդը, իմ թանկագին Առիւծ, ասաց Պետրալիֆասը.— յորդորեցէք նոցա չնետուիլ գլխապատառ անդունդի մէջ։

— Արդէն ուշ է, պատասխանեց Խամարէթը. ամբարտակը պատռուել է. հեղեղը քանդել էր բոլոր արգելքները, նորա ալիքները կարող են կործանել ամեն բան. իսկ կանգնեցնել հեղեղի հոսանքը անկարելի է։

— Փորձեցէք, պատասխանեց ծերունին։ Ձեր ձայնը բարձրացրեց մրրիկ, ձեր ձայնը կարող է և դադարեցնել նորան։

— Ես կարող եմ զեկավարել մրրիկը, բայց հանդարտեցնել նորան իմ կարողութիւնից վեր է։ Եթէ, սակայն, կարողանայի անգամ հանդարտեցնել նորան, այնուամենայ-

նիւ ես չէի անի այդ։ Հունձը հասել է. հնձողները արդէն բռնել են ձեռքին սուր մանգաղներ. ես չեմ կանգնի միջնորմ նախախնամութեան կամքի և նոցա մէջ։ Ես չեմ թողնի ուրիշներին մեծ փառքը, որ մեզ է պատկանում. ես չեմ կարող պաղարիւնութեամբ նայել իմ հայրենիքի հեծեծանքին և հառաչանքին, երբ կարող եմ օգնել նորան։

—Հաւատացէք ինձ, ասաց Պետրալիֆասը, գլուխը օրօրելով,—հայրենիքին դուք չէք օգնի, այլ միայն բոլորովին կկործանէք նորան։ Վիլլարդուինը հզօր է, և ամեն խոհական մարդը պէտք է այժմ խոնարհեցնէ նորա առջև իւր գլուխը, ինչպէս եղէգը քամու առջև։ Խոհեմ մարդը պէտք է այժմ միանայ Վիլլարդուինի հետ, այսինքն՝ ես կամենում եմ ասել—այնպէս ձևացնել թէ միանում է, և սպասել յաջող դէպքին։

—Ոչ, վեհութեամբ ասաց Առիւծը, ես չեմ կարող հաշտուիլ այդպիսի նենգաւոր և ստոր քաղաքականութեան հետ։ Ես ունիմ նոյնպիսի զօրութիւն, որպիսին և Վիլլարդուինը, և միայն Աստուածն, որ դատաւոր է բոլոր ազգերի վերայ, կվճռէ մեր դատը նորա հետ։ Հիւսիսից հարաւ, արևելքից արևմուտք, Պելոպոնէսը ոտի է կանգնել և դիմադրուել. նա միայն սպասում է, որ ես բարձրացնեմ ձեռքս։ Իսկ եթէ ես չեմ բարձրացնի ձեռքս, կկառավարուին և առանց ինձ։ Ահա թէ ինչու ես վստահութիւն ունեցայ խնդրել Աննայի ձեռքը, և ասում եմ ձեզ հաւաստիաբար —տուէք ինձ այդ ձեռքը, իբրև պարգև սուրբ գործի համար, տուէք ինձ իբրև գրաւական միութեան, իբրև աւետիք յաղթութեան։

—Եթէ ձեզ համար բաւական լինէր միայն իմ պատասխանս, ասաց Պետրալիֆասը, դուք գիտէք թէ որպիսի կլինէր դա իմ կողմից. ես միշտ համարում էի ձեզ իբրև իմ սիրելի որդի։ Իմ փեսայ Թէոդորը և նորա հանգուցեալ եղբայր Միքայէլը միշտ ցոյց էին տալիս ձեզ սէր և յարգանք։ Ես բոլորովին հաւատացած եմ, որ Աննան ևս նոյն զգացմունքներն ունի։ Բայց գուցէ ձեզ բաւական չէ միայն իմ խօսքը և դուք կկամենայիք իմանալ թէ ի՞նչ կասէ առ այդ ինքն Աննան։ Ես կխորհրդակցեմ նորա հետ և կյայտնեմ նորան իմ կարծիքը։

— Զեզ եմ յանձնում իմ բախտս, ասաց Խամարէթը։ Խօսեցէք և յայտնեցէք ինձ — կարո՞ղ եմ արդեօք գնալ պատերազմ աչքիս առջև ունենալով միշտ երկու պատկեր — ազատութեան պատկեր և բախտաւորութեան պատկեր, թէ պիտի նետուիմ կռուի մէջ իբրև կոյր գործիք կործանման, յուսահատութեամբ սրտիս մէջ, իսկ կործանումից յետոյ մահ որոնել։

— Ուրեմն, ձեր վճիռը հաստա՞տ է և անփոփոխե՞լի, հարցրեց Պետրալիֆասը։ Միթէ դուք չէ՞ք ընդունի ոչինչ խորհուրդ։ Միթէ դուք խո՞ւլ կմնաք և դէպի խոհեմութեան ձայնը։

— Ես լսում եմ միայն բազմաչարչար հայրենիքիս ձայնը, պատասխանեց Խամարէթը, վերկենալով։ Այժմ, երբ ես արդէն ամէն բան նախապատրաստել եմ, ես դաւաճան կլինէի եթէ հաւատարիմ չմնայի ընդունուած որոշմունքին։ Ես սպասում եմ միայն պայմանաւորեալ նշանին գործը սկսելու համար, և ահա՛ այժմ Վիլլարդուինը, կամ լաւ ասել՝ ինքն երկինքը տալիս է այդ նշանը։ Այն կրակները, որ փայլում են ահա՛ երկու գիշեր է, ժողովեցին ապստամբութեան բոլոր պարագլուխներին, որք թափառում են և թաքնուում են շրջականերում։ Եթէ վաղը դարձեալ կը վառուին կրակները, բոլոր ապստամբողները կհաւաքուին նշանակած տեղում։

— Եւ յետոյ ի՞նչ։

— Ի՞նչ. Վիլլարդուինը վառում էր երկու գիշեր խաբոյկները իւր որսորդութեան համար, իսկ վաղը ես ինքս կվառեմ նոցա իմ որսորդութեան համար։

Եւ Խամարէթը գնաց դէպի դուռը։

— Ո՛չ, այդ կողմը չէ, ասաց Պետրալիֆասը. այդ կողմում դուք կարող էք այժմ պատահել ծառաներին։ Եկէք իմ ետևից։

Պետրալիֆասը վերցրեց կանթեղը և առաջ ընկաւ։ Նա տարաւ Խամարէթին մի ինչ որ նեղ անցքով մինչև փոքր սանդուղքը, որով նոքա իջան ցած, անցան մի ուրիշ նեղ անցք, յետոյ երրորդը և հասան մի մութը սանդուղքին, նորանով նոքա դարձեալ իջան աւելի ցած և այդ սանդուղքը շատ երկար թուեցաւ Առիւծին։ Վերջապէս անցնելով

էլի մի երկար և խաւար անցք, հասան մի դրան, որ բացուեցաւ ժանգոտուած օղակների ճռնչմունքով։

— Մենք պէտք է այստեղո՞վ գնանք, հարցրեց Խամարէթը։

— Այո՛, պատասխանեց Պետրալիֆասը։

— Ա՛խ, որպէս զի չմոռանամ, ասաց Խամարէթը, կանգնելով, — Նամակ գրեցէք անպատճառ Սուրգոս և Արգոս քաղաքները, նոյնպէս և Կորնթոսի ամրոցապետին, կամ եթէ կամենում էք, հաւատարիմ մարդիկ ուղարկեցէք։ Այդպիսի ապացոյցը մեր բարեկամութեան Ելլադայի իշխանի հետ կքաջալերէ մեր զինուորներին։

— Ես անպատճառ կկատարեմ ամեն բան, ինչ որ հարկաւոր է։ Բայց գնա՛նք առաջ։

— Երբ վերջապէս մտան մի խաւար սենեակ, Պետրալիֆասը, կարծես թէ յանկարծ մի բան միտը բերելով, գոչեց.

— Ա՛խ, ես մոռացայ ամենագլխաւոր բանը։ Սպասեցէք ինձ փոքր ինչ։

Ծերունին դուրս գնաց և փակեց դուռը։

Խամարէթը մնաց մթութեան մէջ և նորան այնպէս լսուեցաւ, որ դուռը փակեցին կարծես թէ բանալիով։

Մի քանի րոպէ Խամարէթը մնում էր մտածմունքի մէջ. նորա վիճակը պէտք է նոյնպէս բոլորովին փոխուէր։ Մի կողմից նորան ցոյց էր տալիս երևակայութիւնը թէ՝ փառքը իջնում էր երկնքից նորա վերայ և նստում էր նորա ճակատի վերայ իւր անմահ դափնի տերևներով, միւս կողմից՝ սէրը վերցնում էր նորա գլխից փշի պսակը, որ կրում էր մինչև այդ օրը, և դնում էր նորա վերայ վարդահիւս պսակ։

Բայց Առիւծը նկատեց, որ վաղուց արդէն մենակ է մնացել, և սկսեց անհանգստանալ։

Վերջապէս նա կարծեց թէ՝ Պետրալիֆասը թողեց նորան այնտեղ մենակ, որովհետև այլ ևս հարկաւոր չէր ճանապարհ ցոյց տալ նորան, թէ դրան ետևը փողոցն է և թէ ինքը կարող է ճանապարհը գտնել։

Խամարէթն սկսեց ձեռքերի շօշափմունքով պտռել դուրս գնալու ճանապարհը, բայց չէր գտնում ոչ մի դուռ, բացի նորանից, որով ներս մտաւ։ Երեք անգամ նա պը-

տըտեց այն տեղը, ուր գտնուում էր, բայց ամեն տեղ պատահում էր միայն քարաշէն պատերին և մի հատ երկաթի դրան։

Կորցնելով բոլոր յոյսը և ոչինչ չհասկանալով այդ անցքից, նա վերադարձաւ դէպի երկաթի դուռը, կամենալով նորից գնալ Պետրալիֆասի բնակարանը և դուրս գնալ միւս դռներով։ Բայց երբ Խամարէթը կամենում էր բաց անել այն դուռը, տեսաւ որ նա պինդ փակուած էր բանալիով։ Զարմացած, յուսահատութեան մէջ, նա սկսեց աղաղակել, և սարսափով նկատեց որ նորա ձայնի արձագանքը ցրուում էր ցած կամարների մօտ։ Նա սկսեց թակել դուռը բռունցքներով և թափ տալ նորան, բայց հաստ պատերը խլացնում էին նորա զարնուածքների ձայնը։ Առիւծի բոլոր ջանքերը ի զուր էին։ Միայն նոր յիշեց նա թէ՝ քանի սանդուղներ և նեղ անցքեր անցան մինչև որ հասաւ այդ ստորերկրեայ տեղը և թէ օ՛րչափ հեռու պէտք է լինի Պետրալիֆասի բնակարանից, և նորան տիրեց մի տեսակ խելացնորութիւն։ Խեղճ Խամարէթը կարծում էր թէ՝ այդ բոլորը երազի մէջ է տեսնում, նա գոռում էր, անիծում էր, յետոյ լռում էր, գլուխ էր ճաքացնում աշխատելով լուծել իւր տարօրինակ դրութեան հանելուկը, ապա սկսում էր շօշափել պատերը։ Բայց, բոլորը ի զո՛ւր։

Խամարէթը գլուխը վեր բարձրացրեց և տեսաւ մի այն մի փոքր ծակ, որով նորա ստորերկրեայ բնակարանի մէջ մտնում էր օդ և լոյս, երբ դուրսը լոյս էր։ Այդ ծակը շատ նեղ էր և գետնից շատ բարձր. իսկ երկաթի պինդ վանդակը ոչինչ հնարք չէր թողնում անցնել այդ նեղ ծակով։

Նեղ պատուհանի միջից Խամարէթը կարողանում էր տեսնել երկինքը և հեռու փայլող կրակների լոյսը, որոնք երևի խարոյկներն էին, վառած սարերի գագաթների վերայ։ Այդպիսի տեսարանը չէր կարող մխիթարել նորան և չափաւորել նորա անհամբերութիւնը։

Ցանկարծ նա զարնուեցաւ ինչ որ մի բանին, մեկնեց ձեռքը և տեսաւ որ դա մահճակալ էր, իսկ նորա վերայ խոտ փռած։ Յոգնած, բարկութիւնից խեղդուելով, Առիւծը

ընկաւ այդ կոշտ անկողնի վերայ, երկու ձեռքով բռնելով իւր գլուխը, կարծես թէ աշխատում էր բռնել հեռու փախչող խելքը։ Նորա աչքի առաջ երևում էր վանդակապատ ծակը, հեռու դեռ ևս փայլում էին աղօտ լուսով կրակները և կարծես թէ կանչում էին իւրեանց մօտ բանտարկուածին, ազատութիւն խոստանալով Նորան։ Դորանից աւելի սարսափելի և անտանելի էր դառնում Նորա համար բանտարկութիւնը։

Խամարէթի մտքերը բոլորովին խառնաշփոթուեցան։ Նա անում էր ամեն տեսակ եզրակացութիւններ իւր բանտարկութեան պատճառների մասին. Նորան ցանկալի էր այդ բոլորը վերագրել Պետրալիֆասի մոռացկոտութեան և անյիշողութեան։ Վերջապէս, երկար և անտանելի ժամերից յետոյ, քունը իջաւ Նորա ձանձրացած աչքերի վերայ և սարսափելի երազների փոխեց Նորա խառնափնթոր և խըճճուած մտքերը։

22.

ՆՈՐ ՓԵՍԱՑՈՒ

Պետրալիֆասը, փակելով ստորերկրեայ բանտի դուռը նոյն ճանապարհով վերադարձաւ իւր բնակարանը։ Նա գը նաց ուղղակի իւր թոռնուհու սենեակը։ Աննան դեռ չէր քնած, կար էր անում։

— Աննա՛, ասաց Նորան պապը, դու ի զուր այդպէս ուշ քնած չես։ Վաղուան օրը բաւական կյոգնեցնէ մեզ։ Բայց, որովհետև դու դեռ ևս չես պառկել, բարի գիշեր ասելուց առաջ ես կկամենայի փոքր ինչ խօսել քեզ հետ... Ո՞վ գիտէ ինչ կարող է պատահել վաղը։

— Ես պատրաստ եմ լսել ձեզ, պա՛պս։

— Այն ժամանակից ի վեր, երբ ես նկատեցի, որ դու չես համակրում Ռօբէրին, թէև ուղիղն ասած՝ բոլորովին անհիմն կերպով, դու գիտես, որ այնուհետև ես Նորա անունն անգամ այլ ևս չեմ յիշել քո առաջ։ Ես գիտեմ, որ այդ տեսակ հակակրութիւնը լինում է երբեմն ակամայ, ուստի, թէպէտ և համոզուած եմ, որ շատ օգտակար կլիներ քո ամուսնութիւնը Նորա հետ, իմ հայրական սիրտս

չթոյլ տուեց ստիպել քեզ։ Բայց որովհետև այդ դէպքում ես քեզ զիջողութիւն արի, արդարացի եմ համարում պահանջել, որ և դու մի բանով զիջողութիւն անես ինձ։ Ես հնազանդուեցայ քո օրիորդական կամակորութեան, հնազանդուիր և դու այժմ իմ բազմամեայ փորձառութեան։

—Ի՞նչ էք կամենում, ուրեմն, դուք ինձանից, ասաց Աննան։

Այդ երկար յառաջաբանութիւնը ոչինչ լաւ բան չէր գուշակում նորան։

—Ես կամենում եմ, քաղցրութեամբ պատասխանեց Պետրալիֆասը, կապել քո կեանքը մի մարդու հետ, որ ամենահամակրելին և ամենափառաւորն է բոլոր ասպետներից, ամենահզօրն է կայսրից յետոյ, մի մարդու հետ, որին սպասում է իշխանական և գուցէ նաև արքայական թագը։ Ես հաւատացած եմ, որ նա շատ կբախտաւորացնէ քեզ և վայելել կտայ քեզ աշխարհիս բոլոր պատիւները։ Ես ցանկանում եմ, որ դու ամուսնանաս Գոդֆրիդ Վիլլարդուինի հետ...

—Պա՛պս, իմ բարի պապս, մի՞թէ դուք կամենում էք անպատճառ սպանել ինձ։ Մի՞թէ ես չեմ կարող ընտրել կեանքի մի համեստ ճանապարհ, և գնալ նորանով խաղաղ և հանգիստ։ Ինչո՞ւ փշեր ցանեմ ճանապարհիս վերայ։ Արձակեցէք ինձ—ես կենդանի կթաղեմ ինձ մի որևիցէ հեռաւոր, անյայտ վանքի մէջ, և եթէ ձեզ այդ քիչ է, միջոց տուէք ինձ գտնել յաւիտենական հանգստութիւն։ Իսկ մինչև այդ ժամանակը մի հալածէք ինձ։

—Ի՞նչ են նշանակում յուսահատութեան այդ խօսքերը, խստութեամբ ասաց ծերունին.—մի՞թէ և այս առաջարկութիւնը չես հաւանում դու։ Կամ գուցէ քո երևակայութիւնը նկարում է աչքիդ առջև մի աւելի փառաւոր ապագայ։ Եթէ այդպէս է, յայտնիր ինձ քո ցանկութիւնը։ Զլինի՞ թէ յափշտակուել ես Խամարէթի ազգասիրական ոգևորուած խօսքերով։ Այդ ամիտ ցնորաբանը համարձակուում է ձգել իւր հայեացքը բախտի և փառքի բարձրագոյն ծայրերի վերայ; իսկ իւր ոտների տակ բացուող անդունդը նա չէ տեսնում։ Այդ խելացնոր գիշերային թեթեռնիկը երկնային բոց է համարում կրակը, որ կայրէ նորան։ Գի-

տես թէ ի՞նչ էի ստիպուած անել։ Խնայելով նորան՝ ես ստիպուեցայ փակել նորան ինչպէս մի անմիտ մանուկ, ինչպէս մի խելագար, որ փրկեմ նորան կորուստից։ Ես հարկադրուեցայ առ ժամանակ զրկել նորան ազատութիւնից, որ ազատեմ նորան մշտական շղթաներից և անարգ դատավճռից։ Մի՞թէ դու համակրում ես նորա անմիտ և կատաղի դիտաւորութիւններին։ Բայց չէ՞ որ նոցա կարելի է պատասխանել միայն ժպիտով, և այն՝ արհամարհական ժպիտով։ Աշխատիր հեռու մղել քեզանից այդպիսի մտքերը, ապա թէ ոչ դու սաստիկ կվշտացնես հօրդ։

— Բայց, ո՞վ ասաց ձեզ, գոչեց Աննան, համբերութիւնից դուրս եկած, — ո՞վ ասաց ձեզ, որ գլխիս մէջ կարող էր երբ և իցէ ծնուիլ այդպիսի միտք։ Առիւծի զգացմունքները ազնիւ են, արժանի կատարեալ համակրութեան և զարմանքին։ Մեր բոլոր հայրենակիցների մէջ նա միայն բարձրացնում է դեռ ևս իւր հպարտ գլուխը։ Եթէ նորան բաւական է իմ լիակատար համակրութիւնը, — այո՛, իմ բոլոր համակրութիւնը, բոլոր սրտով ցանկանում եմ, որ նա յաջողութիւն ունենայ։ Բայց ես ինձ պահում էի նորա հետ այնպէս, որ չէի կարող անգամ տեղի տալ նորան ենթադրելու իմ մէջ այդ տեսակ զգացմունքներ։

— Մի բարկանար, Աննա, ասաց Պետրալիֆասը, ես միշտ հաւատացած էի բոլորովին, որ քո սրտի մէջ չէր կարող ծագել ոչինչ ստոր, ոչինչ այնպիսի, որ անարժան լինէր քեզ և քո հօր պատուին։ Ես գիտեմ, որ դու ամենից աւելի հաւանում ես Աթէնքի իշխանի առաջարկութեանը։

— Ի՜նչ դատարկ բան, պապս... կակազելով ասաց Աննան, և սաստիկ կարմրեցաւ։

— Այո՛, պնդում էր Պետրալիֆասը, — ես տեսնում եմ, որ դու մի առանձին բարեհաճութեամբ ընդունում ես նորա դեսպանին։ Ի հարկէ, Օտոնը հզօր իշխան է և Գիւին կլինի նորա ժառանգը։ Բայց առաջին որ, սիրելի զաւակս, մենք ամենևին չենք ճանաչում նորան, իսկ ես այնպէս հրսկում եմ քո բախտաւորութեան վերայ, որ երբէք չեմ համաձայնուի յանձնել քո վիճակը մի մարդու, որի բնաւորութիւնը և արժանաւորութիւնները ես չեմ ուսումնասիրել։ Երկրորդ՝ եթէ Աթէնքի իշխանուհու դրութիւնը քեզ

շատ հաճելի և փառաւոր է թւում, Պելոպոնէսի իշխանուհու դրութիւնը աւելի փառաւոր կլինի։ Դը. Լա Ռոշը անարժան չէ քեզ, բայց երիտասարդ Վիլլարդուինը ամենից արժանաւորն է։ Գուցէ հօրդ համար աւելի էլ օգտակար է ազգականութիւն ունենալ հզօր հարևանի հետ, որ իշխում է Աթէնքում և Թէբայում, բայց եթէ նա ազգականութիւն կկապէ Պելոպոնէսի իշխանի հետ, Օտոնը ամենևին վտանգաւոր չի լինի նորա համար, բաւական չէ այդ՝ նա կլինի հօրդ ձեռքին իբրև մի գերի։ Իսկ այդ վերջին առաւելութիւնը աւելի մեծ նշանակութիւն ունի։ Մանաւանդ, որ եթէ այդ ամուսնութիւնը շահաւէտ է մեզ համար, շահաւէտ է նոյնպէս և Վիլլարդուինի համար։ Ոչ մի ուրիշ կապ չէ կարող այդչափ համապատասխան լինել մեր երկու կողմի ընդհանուր ցանկութիւններին։ Ուստի, այս բոլոր հանգամանքների պատճառով, ես, աղջիկս, կամենում էի զգուշացնել քեզ, որ շուտով, գուցէ վաղը, Գոդֆրիդը կենդրէ քո ձեռքը։

— Իսկ ես կբացասեմ նորան, հաստատամտութեամբ պատասխանեց Աննան։

— Դէ, հոգիս, դա մի մանկական կամակորութիւն է, ասաց Պետրալիֆասը, յօնքերը կիտելով։ Ես զիջանում էի մինչև որ թոյլ էին տալի օգուտը և խոհեմութիւնը. իսկ այժմ, ըստ որում ունիմ հայրական իրաւունք, ես օգուտ կքաղեմ սորանից ամենայն խստութեամբ։ Ես եկայ այստեղ յայտնելու քեզ հօրդ և իմ վճիռը, և ոչ թէ վիճելու քեզ հետ։

Ասելով այս խօսքերը կոշտ ձայնով՝ ծերունին դուրս գնաց սենեկից։

Աննան երկար ժամանակ նայում էր դրան վերայ ինչպէս ծանր քարի տակ սեղմուած, և կարծես թէ կորցրեց և՛ զգացմունքը և՛ շարժողութիւնը։ Բոլոր արիւնը յորդութեամբ հոսեց դէպի սիրտը, որ և սկսեց այնպէս սաստիկ բաբախել, որ նորա զարկի ձայնը կարելի էր լսել հեռուից։ Վերջապէս առատ և ջերմ արտասուքները թափեցին աչքերից, նա վեր թռաւ տեղից և սկսեց արագութեամբ քայլել սենեկի մէջ։

Ամեն տեսակ վճիռները մէկը միւսից աւելի անիրա-

գործելի, թափառում էին նորա բորբոքուած գլխի մէջ. մերթ նա մտածում էր թոյնի վերայ, մերթ կամենում էր վազել Գոտիէի մօտ կամ տեղեկութիւն տալ նորան, որ կարօտ է նորա օգնութեան. և այլն։ Ցետոյ դարձեալ թափուում էին արտասուքներ։

Վերջապէս, երբ փոքր ինչ հանգստացաւ Աննան և մտքերը ժողովեց, նա որոշեց, որ միւս օրը, որսորդութեան ժամանակ տեսնուի Գոտիէի հետ և յանձնէ իւր վիճակը նորա պաշտպանութեան։

23.

ՄԷԿԻ ՏԵՂ ԵՐԿՈՒ ՆՀԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ։

Կանուխ սառաւօտից Մօրէի իշխանի պալատում սկսուեցաւ աղմուկ և շարժողութիւն. ասպետները մեծ քանակութեամբ հաւաքուեցան նշանակած ժամից առաջ։ Զապէլը, որ նոյնպէս ցանկացաւ մասնակցել որսորդութեան, հագել էր համապատշաճ շորեր և ընդունում էր հիւրերին։

Մօր կողքին կանգնած էր փոքրիկ Վիլհելմ Կալամատցին. մանուկի ուսի վերայ կախած էր արծաթի աղեղն, իսկ աջ ձեռքի վերայ նստած ունէր մի բազէ։ Մանուկը թրռչկոտում էր ուրախութիւնից, որ գնում էր որս անելու։

Շուտով երևեցաւ և Ռօբէրը։ Համոզուելով որ անհընտրին է փոխել հանգամանքները, նա փոխանակ անօգուտ կերպով տրտնջալու ճակատագրի վերայ և բարկանալու մարդոց վերայ, իւրեան յատուկ բարեսրտութեամբ ընդունում էր Վիլարդուինի բարեկամական ցոյցերը և յօժարութեամբ յետաձգեց իւր գնալը, որ մասնակցէ որսորդութեան։

Ցետոյ ներս մտաւ Գոդֆրիդը մի խումբ երիտասարդ բարոնների հետ. նորա ետևից Պետրալիֆասը իւր թոռնուհու հետ։ Աննան շատ գեղնած էր։

Վերջապէս երևաց Ագնէսը կռթնելով Վիլլարդուինի թևի վերայ իւր բոլոր ուղեկիցների հետ։

Վիլլարդուինը նստեցաւ և հրաւիրեց նստել բոլոր հասարակութիւնը։ Ծառաները մատուցին զանազան քաղցրեղէններ և ըմպելիքներ, մեծարելով նախ կանանց և ապա ասպետներին։

Մօտ էր արդէն ձի նստելու ժամանակը, և ահա՛ յանկարծ դուռը բացուեցաւ և ներս մտաւ Ռէդէտի եպիսկոպոսը Կ. Պոլսի նաւերի նաւապետների հետ։ Եպիսկոպոսը մօտեցաւ Ագնէսին, որ փոքր ինչ շփոթուեցաւ նորա գալուց, ու գլուխ տալով, ասաց։

— Իշխանուհի՛, ահա՛, նաւապետները եկել են յայտնելու ձեզ որ քամին փոխուել է, և եթէ դուք չէք կամենում կորցնել յաջող րոպէն, ժամանակ է առագաստները բանալու։

— Ի՞նչպէս, գոչեց Վիլլարդուինը, բանա՞լ առագաստները, երբ պատրաստուած է որսորդութիւնը։ Ո՛չ, այդ անկարելի՛ է։ Վա՛ղը։

— Իշխանուհի՛, ասաց նաւաստիներից մէկը, խորը գլուխ տալով, — այս քամին չէ կարող երկար տևել։ Երբ մենք կհեռանանք Մօրէից մի քանի մղոն, այնուհետև մենք այլ ևս երկիւղ չենք ունենայ քամու փոփոխութիւնից։ Բայց եթէ օգուտ չենք քաղի ներկայ յաջող րոպէից, շատ հաւանական է, որ ստիպուած կլինենք սպասել էլի մի քանի օր։

— Իշխանուհի՛, ասաց Տաճարականներից մէկը, մենք պէտք է գնանք։ Մինչև այժմ ձերդ բարձրութեան ճանապարհորդութիւնը ուշացաւ չափից դուրս. մեզ անհնարին կլինի արդարանալ կայսեր առաջ եթէ մենք դարձեալ կը յետաձգենք գնալը առանց ծանր պատճառների, երբ քամին յաջողակ է մեզ։

— Հա՛յր Տաճարական, պատասխանեց Ագնէսը, խոստովանում եմ — ես չունիմ ձեր անհամբերութիւնը։ Ի՞նչու էք կամենում պոկել, հեռացնել ինձ այդպէս շուտով այս տեղից, ուր ես այնպէս բախտաւոր եմ։

Եւ իշխանուհին սեղմեց Զապէլի ձեռքը։

— Բայց, ձերդ կայսերական բարձրութի՛ւն, պատասխանեց Տաճարականը, — դուք բարեհաճեցաք լսել, որ մի օրուայ յետաձգութիւնը կպատճառէ մեծ կորուստ ժամանակի։

— Մի՛ լսէք դորան, ասաց Վիլլարդուինը, — դա հաւատարիմ է իւր պարտաւորութեան և անգութ առ ձեզ։ Մի՞թէ դուք կկամենաք ուրախութեան օրը փոխել տրտմութեան և վշտի։ Բոլոր, այստեղ հաւաքուած, ասպետների

հետ և նոցա կողմից ես աղաչում եմ ձեզ մնալ մեզ մօտ էլի մի օր։

Այդ բոպէին երիտասարդ Գոդֆրիդը մօտեցաւ Ագնէսին և ծունր իջնելով ասաց նորան.

—Ձերդ բարձրութիւն, մինչդեռ կամենում են ձեզ պոկել հեռացնել հայրենակիցների միջից և ուղարկել ձեզ օտար և անծանօթ մարդոց մօտ, երբ կամենում են զոհ բերել ձեզ թագաւոր—մանուկին, որ գուցէ դեռ դայեակի խնամքի տակն է,—թոյլ տուէք ինձ ընկնել ձեր ոտների առաջ և աղաչել չհնազանդուիլ, չզիջանել սարսափելի բռնադատութեան։ Մնացէք, մնացէք մեզ մօտ։ Մեր նիզակներից, սրերից, ձեռքերից և սրտերից ամրոց կկազմենք և կպաշտպանենք ձեզ ամենքից և ամեն բանից։ Գուցէ սիրտը կուրացնում է խելքս. գուցէ ինձ մեղադրեն անվայել համաձայնութեան մէջ, յանցաւոր յանդգնութեան մէջ, ինձ, որ ծնուել եմ և մեծացել արքայական գահից հեռու, և վստահանում եմ աչք բռնել թագի ամենաթանկագին զարդի վերայ։ Այնու ամենայնիւ, առաջի Աստուծոյ, ի ներկայութեան բոլոր բարոյների և ասպետների, որ հաւաքուած են այստեղ, առաջի իմ օգոստափառ ծնողների, որ չեն մերժի իմ խօսքերը,—ես առաջարկում եմ ձեզ իմ ձեռքս, անընկճելի հաւատարմութիւն, և յաւիտենական սէր։ Ե՛ս չեմ վեր կենայ ծունկիցս մինչև որ ձերդ բարձրութեան ձեռքը ոտի չկանգնացնէ ինձ, կամ չտայ մահացու հարուած։

Լսելով այդ տարօրինակ ճառը, բոլոր հասարակութիւնը մնաց ապշած և մի խուլ քրթմնջումն լսուեց ամեն կողմից։

Ագնէսը մեկնեց ձեռքը։

—Վեր կացէք, ասպետ, ասաց նա։

Ցետոյ ինքն էլ ոտի կանգնելով, Ագնէսը շարունակեց։

—Եւ ես նոյնպէս առաջի Աստուծոյ, բոլոր բարոյների և ասպետների, և Մօրէի իշխանի և նորա ամուսնու, որոց համարում եմ այժմ իբրև իմ ծնողների տեղը բռնողներ, յայտնում եմ, որ ընդունում եմ այն ձեռքը, որ ինձ առաջարկուած է այնպէս վեհանձնաբար, և ճանաչում եմ իբրև իմ ամուսինն և տէր Գոդֆրիդ Վիլլարդուինին։

—Ինչպէս, գոչեց ծերունի Տաճարականը, ինչ ասացիք։ Մտածեցի՞ք դուք արդեօք, ձերդ բարձրութիւն, թէ ինչ ասացիք այս բոպէիս։ Երևի դա մի հանաք էր, բայց թոյլ տուէք ինձ նկատել - մի անվայել և անտեղի հանաք։

—Սա հանաք չէ՛, խստութեամբ ասաց Ագնէսը, — այլ իմ անդառնալի վճիռն է։

—Բայց ես երբէք չեմ կարող համաձայնուիլ այդ բանին, ասաց Տաճարականը.—բնաւ ներկայ չեմ լինի այդ պսակին, մտածե՞լ էք դուք թէ ո՛րպէս մեծ կլինի ձեր մօր վիշտը, ո՛րպէս սաստիկ - կայսեր բարկութիւնը։

—Ես չեմ էլ խնդրում ձեր համաձայնութիւնը, պատասխանեց Ագնէսը. ես ներում եմ ձեզ ձեր խօսքերի անվայելչութիւնը, իմանալով որ նոքա բղխում են ձեր հաւատարմութիւնից առ կայսրը։ Ես նոյնպէս չեմ խնդրում մնալ այստեղ ո՛չ ձեզանից և ո՛չ Ռէդէտի յարգելի եպիսկոպոսից, որ նոյնպէս, ինչպէս և դուք, չէ համակրում կամ չէ համարձակում համակրել իմ վճռին։ Վերադարձէք Կ. Պոլիս, ասացէ՛ք իմ սիրելի մօրը՝ որ նորան խաբել էին, որ ինձ ուղարկել էին իբրև զոհ նենգամիտ քաղաքականութեան, և մայրս կօրհնէ ձեզ որ դուք ազատեցիք ինձ։ Ասացէ՛ք կայսեր, որ փոխանակ մի երեխայի, որին կաթով են կերակրում ովկիանոսի ափում, նորան փեսայ կլինի ամենաքաջ ասպետը բոլոր քրիստոնեայ աշխարհի մէջ, ժառանգ երկրիս ամենագեղեցիկ իշխանութեան, ժառանգ մի երկրի, որ կանգնած է նորա գահի պատուանդանի մօտ։ Եւ ես հաւատացած եմ, որ կայսրը, երբ նորա բարկութիւնը կհանդարտուի, նոյնպէս շնորհակալ կլինի ձեզանից։ Գնացէ՛ք։

Թնդացին աղմկալից, ոգևորուած գոչումներ, և Գոդֆրիդը տարփանքով համբուրեց իւր հարսնացուի ձեռքը։ Իսկ ինքն Ագնէսը ընկաւ Վիլլարդուինի և Զապէլի գիրկը։

Դահլիճի մէջ կային երկու անձն, որոց վերայ այդ անցքը գործեց խիստ մեծ, բայց ոչ նման, ազդեցութիւն։

Աննան, որ եկել էր այդ հանդիսին ներկայ լինելու իբրև գերի, շղթաներով կապուած, իբրև մի զոհ, որ տանում էին զոհելու, Աննան, հէնց որ տեսաւ Գոդֆրիդի շարժմունքը և հասկացաւ նորա միտքը առաջին խօսքերից

յետոյ, զգաց որ՝ նորա սրտից վայր ընկաւ մի ծանր քար. ուրախ ժպիտը խաղաց նորա շրթունքի վերայ։ Մինչև այդ ժամանակ նա լուռ էր իբրև մի անբան էակ, իսկ այժմ սկսեց ուրախ խօսել Գոտիէի հետ, որ պատահմամբ կանգնած էր նորա մօտ։

Պետրալիֆասը, ընդհակառակն, մնացել էր պաղած իբրև արձան. նորա մազերը և մօրուքը բարձրացել էին ցից ցից։ Այդ ծերացած երեսի տպաւորութիւնը նոյն ըստ էին մի հետաքրքիր պատկեր կներկայացնէր նկարչին։ Զըզային գրգռմունքը տիրեց ծերունուն, նա օրօրւում էր իւր աթոռի վերայ և շրթունքների ջղային շարժմունքներով փնթփնթում էր կամացուկ։

— Կատակերգութիւն, դատարկ կատակերգութիւն, առաջուց պատրաստած կատակերգութիւն։

Վիլլարդուինը համբուրելով իւր ապագայ հարսին, սառնասրտութեամբ մօտեցաւ Պետրալիֆասին և բռնելով նորա ձեռքը ասաց բարձր ձայնով.

— Ասեմ փայլ տէր, շնորհաւորեցէք իմ որդուն։

Յետոյ աւելացրեց ականջին։

— Շատ տարօրինակ բնաւորութիւն ունի իմ Գոդֆրիդը. երբ երեկ իմ առջև լռում էր, մի՞թէ կարող էի գուշակել թէ ինչ էր նորա միտքը։

Պետրալիֆասը չպատասխանելով այդ նկատողութեանը, ասաց.

— Ի բոլոր սրտէ շնորհաւորում եմ օգոստափառ զուգակիցներին և յոյս ունիմ, որ յարմար դէպք կունենանք երբ և իցէ, ես և իմ փեսաս, ապացուցանել նոցա մեր անկեղծ զգացմունքները։ Իսկ այժմ, ես էլ իմ կողմից խընդրում եմ ձերդ բարձրութիւնից շնորհաւորել իմ թոռնուհուս։

Եւ ծերունին բռնեց Աննայի ձեռքը, որ չէր հասկանում թէ էլի ինչ նոր բան է մտածել իւր պապը։

— Օգուտ եմ քաղում ներկայ բարեբախտ դէպքից, ասաց Պետրալիֆասը, և յայտնում եմ այստեղ հաւաքուած բոլոր բարեկամներին և ասպետներին, որ ես նշանադրում եմ իմ թոռնուհուս, Ելլադայի իշխանի աղջիկ Աննային, Վիլլհէլմի հետ, որ նորին բարձրութեան Ամէնքի իշխանի եղբօրորդին է և ժառանգ։ Խնդրում եմ ամենքից շնորհաւո-

րել մեզ։ Ասպետ Գոտիէ, տարէք Վիլհելմին այս մատանին, նա ձեզ ուղարկել էր մեզ մօտ խնդրել սորան։

Գոտիէն ընդունեց մատանին և նստեց Աննայի մօտ։

Պապի խօսելու ժամանակ, խեղճ օրիորդը ապշեցաւ և մնաց նստած անշարժ, դեղնած, ինչպէս մարմարիոնի արձան։ Նա անկարող էր մի խօսք անգամ արտասանել։

Գոտիէն ասաց Նորան.

—Այս մատանին—անգին գանձ է։ Դուք կարող էք հասկանալ, որ ով ստացաւ սորան չէ կարող բաժանուիլ սորանից։ Օտն դը Լա Ռոշը, որ ուղարկեց ինձ այստեղ խնդրել ձեր ձեռքը, և Նորա եղբօրորդին Վիլհելմը հզօր իշխաններ են. նոքա տիրում են Աթէնքին իւր ընդարձակ ձիթենի պարտէզներով, հերոսների մարմարեայ պալատներով և փիլիսոփաների դպրոցներով. նոքա տիրում են Թէբային իւր բարեբեր դաշտերով, ծաղկազարդ լեռներով, ուր բղղում են մեղրաճանճերի անհամար երամներ. նոքա սնդուկների մէջ շատ ոսկի կայ. նոքա զինարանների մէջ շատ զէնքեր և նիզակներ։ Եթէ կհրամայէք, ես կտանեմ այս մատանին Վիլհելմին։ Բայց ես ճանաչում եմ մի ուրիշ ասպետ, որ չունի ոչ պալատներ, ոչ ամրոցներ, ոչ գանձ. նա ունի միայն մէկ նիզակ, իւր սեփական նիզակ։ Բայց այդ ասպետը ունի այն, ինչ որ հազիւ թէ ունենայ Նորա իշխանը—ունի սիրտ վառ, լի սիրով և անձնուիրութեամբ։ Այդ ասպետը դնում է իւր սիրտը ձեր ոտի տակ և թոյլտուութիւն է խնդրում թողնել իւր մօտ սոյն մատանին։

—Պարոն Գոտիէ, ասաց Պետրալիֆասը փոքր ինչ անպատուող շեշտով, և յօնքի տակից նայելով Գոդֆրիդի վերայ, այդ կատակերգութիւնը գուցէ զուարճալի է և սրամիտ, բայց, թոյլ տուէք ասեմ, և անտեղի։

—Անտեղի կատակերգութի՞ւն, ասաց Գոտիէն, ներեցէք ինձ։ Ես պատասխան եմ սպասում միայն Նորանից, որը միայն իրաւունք ունի վճռելու, թէ՝ ում պէտք է տամ սոյն մատանին—հզօր իշխանի՞ն, թէ հաւատարիմ ասպետին։

Այդ միջոցին Աննան արդէն ոգի առաւ և իսկոյն հասկացաւ, որ գուցէ այդ բոպէից է կախուած իւր ապագայ վիճակը։

—Պարոն ասպե՛տ, ասաց նա,—այդ մատանին չէր նշա-

նակուած ձեռքից ձեռք անցնելու համար։ Եթէ Վիլհելմ դը-Լա Ռոշը ցանկանում էր ստանալ այդ մատանին, նա պէտք է ինքը գար այստեղ և աշխատէր ստանալ դորան։ Ձեր ձեռքի մէջ է այժմ մատանին, և ուրիշ ոչ ոք իրաւունք չունի պահանջել դորան։

Գոտիէն իսկոյն իւր ձկոյթի վերայ հագցրեց մատանին, և ընկնելով Աննայի ոտի տակ, հագցրեց նորա մատին մի ադամանդեայ մատանի, որ փայլում էր հազարաւոր կայծերով։

— Ես ընդդիմադրում եմ իմ հայրական իշխանութիւնս, կատաղաբար գոչեց Պետրալիֆասը. ես երբէք չեմ համաձայնուի այդպիսի խայտառակութեան։ Գոտիէ, դուք դաւաճան էք և յափշտակող ձեր իշխանի առջև. դուք յափշտակեցիք իմ թոռնուհու սիրտը և մոլորեցրիք նորա միտքը։ Վիլհելմ դը Լա Ռոշի անունով, Աննայի օրինաւոր փեսացուի անունով, ես խնդրում եմ միջամտութիւն Պելոպոնէսի վսեմաշուք իշխանից, ես խնդրում եմ պատժել յանցաւորին։

Գոտիէն, ոտի կանգնելով, ասաց.

— Մի խօսք, նախ քան դուք կդատապարտէք ինձ։ Վիլհելմ դը Լա Ռոշի կողմից շնորհակալութիւն եմ յայտնում ձեզ, տղնիւ տէր. և եթէ դուք բարեհաճութեամբ ընդունել էք Վիլհելմի առաջարկութիւնը, տուէք ինձ համբուրել ձեր ձեռքը։ Վիլհելմը... ես եմ։

Նա բացեց իւր վերարկուն և ցուցեց կուրծքի վերայ ոսկեթելով կարած դը-Լա Ռոշների նշանը...։

— Կներէք ինձ արդեօք, ասաց նա, սոյն անմեղ խորամանկութիւնը։

— Վիլհելմ դը Լա Ռոշ, գոչեց Վիլլարդուինը, բռնելով Վիլհելմի ձեռքը։ Ամենամեծ բախտաւորութեամբ գրկում եմ իմ երևելի բարեկամի եղբօրորդուն, ինչպէս և սրբախութեամբ ընդունեցի նորա դեսպանին։ Բայցի՞նչուծածկուում էիք կեղծ անունի տակ։

— Ես նոր եմ եկել Ֆրանսիայից, պատասխանեց Վիլհելմը, ժպտալով, — ձեր արքունիքում ես ամենևին յայտնի չէի, ուստի օգուտ քաղեցի այդ դէպքից որ նուաճեմ Աննայի սիրտը ինձ համար, և ոչ թէ Աթէնքի իշխանութեան ժառանգի համար։ Աննան ընդունեց Գոտիէի առաջարկութիւնը, իսկ դուք, հա՛յր իմ, — դարձաւ նա դէպի Պետրա-

լիֆասը,—կընդունէք ինձ արդեօք ձեր գրկի մէջ ինչպէս որդի իշխան դը-Լա Ռոշի։

Պետրալիֆասը գրկեց Վիլհելմին։

—Որդեա՛կս, ասաց ծերունին, ընդունում եմ ձեզ Աննայի հօր անունով։ Դուք կարող էք պարծենալ ձեր ճարպիկութեամբ, դուք խաբեցիքնոցա, որոնք խաբում են ուրիշներին։

Վիլլարդուինը ամենևին նշան չցոյց տուեց թէ հասկացաւ այդ ակնարկութիւնը։

—Պարո՛ններ, ասաց նա,—այսօրուայ որսորդութիւնը պատրաստում է ի պատիւ երկու նշանագրութեան Վիլհելմ դը-Լա Ռոշի՝ Աննա Կոմնենի հետ, և իմ որդի Գոտֆրիդի՝ Ագնէս դը-Կուրտինէի հետ։ Գնա՛նք ուրեմն։ Պատրաստ է, մեզ են սպասում։

Այդ նշանից յետոյ բոլոր ներկայ եղողները, որ մինչև այդ ժամանակ պահպանում էին քաղաքավարութեան և պատուապահութեան լռութիւնը, ուրախութեամբ գոչեցին և զուարթ աղմուկով դուրս գնացին դահլիճից։ Պալատում պատահած անցքերի լուրը կայծակի արագութեամբ տարածուեցաւ բոլոր քաղաքի մէջ, և բոլոր ճանապարհներէ վերայ անթիւ և ոգևորուած ժողովուրդը կեցցէներով, շնորհաւորութիւններով և բարեմաղթութիւններով էր ընդունում նոր նշան դրուածներին։

24.

ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾԸ

Մինչդեռ ուրախ հասարակութիւնը գնում է ձիերով սարերը, ուր սպասում է ասպետներին որսորդութեան քաղցը զբօսանքը, յիշենք որ՝ Խամարէթը նստած է իւր մըռայլ բանտի մէջ։ Առիւծը այն եռանդուն, դիւրագրգիռ անձերից էր, որոց մարմինը աւելի շուտ է յոգնում, քան թէ հոգեկան ոյժերը։ Մենք տեսանք թէ ինչպէս շրջապատող խաւարից, ազատուելու, դուրս պրծնելու, անօգուտ ջանքերով սաստիկ յոգնած ենթարկուեց նա վերջապէս քնի ազդեցութեան։

Բայց Առիւծի հոգին արթուն էր։

Հերոսի ազատ հոգին թափանցեց անցաւ բանտի հաստ պատերը, և յիշողութեան և յոյսի ապակու միջից աղօտ ին կերպով ներկայացնում էր բանտարկուածին մերթ լուսավառ լեռները, մերթ քարանձաւներից և խիտ անտառներից դուրս եկող յոյներ, որոնք գնում էին դէպի Կ. Պոլիս սաղմոսներ երգելով, արմաւենու ոստերը ձեռքին բռնած։ Երբեմն նորան երևում էր պատերազմի դաշտ, աղմուկներով թնդած, արիւնով ծածկած, ամեն կողմից արհաւիրք, հեծեծանք, աղաղակ, շփոթութիւն. այնտեղ, հեռու, լսւում էին հին յունական երգեր։ Ինքը Խամարէթը անշարժ պառկած էր գետնի վերայ։ Պետրալիֆասը ծունկով սղմում էր նորա կուրծքը և ծիծաղում էր չարախնդացութեամբ։ Պառկած զինուորի գլխի վերայ ճախրում էր Աննան, ինչպէս հին չաստուածուհին յաղթութեան։ Նա տարածում էր իւր ոսկեհուռ թևերը և ցոյց էր տալիս նորան երկինքը։

Այդ երևակայական ցնորքների և երազների մէջ զարթեցաւ Խամարէթը։ Արշալուսի նուազ նշոյլները դժուարութեամբ մտնում էին ներս ստորերկրեայ բանտի վանդակապատ փոքր պատուհանով։ Ամենից առաջ բանտարկուածը զննեց իւր բանտարկութեան տեղը։ Աւա՛ղ. մի արագ հայեացքը հաստատեց նորան այն, ինչ որ նախընթաց գիշերը ենթադրում էր նա։ Նա գտնուում էր մի ստորերկրեայ սենեակի մէջ հաստ կամարներով ծածկուած։ Մի երկաթի դուռը, պինդ փակած, և մի փոքր, նեղ, վանդակապատ պատուհան, գրեթէ կամարի տակ.—ահա՛, բոլոր ելքը։ Այդ պատուհանից երևում էին միայն երկինքը և սարերի գագաթները խարոյկներով, որոց վերջին փայլմունքը մաքառում էր արշալուսի հետ։

Նայելով գետնին՝ Խամարէթը զարմանքով տեսաւ իւր մահճակալի մօտ մի պարկ պարանով կախուած. նորա մէջ դրած էր մի կուժ ջուր և կերակուր։ Ինչպէս երևում էր այդ պարկը կախել էին փոքր պատուհանից նորա քնած ժամանակ։

Այժմ Խամարէթը սկսեց հասկանալ, որ ինքը դարձել է զոհ ոչ թէ մոռացման, այլ ուխտադրուժ չարամտութեան։ Այդ համոզմունքը աւելի ևս սաստկացրեց նորա

շփոթութիւնը և բարկութիւնը։ Նա պարզ տեսնում էր որ այդ տեղ կար մի դաւաճանութիւն, բայց չէր կարողանում հասկանալ ո՛չ դորա պատճառը և ո՛չ նպատակը։ Նորից կատաղած, յարձակուեցաւ Առիւծը դրան վերայ, յուսալով պոկել օղակները կամ կոտրել փակերը, բայց շուտով տեսաւ որ՝ անօգուտ էր իւր ջանքերը։ Նա սկսեց աղաղակել իւր բոլոր ուժով, բայց նոյնպէս, ինչպէս և գիշերը, նկատեց որ աղաղակի ձայնը կորչում է կամարների տակ, վերադարձնելով նորան միայն արձագանքը, մերթ խլճող, մերթ ծաղրող։

Ցուսահատութեան մէջ, Խամարէթը ինքն էլ չէր իմանում թէ ինչ էր անում. պատռելով կատաղաբար իւր վերարկուն, ձեռքը դիպաւ դաշոյնին։ Առիւծը հանեց դաշոյնը պատեանից և կամենում էր ցցել կուրծքի մէջ. բայց երբ սառը պողպատը դիպաւ մարմնին, բանտարկուածը սթափուեցաւ և սկսեց քննել իւր արարմունքը։

— Եթէ ես ինքս ինձ սպանեմ, մտածում էր նա, դա մի մեծ յաջողութիւն կլինի իմ բոլոր թշնամիների համար, որպիսիք և լինին նոքա։ Եթէ ես կմեռնեմ, կկործանուի ուրեմն այն ձեռքը, որ բռնած ունի Ցունաստանի վիճակը, բայց, մինչդեռ, գուցէ, ապագան խոստանում է ինձ ամենամեծ երջանկութիւն։ Ո՛չ, այդ կլինէր խելագարութիւն և եղեռնագործութիւն։

Խամարէթը փոքր ինչ հանդարտուեց, ծանր քայլերով մօտեցաւ կերակրին, որ պատրաստուած էր նորա համար, և կերաւ այնքան, որքան միայն հարկաւոր էր ոյժերը կաղդուրելու համար, որին այնպէս մեծ պէտք ունէր։ Մի անգամ էլ ուշադրութեամբ զննելով դուռը, Առիւծը մօտեցաւ մահճակալին, բարձրացրեց, կոտրեց ոտները, հանեց տախտակները, դրեց պատի մօտ, բարձրացաւ նոցա վերայ մինչև պատուհանը, և մի ձեռքով բռնուեցաւ երկաթի վանդակից։

Նայելով պատուհանից, նա տեսաւ պարտիզի մի մասը, որ շատ հեռու էր բնակարանից։ Ոտներով յենելով ճարտարապետական խարսխի վերայ, որ բոլորում էր պատերի շուրջը, նա բոլոր ուժով սկսեց թափ տալ երկաթի վանդակը, բայց շուտով համոզուեցաւ որ անկարելի

էր կոտրել։ Խամարէթը վերցրեց իւր դաշոյնը և փորձեց կտրել նորանով երկաթները կամ տեղահան անել վանդակը. բայց այդ էլ անհնարին եղաւ։

Մնում էր թողնել, ձգել անօգուտ փորձը։ Առիւծը նորից թռաւ գետինը, վերցրեց իւր թրի երկաթի պատեանը և սկսեց ծեծել նորանով դաշոյնի բերանը, մինչև որ դարձաւ սղոցի նման։

Աւարտելով այդ գործը, Խամարէթը դարձեալ բարձրացաւ պատուհանի մօտ։ Մի ձեռքովնա կախ ընկաւ վանդակից, իսկ միւսով գործ դրեց իւր ինքնահնար սղոցը։ Աշխատել կարելի էր ծանր կերպով և պէտք էր մեծ զգուշութիւն, որովհետև ամենափոքր ձայնը կարող էր գրաւել բանտի պահապանների ուշադրութիւնը և ոչնչացնել աղատուելու հնարքը։ Սկզբում գործի յաջողութիւնը շատ չընչին էր. Խամարէթը արդէն սկսում էր յուսահատուիլ, բայց յանկարծ անպատմելի ուրախութեամբ նկատեց որ վանդակից սկսեց թափել երկաթի մանր թեփ։ Նա կրկնապատկեց աշխատանքը, մոռանալով բոլոր զգուշութիւնը։ Ամբողջ գետնափորի մէջ հնչում էր նորա գործիքի ձայնը, որ մաշում էր կամաց կամաց երկաթի հաստութիւնը։

Վերջապէս սղոցի ձայնը սթափեցրեց Խամարէթին. նա սարսափեց, յիշելով վանդակը, որին ենթարկուում էր, և կանգ առնելով՝ ահաբեկուած սպասում էր թէ ինչ կլինի։ Ի մեծ զարմանս իւր, բանտարկուածը համոզուեցաւ որ չէ գրաւում ոչ օրի ուշադրութիւնը. նա խրախուսուեցաւ, և աւելի մեծ եռանդով և զգուշութեամբ շարունակեց իւր գործը։ Հեւալով, քրտինքի մէջ լողալով, Խամարէթը աշխատում էր մօտ երեք ժամ, գրեթէ առանց հանգստանալու։ Վերջապէս, վանդակը կոտրուեցաւ, բայց չընկաւ բոլորովին։ Հարկաւոր էր սղոցել նորան և վերի կողմից, ինչպէս սղոցուած էր արդէն ցածի կողմից։ Այդ աշխատանքը խլեց էլի մի քանի ժամ, վերջապէս՝ վանդակը ընկաւ։

Խամարէթը դուրս հանեց նեղ պատուհանից առաջ գլուխը, յետոյ իրանը, և թռաւ պարտէզը։ Անպատումուրախութեամբ, նետի պէս վազեց Առիւծը դէպի պարիսպը, մագլցեց պատի վերայ, և թռաւ փողոցը ազատ և ուրախ։

Կէսօրից երկու ժամի չափ անցած էր։

Նորից ստանալով իւր ազատութիւնը, Խամարէթը փոխանակ հեռու փախչելու այնտեղից, որտեղից դուրս պըրծաւ այնպիսի դժուարութեամբ, յետ դարձաւ, մօտեցաւ Պետրալիֆասի տան և սկսեց թակել դուռը։ Նորա նպատակն էր նախատել Պետրալիֆասին իւր դաւաճանութեան համար և հաշիւ պահանջել նորանից այդպիսի վարմունքի համար. և գուցէ տեսնուիլ Աննայի հետ և նորանից իմանալ իւր վիճակի վճիռը։

Ծառան, բաց անելով դուռը, յայտնեց Խամարէթին թէ Աննան և Պետրալիֆասը գնացել են իշխանի հետ որսորդութեան։

— Այդ անյաջողութիւնը գրգռեց Խամարէթին։ Հազար տեսակ նոր ենթադրութիւններ կուտակուեցան նորա գլխում, անկապ յաջորդելով մէկը միւսին։ Նորա առաջին միտքն էր վագել սարերը, վառել խարոյկներ, տալ ապըստամբներին երրորդ նշանը և նոյն գիշերից սկսել մեծ ձեռնարկութիւնը։ Բայց ամենից առաջ նորան հարկաւոր էր տեսնել Պետրալիֆասին և Աննային։ Առիւծը մտածեց, որ հեշտութեամբ կարող է հանդիպել նոցա սարերում. և գընաց այն կողմը։

Խամարէթը հազիւ կարողացաւ երկու երեք փողոց անցնել Անդրավիդում, և նկատեց մի անսովոր շարժողութիւն ժողովրդի մէջ։ Նորան յայտնեցին երկու նշանադրութեան մասին, որ շարժել էին ժողովրդի ուրախութիւնը։

Այդ լուրը կայծակի պէս հարուածեց Խամարէթին։ Նա բռնեց այդ լուրը յայտնող առաջին մարդու կուրծքը, սաստիկ թափ տուեց նորան և գոչեց թէ նա լիրբ ստախօս է։ խեղճ մարդը հեռացաւ Խամարէթից, երեսին խաչ հանելով և մտածելով թէ խելագարին էր պատահել։

Յետոյ Առիւծը դիմեց միւսին, երրորդին, բայց մեքենայաբար,—և հասկացաւ, աւելի սրտով, քան թէ ականջով, որ պատասխանը միևնոյն էր։

Երբ տարակուսանքը այլ ևս անկարելի էր, նորա գլուխը պտտուեցաւ, աչքերը մթնեցան. բայց նա դարձեալ շարունակում էր գնալ փողոցներով։ Իսկ երբ խեղճը հասաւ Ս. Սոփիայի եկեղեցուն, ծունկերը ծալուեցան, ոտքերը հրաժարուեցան ծառայելուց, և նա ընկաւ եկեղեցու

դրան առջև, բոլորովին ուշաթափ, միայն երբեմն բարբաջելով մի խօսք — Աննա։

Երբ Խամարէթը ուշքի եկաւ և վերկացաւ տեղից, նա մութը կերպով մտաբերում էր թէ՝ աղօթում էր. նա շօշափեց իւր երեսը և տեսաւ, որ թաց էր արտասուքից։ Նա աչքերը դէպի երկինքը բարձրացրեց և հասկացաւ, որ երկար է մնացել պառկած, որովհետև արեգակը թեքուել էր արդէն դէպի արևմուտք։

Կեանքի և զգացմունքի հետ արթնացան Առիւծի մէջ և սրտի տոչորմունքը։ Յուսահատութեան և բարկութեան մէջ, նա վազեց դէպի ճգնաւորի խրճիթը, որ նորա ծածուկ պատսպարանն էր։ Այնտեղ բազմատեսակ մտքեր խռնուեցան նորա գլխում. մերթ նա կամենում էր գնալ պտռել բոլոր փողոցներում իշխանական ընթացքը, սպանել Պետրալիֆասին, սպանել Աննային, սպանել դը Լա Ռոշին և յետոյ սպանել իւրեան նոցա դիակների վերայ. մերթ որոշում էր վառել խարոյկները սարերի գլխին, մահու և կեանքի պատերազմ յայտնել բոլոր ֆրանկներին։

Առիւծը հանեց իւր աբեղայական շորերը, հագաւ աւելի յարմար շորեր լեռներում թափառելու համար, վերցրեց նոր զէնքեր և արագ քայլերով գնաց դէպի սարերը։ Մի ժամից յետոյ նա հասաւ բլրներին։ Մայր մտնող արեգակի վերջին ճառագայթներից յետոյ իսկոյն հասաւ երեկոյ, որ շատ կարճատև է Յունաստանում, և ապա շուտով տիրեց խաւար գիշերը։

Խամարէթը նայեց սարերի գագաթներին, ուր կամենում էր բարձրանալ, և կանգ առաւ զարմացմամբ։ Գագաթից բարձրանում էր բոցը ինչպէս հրաբուղխի բերանից. ահագին խարոյկը բորբոքւում էր և շրջապատող խաւարի մէջ նման էր մեծ գոհարի, որ փայլում է արքայական թագի վերայ։ Մի բոպէից յետոյ լուսաւորուեցաւ միւս սարի գագաթը, յետոյ երրորդը. և վերջապէս բոցավառուեցան բոլոր գագաթները, որ միայն կարող էր տեսնել աչքը հեռու հորիզոնի վերայ։

Խամարէթը կարծում էր թէ երազումն է տեսնում այդ բոլորը, նորան թւում էր թէ իւր խանգարուած երևակայութեան խաղ էր այդ։ Սարսափով նայում էր նա

այդ տարօրինակ երևութի վերայ։ Բացատրել այդ Վիլ-
լարդուինի որսորդութեամբ անկարելի էր. որսորդութիւնը
պէտք է վերջանար երեկոյեան դէմ։ Առիւծը սկսում էր
մտածել, որ չլինի՞ թէ գերբնական զօրութեան խաղալիկ
էր դարձել։ Բայց հնազանդուելով միայն ապգասիրութեան
ձայնին, Խամարէթը որոշեց նախ և առաջ գտնել այդ գաղտ-
նիքի բացատրութիւնը։ Գուցէ որևիցէ վտանգ էր սպառնում
Յունաստանին. պէտք էր դիմադրել նորան։ Նա մոռացաւ
իւր բոլոր վշտերը. և կամենում էր ապրել մինչև որ իւր
գործունէութիւնը կարող էր պիտանի լինել հայրենիքին։
Առիւծը արագութեամբ գիմեց դէպի Գայլի քարանձաւը։

25.

ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆ։

Դիշերը սաստիկ մութն էր։ Թանձր ամպերը ծածկում էին աստղերի նուազ փայլմունքը։

Ամբողջ երկու ժամ Խամարէթը գնում էր իւրեան լաւ ծանօթ լեռնային կածաններով։ Ցանկարծ նա նկատեց, որ խարոյկներից մէկը շարժուեցաւ տեղից, յետոյ երկարեցաւ լեռների լանջերի վերայ ինչպէս մի ահագին բոցեղէն օձ, որ մերթ ժողովում է և մերթ արձակում իւր օղակները։

Որքան աւելի մօտենում էր այդ անօրինակ երևոյթը, այնքան աւելի լաւ նշմարւում էր թէ ինչպէս հեռանում էին միմեանցից օձի լուսափայլ օղակները։ Եւ Խամարէթը տեսաւ, որ մարդիկ էին երկար շարքով, ձեռքին վառած կերոններով, որոնք իջնում էին սարերի լանջերով։

Խամարէթի սիրտը զարկեց աւելի սաստիկ, նա հասկացաւ որ Նորա առաջ գնում էր իշխանական որսորդութիւնը։ Առիւծը չէր իմանում թէ ինչ անէր. սկզբում նա կամենում էր վազել սարերով և ձորերով և հասնել ընթացքին, բայց իսկոյն փոխեց դիտաւորութիւնը և շարունակեց ճանապարհը դէպի այն տեղը, ուր կոչում էր Նորան սրբազան պարտաւորութիւնը։ Մինչդեռ նա գնում էր դէպի պայմանաւորեալ քարանձաւը, աչքը չհեռացնելով շարժուն շարք ճրագներից, յանկարծ կարծես թէ գետինը

ճեղքուեցաւ և մարդիկ ու կերոնները անհետացան։ Թանձր խաւարը դարձեալ պատեց սարերին։

Խամարէթը սկսեց լաւ նայել, բայց ոչինչ չկարողացաւ նշմարել. նա դիմեց խելքի օգնութեան, բայց ոչինչ չկարդացաւ հասկանալ։ Նա լաւ գիտէր որ իւր և այն տեղի մէջ, ուր նա տեսաւ շարժուն ճրագները, չկար ոչինչ բնական արգելք, որ կարողանար ծածկել նոցա իւր աչքից. և եթէ լինէր անգամ այդպիսի արգելք, ճրագների անհետանալը պէտք է կատարուէր ոչ թէ յանկարծ, այլ կամաց կամաց։ Ընդհակառակն, ճրագները անհետացան յանկարծ, կարծես մի կախարդական կերպով։

Այդ նոր, անմեկնելի և խորհրդաւոր երևոյթը աւելի ևս սաստկացրեց Խամարէթի անորոշ երկիւղը։ Նա կանգնեցաւ մի թփի ետևից և սկսեց ուշադրութեամբ նայել։ Շուտով նա նկատեց որ մարդկանց բազմաթիւ խումբերդուրս էին գալի ձորից և մօտենում ճանապարհին, ուր նա ինքն էր կանգնած, և գնում էր դէպի միևնոյն կողմը։ Բայց այդ բոլոր մարդիկը առաջ էին գնում այնպիսի թեթևութեամբ, այնպիսի խորին լռութեամբ, որ կարծես թէ սահում էին գետնի երեսի վերայ։

Կարելի էր կարծել որ այդ գիշերային ճանապարհորդները պահում էին շնչառութիւնը։ Խամարէթի երևակայութիւնը, արդէն սաստիկ գրգռուած բոլոր նորա հետ պատահած անցքերով, և տրամադրուած սնապաշտութեան, պատրաստ էր համարել այդ անյայտ էակներին իբրև թափառող ոգիներ, գերեզմաններից դուրս եկած։

Բայց Խամարէթը նախապաս համարեց ներկայ դէպքում հաւատ ընծայել աւելի սակաւ խաբող զգացմունքների վկայութեան։ Հետևելով խորհրդաւոր ճանապարհորդների զգուշաւոր քայլուածքի օրինակին, նա, նոյնպէս լռիկ մնչիկ, պճեղների վերայ, մօտեցաւ նոցա և խառնուեցաւ խմբի հետ, ոչոքից չնկատուած։

Մի քանի րոպէից յետոյ նորան թուեցաւ թէ մի կամացուկ փսփսոց, նման գիշերային թեթև զեփիւռին, լսում էր իւրաքանչիւր առաջ գնացող երկու մարդու բերանից։ Դոքա մի տղամարդ և մի կին էին։ Նոցա մի քանի խօսքերը զարմացրին Խամարէթի լարուած ուշադրութիւնը։ Նորան

թուեցաւ թէ լսում էր սիրահարական խօսքեր։ Խօսողների ձայնը հաղիւ էր դիպչում օդին, ինչպէս թիթեռնիկի թռիչքը, բայց փողի ձայնի պէս հնչում էր նա առիւծի սրտի մէջ։ Դորան այնպէս թուեցաւ թէ՝ դա Աննայի և Վիլհելմ դը-Լա Ռոշի ձայնն էր... բնազդմամբ Խամարէթի դողդոջուն ձեռքը բռնեց իսկոյն դաշոյնը։

Սիրտը չխաբեց նորան։ Նորա առաջ գնում էին Աննան և Վիլհելմը։ Միւս մարդիկը Պելոպոնէսի իշխանի հիւրերն էին և ուղեկիցները։

Վիլլարդուինը ինքն էր ղեկավարում որսորդութիւնը, և որովհետև նա շատ լաւ ճանաչում էր այդ տեղերը, ուստի նա առաջնորդում էր Օլէնից դէպի արևելք։ Աննան և Ագնէսը զմայլում էին երկրի գեղեցիկ տեսարաններով. իսկ ասպետները բաւական զուարճացան յաջողակ որսորդութեամբ։

Ամբողջ այդ օրը Մորէի իշխանը չափազանց ուրախ էր, և նորա ուրախութիւնը աննկատելի կերպով շարժում էր բոլոր հիւրերի ուրախութիւնը։ Երբ նորան նկատեցին թէ գիշերը մօտենում է և որսորդները չեն կարող տուն հասնել լուսով, Վիլլարդուինը պատասխանեց ժպտալով.

—Այսպէս ուրախ օրը չէր կարող այդպէս շուտով վերջանալ մեզ համար։ Լսեցէք, կարծեմ շները դուրս են հանել եղնիկ կամ նապաստակ։ Հօ չէ կարելի այդպէս թողնել որսը և չցոյց տալ նորան այն պատիւը, որ պահանջում է մեզանից։

Այդ ասելով, Վիլլարդուինը քշեց իւր ձին։ Ամենքը ծիծաղելով հետևեցին նորա օրինակին։

Բայց, պատահեցաւ այն, ինչ որ հեռատես մարդիկ գուշակում էին—երբ որսորդութիւնը վերջացաւ, արեգակը արդէն մայր էր մտնում, և որսորդները իւրեանց ուղեկից կանանց հետ՝ մնացին լեռնուտ, ամայի և անյայտ տեղերում։

Ամենքը, ժպիտով, դարձան դէպի Վիլլարդուինը, իբր թէ կամենալով ասել.

—Դուք մեզ այստեղ բերիք, դուք էլ պէտք է հանէք մեզ այստեղից։

Իշխանը հասկացաւ այդ լուռ բողոքը։

—Մի՛ անհանգստանաք, ասաց նա ծիծաղելով։ Ես կտանեմ ձեզ ամենակարճ ճանապարհով։ Հետևեցէք ինձ։

Նա կանգնեց ընթացքի գլխին։ Մի քառորդ ժամից յետոյ, անցկացնելով իւր ուղեկիցներին խորը ձորերի միջից, մօտեցրեց նոցա նեղ, անտառախիտ և ամեն կողմից փակած հովտին։ Այդտեղ ներկայացաւ որսորդների առաջ անսպասելի և կատարեալ կախարդական տեսարան։

Ամեն մէկ ծառի ճիւղերից կախ տուած էին, պտուղների պէս գոյնզգոյն լապտերներ. ահագին, ստուերաւոր ծառերի տակ պատրաստած էր շքեղ սեղան, զարդարած ոսկեղէն և արծաթեղէն ամաններով և համադամ կերակուրներով։ Տեսնելով յանկարծ այդ բոլորը, ամենքի բերանից դուրս թռաւ զարմացական գոչում, և ամենքը հրաւիրուեցան նստել այդ անսպասելի ինչոյքին։

Սեղանի մի ծայրում նստեց Վիլլարդուինը իւր աջ ու ձախ նստեցնելով Ագնէսին և Աննային, իսկ միւս ծայրում — Զաքէլը աջ ու ձախ ունելով Ռօբէրին եւ Պետրոլիֆասին։

Խմեցին Ագնէսի եւ Աննայի, Գոդֆրիդի եւ Վիլհելմի կենացները մեծաձայն կեցցէ՛ներով։ Ուրախ եւ փառաւոր ընթրիքը շարունակւում էր երկու ժամ. յետոյ սկսուեցաւ երաժշտութիւն և պար։ Հանդէսը դեռ չէր վերջացել, երբ Մօրէի իշխանը տեսաւ Մատիօ դը-Մօնտին կանգնած հանդիսատեսների շարքում։ Վիլլարդուինը հանդարտ ծանր քայլով մօտեցաւ նորան։

—Ամե՞նքը այնտեղ են, կամացուկ հարցրեց իշխանը, բայց այնպիսի հանգստութեամբ, որ ամենահեռատես մարդն անգամ չէր կարող կարծել թէ խօսքը շատ ծանր գործի մասին է։

—Ամենքը, նոյնպէս հանգիստ պատասխանեց դը-Մօնտը։

—Դուք կարգեցի՞ք այնտեղ մեզ հաւատարիմ պահապաններ։

—Այո՛։

—Ի՞նչ հրահանգներ տուիք նոցա։

—Կարող է մտնել ով կամենում է. բայց դուրս գալ չէ կարող ոչ ոք։

Վիլլարդուինը դարձաւ յետոյ դէպի հասարակութիւնը։

— Պարոններ, ասաց նա, եթէ կարծում էք, որ ժամանակ է տուն վերադառնալու, մենք կարող ենք գնալ։ Բայց ես խորհուրդ չեմ տալի ձեզ ձիով գնալ այս սարերով և ձորերով այսպիսի մթութեան մէջ։ Մենք կազդուրուեցանք, հանգստացանք, ուստի աւելի ապահով կլինի ոտով գնալ, կերոններով լուսաւորուած ճանապարհով, իսկ ձիերը կուղարկենք առաջ սարի միւս կողմը։ Ես կանցկացնեմ ձեզ ինձ յայտնի կարճ և լաւ ճանապարհով։

Առաջարկութիւնը ընդունուեցաւ ուրախութեամբ։ Մանգալ ոտով, կէս գիշերին, ամայի սարերի մէջ, հազարաւոր կերոնների լուսով, ամենքը համարեցին իբրև մի նոր զբօսանք, որով արժան էր վերջացնել այնպիսի ուրախ օրը։ Վիլլարդուինը դաս դաս բաժանեց որսորդներին և բազմաթիւ ուղեցոյցներին մի մի կերոն ձեռքին. ընթացքը շարժուեցաւ գնալով օձապտոյտ կածանով պատած ժայռերով։

Երբ իջան սարի գլխից և հասան այն տեղին, ուր ճանապարհը գնաց հովիտով, իշխանը պայմանաւորեալ նշանը տուեց ուղեցոյցներին։ Մի վայրկեանում բոլոր կերոնները հանդան։ Վիլլարդուինը առաջարկեց հասարակութեան քայլ առ քայլ հետևել ուղեցոյցներին և պահպանել ամենախորին լռութիւն մինչև որ ինքը թոյլ կտայ խօսել և կբացատրէ այդպիսի կարգադրութեան պատճառը։

Ամենքը հնազանդուեցան, թէպէտ և զարմանում էին և չէին կարող պարզել այդպիսի կարգադրութեան խորհուրդը։ Ահա այդ իսկ ժամանակ, երբ բոլոր հասարակութիւնը, ինչպէս գիշերային ոգիներ, գնում էր զգուշութեամբ դէպի Գայլի քարանձաւը, Խամարէթը պատահեցաւ նոցա և աննկատելի կերպով խառնուեցաւ նոցա հետ։

Գայլի քարանձաւում մի քանի ժամ առաջ հաւաքուել էին արդէն ապստամբութեան բոլոր պարագլուխները, որոնք գործում էին Խամարէթի հետ միասին և նորա առաջնորդութեամբ։ Նոցանից շատերն արդէն վաղուց թագնուում էին Անդրավիդի շրջականներում, գիւղերում, խըրճիթներում, որպէս զի աւելի մօտ լինին ժողովատեղից և պատրաստ լինին գործելու։ Տեսնելով առաջին գիշերը վառուած խարոյկները, ապստամբները մօտեցան, որքան կարելի էր ժողովատեղին։ Հետևեալ գիշերը պայմանաւորեալ

նշանը կրկնուեցաւ։ Վերջապէս, երբ խարոյկները բորբոքուեցան երրորդ անգամ, ամենքը վազեցին Գայլի քարանձաւը։

Շատերը հաւաքուել էին կէս գիշերից առաջ։ Ոմանք նստեցան քարի նստարանների վերայ, որ բոլորում էր մէջ տեղում վառած խարոյկի չորս կողմը, ինչպէս որ մենք տեսանք նոցա իւրեանց առաջին ժողովի ժամանակ։

Վերջին մտնողը նայեց բոլոր հաւաքուածների վերայ։

—Փառք Հօր, գոչեց նա։

Դա Աուստարոսն էր, արդէն ծանօթ մեզ, որ յայտնի էր հայրենակիցներին իւր այդ սիրելի բացագանչութեամբ, որպէս և իւր զարմանալի քաջութեամբ։

—Փառք Հօր, երևի ծառը հաստացել է և կանչում են ծառ կտրողներին։ Առիւծները դուրս կգան իւրեանց որջերից, վայ յափշտակող գայլերին։ Ժամը հասել է, Փառք Հօր։ Փոխանակ անարգանքի և ամօթի բաժակի, մենք կճաշակենք վրէժխնդրութեան բաժակից. սա արդէն լի է—մենք կխմենք կաթիլ կաթիլ։ Բայց ի՞նչ է նշանակում այս։ Ո՞ւր է մեր առաջնորդը, մեզ ժողովողը։ Ի՞նչպէս չէ եկել նա մինչև այժմ, նա սովորաբար միշտ առաջինն էր գալիս։ Փառք Հօր, մենք այստեղ շատուոր ենք, մենք ամենքս պատրաստ ենք, ամենքս վճռել ենք դիմել ամեն բանին։ Բայց մեր մէջ չէ երևում, ով մեզ ոտի կանգնացրեց. մենք բոլորը չենք այստեղ։ Ո՞ւր է մեր առաջնորդը։

—Եթէ դուք կկամենաք ընդունել ինձ, պարոններ, ես պատրաստ եմ դառնալ ձերնախագահ և առաջնորդը, որոտաց մի սոսկալի ձայն քարանձաւի մուտքի մօտ և նոյն վայրկեանում, Մեդուսայի գլխի պէս, ներս մտաւ Վիլլարդուինը իւր բոլոր ուղեկիցներով։

—Ընդդիմութիւնը անօգուտ է, աւելացրեց Վիլլարդուինը, դառնալով դէպի Աուստարոսը և մի քանի այլ պարագլուխները, որոնք կամենում էին պաշտպանուիլ. զգոյշ կացէք։

Իշխանը հանեց իւր գօտու միջից մի սուլիչ և սուլեց։ Մի վայրկեանում քարանձաւի դռնից և բոլոր խոռոչներից դուրս վազեցին զինուորներ և շրջապատեցին ապստամբներին։

—Մի զարմանաք, պարոններ, շարունակեց իշխանը,

ձեր քարանձաւը շրջապատած էր դեռ առաւօտից և արդէն երկու ժամ է, որ ձեր պահապանները մեր ձեռքին են։ այժմ թոյլ տուէք, որ կաարեմ նախագահի պաշտօնը։

Եւ հանելով գրպանից մի թերթ թուղթ, Վիլլարդուինը պարզ և բարձր ձայնով սկսեց կարդալ։ Ամենքը կանգնած էին ապշած։

Ամեն մէկ կարդացած անունից յետոյ իշխանը նայում էր ապստամբի զէնքի վերայ և ինքն ամեն անգամ ասում էր — այստե՛ղ է։ Վերջացնելով ստուգութիւնը, նա ասաց.

— Դուք, ճշմարիտ, շատ ճիշտ էք կատարել ձեր պարտքը, ամենքդ ներկայ էք։

— Սո՛ւտ է, գոչեց Խամարէթը, բաժանուելով Վիլլարդուինի ուղեկիցների խմբից. պակաս է այստեղ նա, որ ոտի կանգնացրեց, յորդորեց և ժողովեց ուրիշներին։ Դոցա մէջ չկայ միակ պատճառը, նախագահը, ապստամբութեան պարագլուխը. նա միայն արժանի է ձեր բոլոր բարկութեան և ձեր բոլոր պատիժներին։ Այդ պարագլուխը — ե՛ս եմ...

— Պարծենում էք, Առիւծ, ասաց իշխանը։ Ես ձեզ չեմ ընդունում, ձեր անունը չկայ ցուցակի մէջ։

Եւ Վիլլարդուինը ցոյց տուեց ցուցակը։

— Ա՛խ, այս ցո՛ւցակը, գոչեց Խամարէթը, սպառնութեամբ նայելով Պետրալիֆասի վերայ։ Դուք գնել էք այդ ցուցակը *Արեստուն դահեկանի*, ձերդ բարձրութիւն։ Եղբայրասպան Կայէնը, աստուածասպան Յուդան կգտնեն գուցէ ներում Աստուծոյ անսահման գթութիւնից։ Բայց նորան, ով ծախել է ձեզ այդ ցուցակը, չկա՛յ ներում... Նայեցէ՛ք, այդ թերթը փոքր ինչ պատռած է վերի կողմից։ Ես չգիտեմ ո՞վ է ունեցել առիս այդպիսի վիրաւորիչ կարեկցութիւն. բայց այդտեղ, ամենի գլխին կանգնած էր իմ անունը։ Հարցրէք այս բոլոր ընկերներիս, սոքա կհաստատեն իմ խօսքերս։

— Հաւատում եմ ձեր խօսքին, Առիւծ, պատասխանեց Վիլլարդուինը. և եթէ ցանկանում էք, ես կընդունեմ ձեզ ձեր ընկերների շարքում։

Յետոյ դառնալով դէպի միւս ապստամբները, իշխանը շարունակեց.

— Դուք, մինչև այժմ լսում էիք ինձ իբրև ձեր նա-

խագահին. այժմ, պարոններ, լսեցէք ինձ իբրև ձեր դատաւորին։ Դուք պատրաստել էք ապստամբութիւն, դուք կամենում էք ոտի կանգնեցնել ձեր իշխանի դէմ. դուք կարողացել էք ապստամբացնել բոլոր երկիրը։ Ուրեմն, դուք յանցաւոր էք իբրև պետութեան դաւաճաններ և արժանի էք մահու պատժին։ Ես կարգած եմ ձեր իշխան. ես պարտաւոր եմ կառավարել հաստատ և խելացի կերպով այն ժողովուրդը որ դուք կամենում էիք մոլորեցնել։ Բայց ամեն մի պետական կառավարութիւն հզօր է ժողովրդական սիրով, իսկ սերը պահպանւում է ողորմածութեամբ։ Ուստի... ես ձեզ ներում եմ։ Աշխատեցէք երկարատև հաւատարմութեամբ քաւել այս դաւաճանութեան ժամը։

—Կեցցէ՛ Մօրէի իշխանը, գոչեց ապստամբներից մեծ մասը, թափելով զէնքը։

—Փա՛ռք Հօր, ասաց Վուտսարոսը, խոնարհելով գլուխը։ Թո՛ղ լինի Նորա սուրբ կամքը։ Վաղը ես կմտնեմ վանքը ապաշխարելու։

—Ձերդ բարձրութիւն, գոչեց Խամարէթը. եթէ դուք հրամայէիք ձեր զինուորներին կոտորել մեզ, ես ուրախութեամբ կդնէի գլուխս նոցա կացնի տակ։ Ազատ մարդոց արիւնը, թափած հայրենի երկրի վերայ, ոռոգում է այդ երկիրը, և արիւն թափողների յիշատակը չէ մեռնում։ Նահատակների արիւնը ջրում է և աճեցնում ազատութեան ծառը։ Բայց այն շղթաները, որով դուք կաշկանդում էք մեր ազգը, մեծահոգութեան և երախտագիտութեան շղթաները — անխորտակելի են, նոքա պողպատից աւելի պինդ են և ադամանդից աւելի կարծր։ Թո՛ղ նա, ով կամենում է խոնարհուի Ցունաստանի անարգութեան առաջև, յուսայ տակաւին բախտին կեանքի մէջ, թո՛ղ նա խոնարհեցնէ իւր ճակատը ձեր անյաղթելի Գայիսոնի առաջև։ Իսկ ես, որ տեսնում եմ թէ ինչպէս դաւաճանութիւնը սողում է մըտերմութեան դիմակի տակ, ես, որ տեսնում եմ Ցունասատանը, ազատութեան այդ սրբազան հայրենիքը, ոտնակոխ արած ցեխի մէջ, և արհամարհած ինչպէս մի ստրուկ, — ես այլ ևս չեմ կարող տանել այդ բանը։ Ես անկարող եմ ձեզ վերայ իսկ փշրել ձեր ոսկի լուծը, բայց ահա՛ թէ ինչպէս եմ կոտրում նորան իմ անձիս վերայ։

Խամարէթը դուրս հանեց շտապով իւր դաշոյնը և կոյծակի արագութեամբ ցցեց իւր կրծքի մէջ։

— Փառք Հօր։ Թանկագին եղբայր, այդ ի՞նչ արիր, ասաց Վուտսարոսը, իւր գրկում բռնելով Խամարէթին։

— Առիւծ, Առիւծ, ի՞նչու արիք դուք այդ բանը, ասաց Վիլլարդուինը անկեղծ ցաւակցութեամբ բռնելով իսկոյն թշուառ Խամարէթի ձեռքը։

Իշխանը անկեղծութեամբ սիրում էր և յարգում էր Առիւծին նորա ազնիւ բնաւորութեան համար։

Ամենքը կանգնած էին անշարժ, զարմացած, վշտացած այդ անցքից։ Աննան, ինքն իւրեան չհանկանալով, ծունկ ընկաւ Խամարէթի առաջ և արտասուքով թացում էր նորա երեսը։

Առիւծը բացեց աչքերը և լուռ նայեց Աննայի վերայ։ Յետոյ ժպտաց և ասաց։

— Աննա՛, շնորհակա՛լ եմ ձեզանից... Երբ ես կենդանի էի, Աստծու պէս պաշտում էի ձեզ, իբրև երկնային բընակիչ... Դուք չէիք էլ ենթադրում... երբէք, ոչ մի հայեացքով անգամ դուք... չխրախուսեցիք ինձ... Այժմ ես մեռնում եմ, և դուք այդ պարգևեցիք ինձ գոնեա մի վայրկեան երջանկութեան... Ասացէք ձեր պապին որ ես... ներում եմ նորան... և եթէ կարելի է... աղօթում եմ... որ Աստուած և հայրենիքը նոյնպէս ներե՛ն նորան... Ցաճախ երազիս մէջ, ձեր կերպարանքով երևում էր ինձ ազատութիւնը։ Ձեր արտասուքը — ծիածան է... որի վրայով իմ ազատ հոգին... թռչում է... երկնային... օթևանը...

Խամարէթի շրթունքները հպուեցան Աննայի ձեռքին. և... Առիւծը այլ ևս չկար...

— Ձերդ ազարձրութիւն, ասաց Վուտսարոսը Վիլլարդուինին, — Փառք Հօր, վերջին Սպարտացին ընկաւ։ Այժմ միայն դուք յիրաւի Մորէի իշխան էք։

ՎԵՐՋ

Ջուղայեցւոց գլոց լեղուն 275
Վարդան ժամահար 276
Գովասանք Գուրջստանայ 280
Աղքատաց կերակրոյն համար 282

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Վեհ. Հայրապետը Թիֆլիսում 287
Քահանայից ապահովութեան գանձարան 288
Մի նոր բարեգործութիւն 291
Մատենագրական նորութիւններ 291
Պետալօցցու տունը Բերլինում Ա. Ս. 292
Հայ մատենադարաններ 297
Երկու համախօսական 298
Սիրոյ միջնորդները Ց. Պարոնեան 299
Ստացուած գրքեր 320
Խմբագրութեան ծանուցումներ 321

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Մօրէի իշխան. վերջ. թարգմ. Վ. Ծ. Վ. Բաստամեան 111—222

ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

1896 թ. յունուարի 1-ից հրատարակւում է Թիֆլիսում տարեկան երկու գիրք, բաղկացած մօտ 1000 երեսից և հետևեալ բաժիններով.—վիպական, տեսագրական, ազգագրական, մանկավարժական, առողջապահական, կենսագրական, պատմական, ժողովրդական, մատենախօսութիւն, այլևայլք և յաւելուած։

Առաջին գիրքը լոյս է տեսնում յունուար 1-ին, երկրորդը՝ յուլիսի 1-ին։

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է 3 ՌՈՒԲԼԻ
ԻՐԱՔԱՆՉԻՒՐ ԳԻՐՔՆ ԱՌԱՆՁԻՆ 2 ՌՈՒԲԼԻ

Մինչև այժմ տպագրուել է 6 գիրք, որոնք լոյս են տեսել միշտ խոստացած ժամանակներին և երբեմն էլ ամսաշափ առաջ։

Բանալով «ԼՈՒՄԱՅ»-ի 1899 թուի բաժանորդագրութիւնը՝ խմբագրութիւնը յայտնում է ի գիտութիւն ընթերցող հասարակութեան, որ առաջիկայ տարին ևս նոյն ճշտութեամբ պիտի հրատարակուի, ինչպէս և անցեալ տարիները, նոյն ծաւալով և նոյն աշխատակիցների օգնութեամբ։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „ЛУМА“ կամ որոշ՝ Гюту Аганьяницъ.